

«DROSCHAK»  
REVUE MENSUELLE  
organe  
de la F. R. A. D.

# ԴՐՕՇԱԿ

№ 1—2  
JANV. — FEVR.  
1929  
PARIS (France)

«ՀՈՅ ՅԵՂԱՓՈԽԵԱՆ ԴԵՂՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## ՌՈՍՏՈՄ ԵՒ ԱՐԱՄ

(Գանի մը գիծեր)

Տարբեր սերունդի և տարբեր տարիքի մարդիկ, բայց մեր այս երկու թանկագին ընկերները ո՛րքան կը նմանէին իրարու շատ մը տեսակէտներով:

Ամենէն առաջ՝ իբրև սերմանացան: Ուսուցիչ՝ երկուքն ալ, իրենց տքնութիւնը խոր հետքեր կը ձգէր նոյնիսկ այս տարրական եւ խաղաղ ասպարէզին մէջ: Կը յիշենք Ռոստոմը, երբ թւարանութեան դաս կուտար 8—10 տարեկան մանուկներու, ի հարկին ամբողջ դասածամբ յատկացնելով միայն մէկ դանդաղամիտ աշակերտի դասը սորվեցնելու: Եւ այս տաղտկալի ճիգը՝ ամենէն հասուն տարիքին մէջ. թէ եւ ծանրաբեռնած՝ իր բուն պաշտօնին մտահոգութիւններով, բայց առանց տըրտնջալու, միշտ բարի ժպիտ մը դէմքին: Տեսնելու էր, դարձեալ, թէ ի՛նչ ոգևորութեամբ հարիւրաւոր աշակերտներ կառաջնորդէր զէպի դաշտերն ու սարիքը, իրագիտական դասեր տալով ճամբան հանդիպած քարի կտորի մը, բոյսի մը, ծաղիկի մը, ծառի մը կամ ճճիի մը մասին: Եւ այս ոչ ճիւղի քաղաքին մէջ, այլ ամէն ուր որ կերթար, Կարիճէն մինչեւ Մուշ և Սասուն, իր հետ առած՝ 10—15 պարոջականներ, խումբ մը շրջիկներ ալ ետեւէն:



ՌՈՍՏՈՄԸ ՄՕՐ ԵՒ ԲՐՈՋ ԼՅՏ

ափը, իբրև դպրոցի տեսուչ, յետոյ նորէն Վասպուրական, իբրև գործիչ և ուսուցիչ: Դժւար է ըսել. ուսուցիչն էր, որ կը լրացնէր յեղափոխականը, թէ յեղափոխականն էր, որ սովորական դաստիարակ-վարժապետի միօրինակութենէն կը բարձրացնէր. զինքը կախարդական ուժի մը: Աշակերտը, ինչպէս ամբօքը, ոչ թէ դաս կառնէր, այլ կը խմորէ՛ր, էր նախածքին տակ, կը թըրծէր ինքնարերբար, հասարակ ընթերցարանը կ'դառնար կենդանի աշխարհ մը, ուր պճլտուն աչքեր հաճութեամբ կը գտնէին ինչ որ կօզկէր սորվեցնել ուսուցիչը:

\*\*\*

Այս նոյն թաթաւուն, անդալի այլ տիրական և յարատեւ գիծը՝ նաեւ կուսակցական կեանքի մէջ, քաղաքական — յեղափոխական գործունէութեան ընթացքին:

Ճիշտ է, որ խառնածրի տարբերութիւնը կը շեշտէր այստեղ: Ռոստոմը՝ միշտ լռակեաց և սուերի մէջ. կը խուսափէր ալմու-

կէն և ամբոխէն, բայց կերևար ամէն տեղ: Աւելի շատ՝ պարզ խմբական ժողովներու քան միջինիներու: Եթէ ստիպէր բեմ ելլել, համեստօրէն կը նստէր աթոռին վրա, «գրոյց անելու», ոչ թէ ճառ խօսելու համար: Իսկ իր գրոյցները... Ափսո՛ս որ ոչ իսկ պատճէն մը կայ թուղթի վրա: Ինքն իսկ արդիւյթ է գրի առնել:

62.

Արամը, աւելի տաքարեւն, նոյնքան սիրելով հանգերձ մըջիւնի աշխատանքը, վախ չունէր ամբոխէն, և ոմբածիւք բառեր կը հոսէին իր բերնէն, բեմի վրա: Հոետոր չէր, բայց պողպատի ձայն կուզար իր խօսքերէն: Կը պոսթիւար անճիւղ և անարևատ, բայց կը զգայիր որ միտքն ու կամքը զուլընթաց կերթան:

Ինչպէս տարբերութիւնը, միացման դիժն ալ այտակը կը շեշտուէր: Բեմէն, հրապարակէն, աղմուկէն յետոյ, երկուքն ալ, Ռոստոմը և Արամը, կարծես միևնոյն մարմնին երկու թևերն էին, որ առանց նեղութիւն պատճառներու կը զբաժէին, գործի կը կապէին բոլոր պիտանի տարբերը: Կը թւէ թէ — արդեօք իրենց դիտութեան բերումով — երկուքին համար ալ գաղտնիք չունէր մարդիկը տարբարութիւնը: Մէկ տղայ, մէկ աղջիկ, գիւղացի, մտաւորական, խումբ մը երիտասարդներ, — փոյթ չէ, կը բաւէ որ հանդիպեցան մէկուէն կամ միւսին սուր հայեացքին, իրենց այս կամ այն դիժով, այլ ևս ազատում չկար: Միայն մէկ լաւ յատկանիւ բաւական էր, որ եկուքն ալ մոռնային թեկնածուին գէշ կողմերը ու ճգնէին գործի մղելու զայն, այդ մէկ բարեմասնութեամբ սրբազրեւու համար թերիները:

Այսպէ՛ս է որ, և՛ Ռոստոմին և՛ Արամին հետ կապած անուններ, ամենէն համեստէն մինչեւ ամենէն փայլունը, դարձած են հաւատարիմ և գործօն գինւորեալներ Չ. Յ. Դաշնակցութեան: Սովորական իմաստով աշակերտներ չեն եղած անոնք, այլ մասնիկները կամ ժառանգորդները վարպետներուն զանազան յատկութեանց:

\*\*\*

Ամէհի լեռան մը կողքին թառած կազմի մըն էր Ռոստոմը: Աւելի ճիւղձ՝ ժայռի ստորոտէն իրան վճիռ առու մը, որ կը հոսի ու կը ժայռի, որ հետքեր կը ձգէ ու կը խուստիւրի, մերթ ծածկաւ՝ թուփերու տակ, մերթ խառնաւ՝ մեծ ջուրերուն: Ե՛ւ ներկայ և՛ բացակայ, և՛ այտակը և՛ այնտակը: Իրեն համար չկար գործին մեծն ու պղտիկը, խոնարհն ու շքեղը: Եւ իրեն համար չէին մեծ ուստաններն ու քաղաքները: Տարին մէկ անգամ Պոլիս կուզար Կարինէն, օրերը համբերով: Երեք օր կամ մէկ շաբաթ՝ կուսակցական զործերու համար:

Յետոյ երեք օր ալ ժընձ՝ կինը տեսնելու: Եւ շողեպինդ վերադարձ՝ դէպի Կարին: Այն ատիճան արագ, որ կը մերթէր ճամբորդի կառք առնել Տրապիզոնէն ու կը նստէր թղթատարական սայլը, որպէսզի, փոխանակ վեցի, երեք օրէն հասնի Կարին, անշուշտ, գիշեր ցորեկ քշելով սայլը, սուրհանդակին հետ քով քովի: Յաճախ կը պատահէր, որ ընկերները թեյադրէին Պոլիս մնալ, իբրև Բիւրոյի անդամ, քանի որ այնտեղ էր կուսակցութեան վարիչ կեդրոնը: Շատ կարճ էր Ռոստոմի պատասխանը.

— Եթէ դժգոհ էք էրզրում կենալէս, պատուատ եմ Խարբերդ անցնելու:

Եւ մինչև Մեծ Պատերազմը մնաց Կարին, թէ իբրև Բիւրոյի անդամ, և թէ իբրև ազգային դպրոցներու տեսուչ, — յիշելով միայն իր դիւատը պաշտօնները:

Չափազանց բարեհամբուր՝ ընկերական կեանքի մէջ, փիլիսոփայի պէս ներողամիտ՝ ոչ-դաշնակցականներու հանդէպ, առիւծի պէս կը մոնչէր Ռոստոմը, ապացուցած յանցանքի մը առին: Միւս-մինակը, մէկ նալածքով և երկու բառով, զինաթափ կընէր ամենէն անպայ զեղծարարը, կը խոստովանցէր ամենէն քարացած խաբեբան: Իր կեցածքն իսկ ահ ու դողի կը մատնէր յանցաւորը, կամ խումբ մը յանցաւորներ միասին, դէմ դիմաց: Թերեւս՝ մեր անդրանիկ ընկերներէն ոչ մէկուն առջև այնքան սարսուռ զգացած են մեր շատ մը ընկերները, որքան Ռոստոմի բարոյական սաստիկ տակ: Լեռ ըլլար, կը փլէր անոր երևութապէս խաղաղ, ժպտուն, այլ հատու ակնարկէն:

Այլուպէս եզակի տիպար մըն էր Արամը: Վարժ՝ բուն ձեւերու, յաճախ ձեռքը մաւղէրին, ան կրանիտ կը դառնար վտանգի պահուն, ու վճիռներ կարճակէր կատարեալ ինքնավստահութեամբ: Գրեթէ անխալ էր, բողբէի պահանջը ըմբռնելու տեսակէտէն: Ամբոխը շատնց մտացած էր նախասահմանադրական շրջանի դաւադիր Արամը, և իր առջի կը տեսնէր հանրային գործիչը, մշակութային աշխատանքի ներած ուսուցիչը:

Եկա՛ւ 1915 Ապրիլը, հայաջինջ սարսափներու բոլոր նախանշաններով: Իշխանը սպանւած՝ դաւադրաբար, Վառձեանը ձերբակալւած՝ նոյն խաղախութեամբ:

Եւ Արամը կուտայ Վանի ապստամբութեան մարտակիչը, առանց մէկ վայրկեան

տատանելու: Ուսուցիչը կանհետանայ յանդուգն յեղափոխականին առջեւ:

Նոյն վճռական թափը 1918 Մայիսին: Վասպուրականը նահանջի հարկադրւած. այնքան դերմարդկային ճիգերով շահած նւաճումները՝ վտանգի տակ, Երևանը՝ չղթալակապ և հեղձամահ. հարիւր հնգարւուր փախտասականներ գալարուն՝ կեանքի և մահւան ալիքներուն մէջ. ո՛չ բարեկամ ոյժ, ո՛չ ապաւէն: Թշնամին սրընթաց կը քրքշայ, դանակը շողացնելով...

— Կոթիւ, կը գոռայ Արամը: Ու իր մոգական խօսքին տակ, սմբողջ ժողովուրդը մը մէկ մարդու պէս սուքի կանգնած, կը խոյանայ դէպի Սարդարապատ և Ղարաբլիսէ, զարնելու և զարնելու համար: Թերեւս ինքն ալ կը կասկածէր յաղթական ելքէն. բայց պատանք չէր այլ ևս. ինչպիսի փաշաները խաղաղութեան դափնիներով կը դիմաորէին արժանաւոր հակառակորդը:

Դաշնակցութիւնը չի սիրեր աստուածացնել անհատները, ինչքան ալ բարձր արժանիք ունենան: Դաշնակցութեան համար անհատը՝ խտացումն է հաւաքական առաքինութեանց: Կենդանի, տեսանելի և շօշափելի արտայայտիչը՝ հաւաքական կամքին: Բայց ժողովուրդը, որ ունի իր առանձին աշխարհահայեացքը, այնքան տարերային ու հարազատ, 1918 Մայիս 28-էն յետոյ, Արամը հռչակեց իբրև հիմնադիրը հայկական անկախութեան: Եւ, անշուշտ, սխալ չէր այս եզրակացութիւնը, մեր ժամանակակից պատմութեան ամենէն ճակատագրական օրերուն համար:

\*\*\*

Անխոցելի՝ բոլոր կոիւներուն և վտանգներուն մէջ, մեզմէ բաժնեկցան երկուքն ալ. ամենէն անյուսալի պատահարով, — համաճարակ հիւանդութեամբ: Ու զացին այնպիսի ատեն մը, երբ այնքան կարօտ էինք երկուքին

ալ, ինչպէս նման տիպարներու: Մեր ճակատագրական դժբախտութիւններէն մէկն ալ՝ այս: Իրարու ետեւէ, խումբ-խումբ կամ հաստահատ, հայլինջ սարսափներու ընթացքին կամ տիմար դիպուածներու հետեւանքով, կորսընցուցինք սմբողջ փաղանգ մը, որ չարաչար տընեցաւ յաղթանակը փութացնելու համար, բայց չհասաւ յաղթանակի օրւան: Կամ տեսաւ զայն քօտային վիճակի մէջ, տակաւին չձեւաւորւած: Ասբող սերունդ մը, որ կոչւած էր բախտորոշ դեր կատարելու: Մնացինք որբեւայրի, և՛ իբրև ժողովուրդ, և՛ իբրև կուսակցութիւն:

Այդ կսկիծը շատ աւելի խոր է այսօր և աւելի ուժգնօրէն կը խոցողէ մեր սիրտը օրւան այս ժամուն, երբ այնքան մոռայլ է հորիզոնը, և այնքան միօրինակ՝ հայկական իրականութիւնը:

Բայց, մենք մեծագոյն անարգանքը ըրած պիտի ըլլանք Ռոստոմներու և Արամներու յիշատակին, եթէ, նկուէ եղերամայրերու պէս, տարինք հառաչանքներով, — «մեռանք կորանք» — փոխանակ տասն անգամ տասնով բազմապատկելու մեր կորովը:

Անխոխարինելի են Ռոստոմն ու Արամը, ինչպէս այնքան ուրիշներ, որ անդարձ գացին. բայց Չ. Յ. Դաշնակցութիւնը միշտ ալ ընդունակ է Ռոստոմներ և Արամներ յարուցանելու, ո՛րև է ճակատագրական ժամու, կը բաւէ, որ անթարթ աչքերով և սրբազան հաւատքով նաբի անոնց թողած յեղափոխական հանգանակին. տիրաբար, խորապէս ըմբռնէ անոնց կորովին իմաստը, և անդաւաճան յարատեւութեամբ քալէ անոնց ճամբէն: Յեղափոխական միտքը չի հանդուրժեր քարացած կաղապարներու: Եւ Ռոստոմներն ու Արամները կը նսեմանան ա՛յն օրը, կամ Չ. Յ. Դաշնակցութեան դիմագիծը կաղճատուի ա՛յն ժամուն, երբ յաջող սերունդը մոռնայ ոգին, սառը միայն հոլովելով, կամ իրական ճիգը չփոթէ սնամէջ «քլիշէ»-ներու հետ:

# ԴԻՊԼՈՄԱՏ ՀՐԷՅՆԵՐ<sup>\*)</sup>

Գրեց՝ Ռոստոմ

Հասարակական կեանքի մէջ պատահում են այնպիսի ահուկի շարքեր, որ չմեղեցում են ամենամեծ յոռե-տեսին անգամ: Յոռետեսը, որը միշտ ամենալատ դոյներով է ներկայացնում ապազան իւր երեակա-յութեան մէջ դարձեալ ունենում է մի սահման, որից չի կարող անցնել, նրա կարծիքով, այս կամ այն հասարակական շարքի աստիճանը: Բայց, դժբախտա-բար, մենք տեսնում ենք, որ մեր ներկայ կեանքի մէջ յոռետեսի երեակալած սահմանն էլ ոչնչանում է, և շարքը տարածում է իր թևերը անելի հեռու ու հեռու...

Ամէն անգամ, երբ առիթ ենք ունեցել խօսելու ևւրոպական դիպլոմատիայի մասին, որը պաշտօնապէս իր «նովանորութեան» տակ է առել արևելքի քրիս-տոնեաներին, մենք հեռու որևէ յոռետեսութիւնից, յիւսած միմիայն պարզ իրականութեան վրա, պնդել ենք միշտ, որ ո'չ մի դիպլոմատի համար դոյութիւն չունեն ո'չ քրիստոնէական, ո'չ մարդասիրական, ո'չ քաղաքակիրթական և ոչ այլ նոյնանման նպատակներ: Մենք ընդունում էինք, որ դիպլոմատիան կարող է և ոչ թէ միայն շօշուկ մեղ, անտարբեր մնալ, այլ մինչև իսկ մնասել մեզ, աշխատել կանգնեցնել ծնունդ տուած արժուժը, եթէ այդ իր շահերին վնասակար նկատուի: Բայց մենք — և մեզ հետ նոյնիսկ ամենամեծ յոռե-տեսները — դժար կարող էինք երևակայել, որ քաղաքակիրթ աշխարհի «քաղաքակիրթ» ներկայացուցիչները հասնէին անխնայութեան, ամբողջութեան ու լրբութեան այն ծայրայեղ աստիճանին, որի վրա նրանք կանգնած են այժմ, և ոչ թէ միայն մեր, այլև ամբողջ արևելեան հարցի վերաբերմամբ:

Եւրոպական դիպլոմատաները «զթուփեան քոյրերի» նման շրջապատել են «հրանդ մարդուն» և ամենասու-նելի միջոցներ գործ գնելով՝ աշխատում են պահպանել նրա նեխած կեանքը: L'homme malade (հիւանդ մարդը) դառել է enfant gâté (երես առած երեխայ), որին պահում, պահպանում, չղուծ, փաշ-փայտում են ամէն կողմից: Հրգատար դիպլոմատները ամենայն առողութեամբ մեցում են իրար հետ այդ ասպարիզում: Մէկն իր արջի թաթի զօրութեամբ միջոց է ապիւ նրան կոտորել, ջարդել տասնեակ հա-պարտոր հայեր՝ երկրի «խաղաղութիւնը» վերա-կանգնելու համար: Միւրը իր հաստ զրպանն է բաց անում և առաջարկում իր սակիները տնտեսական բացարձակ քայքայումից ազատելու համար. երրորդի նախաձեռնութեամբ ընդհանուր ճնշում են գործ դնում

ու սպառնալիքներ կարողում ապստամբ կրէտացիներին: Ճնշում են Յունաստանին, որ անուղղակի կերպով օգնում է իր արևմտիկ եղբայրներին. ճնշում են Բուլղարիային, որ չի խանգարում մակեդոնական շարժմանը... Բայց ո'չ մի տեղ, ո'չ մի պարագայում եւրոպական դիպլոմատը չարտայայտեց իր էութիւնը այնքան ստոր, զգեալի և կոպիտ կերպով, ո'չ մի տեղ նա ցոյց տուեց իր բարոյական այնպիսի էութիւնը այն-քան շօշուկի փաստերով, որքան Վանի և ընդհան-րապէս Վասպուրականի վերջին աղէտալից դէպքերի ժամանակ: Այդ դէպքերն այնքան սրտաճմլիկ էին, որ ամենաչոր, ամենաքարասիրտ դիպլոմատն անգամ պէտք է յիշէր, որ ինքը ո'չ միայն դիպլոմատ է, այլ և մարդ: Բայց այդ չէղաւ: Պետերսի և Աթիլկայի այլ հերոսների արժանաւոր ընկերակիցը՝ Վանի անվլիս-կան հիւպատոսը, որը շատ առաջ էր ստացել վանեցի-ներից «ստիկան-հիւպատոս» տիտղոսը և քրիստո-նէութեան սկզբունքը տարածող բողոքական միսիոնար Ռէյնոլդը հաւատարապէս զգեալի են մեզ թէ՛ իրենց բացարձակ լրբութիւններով և թէ՛ իրենց դադուի խարդաւաններով:

Մուռը գործելով Տաճկահայաստան, չփակելով յա-ճախակի վայրէջ կառավարութեան հետ, դրանք կարծես մոռանում են իրենց ծագումը, մոռանում են այն միջավայրը, ուր ծնւել և սնւել են, մոռանում են այն դարը, որի մէջ ապրում են: Առանց խցճահարու-թեան, առանց ամօթի, բացարձակ կերպով պաշտպան-կանդիսանալով սուլթանի կառավարութեան՝ դրանք ամենանեղ ճանապարհներով ստիպում են յեղափո-խական դեղերին՝ հեռանալ քաղաքից. դրանք մատնում են այդպիսով անզէն ժողովուրդին վրէժխնդիր գինուր-ների ու վայրագ խուժանի կատաղութեան, իսկ յեղա-փոխական դեղերին՝ Պարսկաստանի ճանապարհել վրա պատրաստած գինուրների և համիդէականների անհա-մար բազմութեան:

Կոտորածի այդ սարսափից յետոյ նրանք դեռ համարձակում են բարդել բոլոր յանցանքը հայերի վրա, մեղմացնել կառավարութեան և բաշխողուկների վճռակների գործած զազանութիւնները, ուրանալ քաղաքի ուժակոծութիւնը, քաղաքի և շրջակաների աւերելը, թալանելը, հապարտոր գոհերի թիւը... Եւ այս դեռ բաւական չէ. նրանք յանդգնում են հանրա-դրութիւնների պատրաստել հայերի կողմից, ստիպում են ստորագրել և՛ արեւելած ժողովուրդին, իբր թէ նա ինքն է մեղաւոր, որ իրեն կոտորել են, թէ նա շնոր-հակալ է կառավարութիւնից, որ կոտորածը չի շարունակում... Սա արդէն յափից դուրս է. այս դէպ-քում մարդ չ'զարգանում է հաւատալ թէ դրանք մարդկային արարածներ են և ոչ թէ հրէշներ մարդկա-

\*) Գրւած է վասպուրականի կոտորածի առթիւ և հրատարակւած «Իրօջակ»-ում իբրև առաջնորդող յօդ-ւած, առանց ստորագրութեան: ԽՄՔ.

յին կերպարանքով...

Վասպուրականի կոտորածի ահռելիութիւնը ան-
յայտ մնաց շատ շատերից. դիպլոմատները կարող են
դրանով պարծենալ: Բայց ու՞րքա՞նք ենք տները, արիւ-
նաների փողոցները, անթաղ դիակները, մոխիր դար-
ձած զիւղերը դեռ մնալուն վիպերն են սուլթանի
զազանութիւնների և դիպլոմատի լիտիութեան: Անօթի,
մերկ, բորիկ մնացած բազմաթիւ կենդանի
դիակների խուլ շնչերն են, առանդամների, բռնա-
բարւածների ապարդիւն ճիշերը, հազարաւոր անմիղ
դուշերի բարձրաձայն անկճը... այս բոլորը դառը
բողոք են Եւրոպայի հասարակական դատաստանի
առաջ՝ իր ներկայացուցիչների տարգուրթիւնների
դէմ:

Վասպուրականն աւերեց. սուլթանը, Շաքիրը.
Սաադէտին և այլ փաշաները հրճուեմ են: Հրճուեմ են
և դիպլոմատները. նրանցից իւրաքանչիւրը հասաւ իր
նպատակին: Իսկ մե՞նք...

Ճիշտ է, մենք կրեցինք սոսկալի հարած, անհա-
մեմատ աւելի զոհեր տւինք, քան մեր թշնամին,
կորցրինք մեր լաւագոյն ընկերներից շատերին, բայց
մեր ժամանակաւոր պարտութիւնը, մեր թշնամինքի
հրճուեցը մեզ չեն վճատեցնի: Տասնեակ հազարաւոր
դժբախտների յուսահատական ճիշերը պահանջում են
մեզանից արդար վրէժխնդրութիւն, մեր հարիւրաւոր
նահատակած ընկերների սուերները կոչում են մեզ
դէպի անձնագրհ գործունէութիւն:

«Իրօշակ», 1896թ. . 15 օգ. № 19.

# Դ Ր Ս Տ Ո Ս

(կենսագրական ուրագիծ)

Մեր կուսակցութեան մէջ չի եղել ու չկայ մէկ
ուրերը, որ իր մէջ այնպէս հարազատութիւն մարմնացրած
լինէր Դաշնակցութիւնը, որքան Ռոստոմը: Ռոստոմը
նոյն ինքը Դաշնակցութիւնն էր: Մեծ ու բազմակող-
մանի, ինչպէս Դաշնակցութիւնը:

Եւ, սակայն, ահա տասը տարի է անցել նրա մա-
հից, բայց նրա մասին գրեթէ ոչինչ չի գրել: Մի-
երկու թոռացիկ յուշ — և վերջացաւ: Նոր սերունդը,
նրանք, որոնք բախտ չեն ունեցել ճանաչելու Ռոստո-
մին, ոչինչ չգիտեն նրա մասին:

Ինչո՞ւ այդպէս:

Պատճառն, ի հարկէ, Ռոստոմի ընկերների ան-
փութութիւնը չէ: Պատճառը աւելի խորն է—Ռոստոմի
անհատականութեան ուրոյնութիւնը, նրա կեանքի և
գործունէութեան առանձնայատկութիւնները:

Ռոստոմը Դաշնակցութեան մէջ ամէն բան էր.
ուր որ լինում էր, իր շնչով լեցնում էր ամէն ինչ:
Բայց այդ անում էր այնպէս, որ ո՛չ մի տեղ չէիր
տեսնի նրա ետը: Ռոստոմը ամէն տեղ էր և բոլոր
գործերի մէջ, և միևնոյն ժամանակ Ռոստոմ չկար:
Զէր սիրում երևալ և նիւթական հետքեր թողնել իր
յետևը: Ճառնախօս չէր, յօդուածներ չէր սիրում գրել,
նրա նամակները կարճ էին ու միայն առօրեայ խնդիր-
ների ներկած: Իր կատարած գործերի մէջ զնում էր
հողին, բայց երբե՞ք անունը: Անձամբ երևում էր այն
ժամանակ միայն, երբ կարելի էր խուսափել, այլա-
պէս միշտ մնում էր ստեղծի մէջ և առաջ էր քաշում
ուրիշներին:

Եւ, հետևաբար, զարմանալի չէ, որ Ռոստոմի
մասին նիւթական յիշատակներ չիլ են մնացել: Նրա
մտքերն ու ապրումները, նրա կատարած գործի մեծ
մասը, նրա նմանը չունեցող դերը Դաշնակցութեան

և հայ հասարակական մտքի զարգացման մէջ — այդ
բոլորի մասին կարող են ասել միայն նրա ողջ մնացած
ընկերներն ու աշակերտները: Եթէ նրանք այդ պարտա-
կանութիւնը չկատարեն, Ռոստոմի եղական դէմքը կը
մնայ բոլորովին չլպարզած, և հայ ազատագրական
պատմութիւնը կը դրկի իր սքանչելի մէկ էջից:

Բայց հետո չէ գրել Ռոստոմի մասին: Ճիշտ է
ասում Ռոստոմի մտերիմ վաստակաւոր ընկերներից
մէկը. «ինչքան փորձում եմ գրել Ռոստոմի մասին,
դուրս է գալիս Ռոստոմի առփուլ»: Ռոստոմի առփուլ
շատ բան կարելի է ասել, բայց Ռոստոմի մասին —
դժուար է: Այդ է պատճառը, որ Ռոստոմին ներկած
գրածք չկայ: Քրիստափորի, Չաւարեանի մասին որոշ
գրականութիւն գոյութիւն ունի, թէ և նոյնպէս անբա-
ւարար, բայց Ռոստոմը մնում է մեր նոր սերնդի և
լայն հասարակութեան համար, թէ և խորհրդաւոր,
բայց անյայտ մի մեծութիւն:

«Իրօշակ»-ի ներկայ համարը առաջին փորձն է
ներկայացնելու համար Ռոստոմին: Իսկ այս կենսա-
գրական ուրագիծը՝ մի թոյլ ճիգ՝ տալու համար
Ռոստոմի կեանքի պատկերը:\*)

\*) Բոլորովին վստահ չեմք, որ այս ուրագիծի մէջ
էլ սխալներ չկան, իսկ պակասները շատ-շատ են:
Շնորհակալ կը լինէիմք, եթէ Ռոստոմի կեանքին ծա-
նօք ընկերներն ու բարեկամները գրի առնէին իրենց
նկատած սխալները, լրացնէին պակասը և ուղարկէին
մեզ: Շնորհակալ կը լինէիմք նաև, եթէ Ռոստոմի
գործունէութեան վերաբերւող գտնաւոր նիւթեր ու
նկարներ ուղարկէին մեզ՝ օգուտիւ և վերադարձնե-
լու պայմանով:

Ինչպէս և Քրիստափորը, Ռոստոմն էլ գողթնեցի էր: Նրա բուն անունը Ստեփան Զօրեան էր: Մնեւ էր Շղնա գիւղում, 18 յունւար 1867 թւին, նահապետական մի ունեւոր ընտանիքի մէջ: Նոյն գիւղում էլ անց կացրեց իր մանկութիւնը:

Գունտ ու կլոր, առողջակացմ, ուշիմ ու խելօքիկ կրեխայ էր, որ վաղ մանկութիւնից սովորել էր դիտել ու մտածել: Գիւղի ծխական դպրոցում, ուր ստացաւ իր նախնական կրթութիւնը, աչքի էր ընկնում իր ընդունակութիւններով ու ջանասիրութեամբ և դէպի դրաբար լեգուն ցոյց տւած սիրով: Բազմաթիւ դրաբար կտորներ գիտէր անգիր և սիրում էր եկեղեցական երգերն ու շարականները:

Առանց ծխական դպրոցն աւարտելու, ծնողների որոշումով, մանուկ Ստեփանը տեղափոխեց Թիֆլիս՝ Ներսիսեան դպրոց մտնելու նպատակով: Բայց տեսնելով, որ Ներսիսեան դպրոցը պետական իրաւունքներ չի տալիս, վճռեց մտնել Թիֆլիսի ռէալական դպրոցը:



ՌՈՍՏՈՄԸ ԿՆԱՅ ԵՒ ԱՂՋԿԱՑ ԼԵՏ

Դրա համար որոշ ժամանակ նախապատրաստեց Բեգլարեանի մասնաւոր ռէալական դպրոցում, ապա, 1882-ին, տեղափոխեց պետական ռէալական դպրոցի 3րդ դասարանը:

Ռէալական դպրոցում էլ Ռոստոմը աչքի ընկաւ. իբրև լաւ սովորող և ընդունակ աշակերտ, մանաւանդ մաթեմատիկական առարկաների մէջ: Նրա դպրոցական ընկերները վկայում են, որ Հանգիստ ու խոհուն պատանի էր: Կէր սիրում վազմզել ու խաղերին մասնակցել: շատ կարողում ու շատ մտածում էր:

Արդէն դպրոցական նստարանից նա սկսել էր հետաքրքրութիւն ցոյց տալ դէպի հասարակական խնդիրները: Զարն ու բարին, մարդկային անհաւասարութիւնը, արդարութեան ու ճշմարտութեան զաղափարը, որ յափշտակում էին այն ժամանակներին ռուս առաջաւոր մտաւորականութեան մտքերը, յուզում էին և Ռոստոմին, որ զին գիւղում եղած ժամանակ յայտնա-

բերել էր հասարակական շիջ: Նրա մասին անում են հետեւեալ ընորոշ պատմութիւնը:—

Ճղնա գիւղի միջով հոսում է մի փոքր գետակ, որի ջուրը ամառները չէր բաւակալանում ամենքի այգիները ջրելու համար: Ռոստոմը յաճախ լսում էր, թէ ինչպէս գիւղի չքաւոր բնակիչները տրանջում են, թէ ամբողջ ջուրը դնում է հարուստներին, իսկ իրենց այգիները փչանում են առանց ջրի: Եւ ահա մի օր, հազիւ 10-11 տարեկան, Ռոստոմը իրեն հասակակից մանուկների գլուխն անցած՝ գնում քանդում է գետակի ամբարտակը և ջուրը ուղղում դէպի աղքատ գիւղացիների այգիները: Երբ նրան նկատողութիւն են անում, աներկիւզ պատասխանում է:—

— Հարուստները առանց այգու էլ կարող են ապրել: Ջուրը չքաւորին է հարկաւոր, որ սպրուտափ միջոց ունենայ...

Աւելի սքանչելի մի օրինակ, որ պատմում է Ռոստոմի մայրը:

Ձատկի օրը, 4-5 տարեկան Ստեփանը, նոր հագուստով ու նոր կոշիկներով դուրս է գալիս փողոց խաղալու ընկերներին հետ, բայց քիչ յետոյ վերադառնում է ոտաբորիկ:

— Այ, տղայ, ո՞ւր են քոշերդ, դարձացած հարցնում է մայրը:

Ռոստոմը բացատրում է, թէ տւել է մի աղքատ ընկերով:

- Հայրիկդ կը ծեծէ սպանում է մայրը:
- Չի ծեծի, պատասխանում է Ռոստոմը:
- Կը ծեծէ, պնդում է մայրը:
- Մեծում է, ծեծէ, հօ նոր կոշիկներ կառնէ, լինում է տղի պատասխանը:

Թիֆլիսում Ռոստոմը մտնում է աշակերտական ինքնագրագաղտական խմբակների մէջ, չիւում է յեղափոխական շրջանների հետ և մասնակցում նարդոփուլցիների գաղտնի գործունէութեան: Այդ ժամանակից արդէն ընկերների շրջանում նա յայտնի էր Բոթոթ անունով, երևի, իր ջոթոթի նման կազմածքի պատճառով: Բոթոթը մինչև վերջ էլ մնաց նրա կեղծ անունը:

1886 թւին Ռոստոմը աւարտեց ռէալական դպրոցը և աշնանը մտաւ Նովո-Ալեքսանդրիայի դիւղագործեսական Ձեմարանը, Վարչաւայի մօտ:

Ռէակցիայի մռայլ օրեր էին Ռուսաստանում: Ալեքսանդր Երրորդի անհեթեթ ինքնակալութիւնը ճգմում էր կենքեղ ամէն արտայայտութիւն: Լորիս-Մելիքեանի չափաւոր-ապստակական իշխանութեան փոխարէն Պրեզիդոնտցիկ կղերա-կայսերականութեան թիւնն էր տիրապետողը: Բնականաբար, ռուս հասարակութիւնը յուզում ու դժգոհութիւն էր ցոյց տալիս: Ռեսանդուլթիւնը առաջին արտայայտողներից էր այդ դժգոհութեան:

1887 թւին Մոսկուայում, համալսարանական մի հրապարակային հանդէսի միջոցին, ռուսնող Սենեաւսկին ապստակեց համալսարանի տեսչին: Սենեաւսկին աքսորեց Սիբիր, և ամէն կողմ սկսեցին ռուսնողական խռովութիւններ ու բողոքել ցոյցեր կառավարական խստութիւնների դէմ: Ռոստոմի թիւնն էր տեղի ունեցան և Նովո-Ալեքսանդրիայում: Ռոստոմը խռովա-

բարձրների առաջին շարքերում էր: Եւ շատերի պէս Հեռացւեց դպրոցից և աքորւեց ծննդավայր՝ «ΒΟΛΩΤΩΝ»-ով (գալլի վկայական), այսինքն՝ առանց իրաւունք ունենալու ուրիշ դպրոց մտնելու:

Այլ օրերի Ռոստոմի հողեկան պատկերը գեղեցիկ կերպով բնորոշում է հետևեալ դէպքը. Նովո-Ալեքսանդրական նա ճանապարհ է դրում մի ծերունի ժանդարմի ուղեկցութեամբ: Ժանդարմը պէտք է նրան հասցնէր Ծղնա և դիւղայտից վկայական ստանար:

Հինգ-վեց օր տեղը ճանապարհորդութեան ընթացքին Ռոստոմն ու ժանդարմը բուսական մտերմանում են: Ռոստոմը շատ լաւ սպաւորութիւն է թողնում ծերունու վրա:

Երբ գնացքը մօտենում է Ալտաֆա կայարանին, Ռոստոմը դիմում է ժանդարմին, թէ —

— Գիտե՞ս, ջեռի, Հիմա մինք պէտք է թողնենք երկաթուղին և 4-5 օր էլ փոստային սալակով ճամբորդենք: Ինչո՞ւ ի դուր տեղը դու էլ յովնութիւն կրես: Աւելի լաւ չէ՞ ինձ թողնես մենակ, իսկ դու պնաս քո դործին:

— Մո՞ց թէ, ապու՞մ է ծերունին, հապա որ փախչե՞ս — դիտե՞ս, ինձ ինչ կանեն:

— Ձեռք փախչի, ջեռի, պատասխանում է Ռոստոմը, ազնիւ խօսք եմ առախս, որ չեմ փախչի:

— Հապա որ խոստանաս ու խոստանող չկատարե՞ս... ինձ պահտօնից կը զրկեն ու կը պատժեն, ընտանիքս էլ կը մնայ սոված:

Ու պահանջում է, որ Ռոստոմը երդուի:

— Ես երբեքլու սովորութիւն չունեմ, պատասխանում է Ռոստոմը, իմ երդումը ազնիւ խօսքս է: Ես կերթամ և կը ներկայանամ դիւղի օստիկանութեան:

Ժանդարմը հաւատում է: Բաժանուում են շարեկամաբար: Ժանդարմը գնում է Թիֆլիս, Ռոստոմը՝ Ծղնա, ուր ստանում է պահանջած վկայականը և ուղարկում ծերունի ժանդարմին:

Ծղնայում Ռոստոմը երկար չմնաց: Ճարեց Արբա-Համեան անունով մի անցադիր և մեկնեց Թիֆլիս, ուր նորից մտա յեղափոխական խմբակների մէջ: Քրիստափորը իր յուշերում\*) պատմում է, որ 1887-ին Ռոստոմի հետ Թիֆլիսում փորձել են հիմնել զաղանի տպարան, բայց յաջողութիւն չեն ունեցել ճիւղեթական միջոցների պակասութեան պատճառով: Միջոցներ հարկաւոր էին ոչ թէ տառեր գնելու համար — տառեր մենք ժառանգել էինք «Ազատութեան Աւետարեք»-ի հիմնադիրներից, — այլ որպէսզի պահենք քնակարանը և մի ընկերոջ, օրին տեղաւորել էինք այդ քնակարանում աշխատանքի համար: Այդ ամենքը մենք (Քրիստափորը և Ռոստոմը Ս.Վ.) փորձեցինք պահել անմահական միջոցներով, բայց մեր միջոցները բաւական չեղան. մենք ապրում էինք մասնաւոր, կողեկանոց զսպերով»:

Այդ ժամանակ արդէն Թիֆլիսի հայ երիտասարդութեան որոշ շրջաններ, որոնք մինչև այդ կանգնած էին համապետական, ռուսական տեսակէտի վրա, սկսել էին ձևակերպուել իրրև ազգային, հայկական երեւոյթ: Ռոստոմն էլ, Քրիստափորի և ուրիշների հետ, ազգային-յեղափոխական կազմակերպութեան գաղա-

փարի պաշտպաններից և իրականացնողներից էր: Նոյն օրերին, Թիֆլիսում, Ռոստոմը ծանօթացաւ և օր. Լիպա Մելիք-Շահնազարեանի՝ իր ապագայ ամուսնու հետ:

Թիֆլիսից Ռոստոմը անցաւ Բազու, Արբաճանեան անունով յաջողութեամբ աւարտական ճննութիւն տեւեց ուղարկան դպրոցում և 1889-ին գնաց Մոսկա ու մտաւ Պետրովսկո-Ռոստոմովսկայա դիւղատնտեսական ճեմարանը, որը առաջաւոր ու ազատական դպրոցի հրաշակին էր վայելում: Յեղափոխական և բժրոստ ուսանողութիւն ունէր: Հակակառավարական ցոյցերի ու կազմակերպութեան ինչորում նա, Մոսկայի համալսարանի ուսանողութեան հետ միասին, միշտ ընթացում էր առաջին շարքերում: Ուսանողութիւնը և պրոֆեսորութեան որոշ մասը ստորում էին ժողովրդաբարիակն ու յեղափոխական գաղափարները: Ճեմարանի կանարակացարանը, ուր ապրում էին հարիւրաւոր ուսանողներ, միշտ լիքն էր և ու գեւոյժ — անվերջ երեկոյթներ, ժողովներ և ամէն տեսակ հաւաքովներ:

Ռոստոմը (Արբաճանեան) այսուր էլ մտաւ յեղափոխական խմբակների մէջ և դարձաւ պաշարող յեղափոխութեան գործն անդամներից մէկը: 1890 թիւն, ուսանողական մի ցոյցի ժամանակ, ձերբակալուեց ու նորից աքորւեց Կովկաս: Դրանով էլ փաստօրէն սկսելով էր Ռոստոմի ուսանողական շրջանը:

Նոյն 1890-ի ամառը, Թիֆլիսում գումարեց իւսիս-նոյեմբերականները նշանաւոր ժողովը. Դաշնակցութեան առաջին գործիչները գնեցան կողմերից հաւաքեցին «Բուսիա-Նոմերք» հիւրանոցում: Եւ այլ հաւաքովքը դարձաւ Դաշնակցութեան հիմնադիր ժողովը, որի անունից մի կողմ էլ ուղղուեց ուսանողներին՝ հրաւիրելով նրանց մեկնել Թիւրքիա յեղափոխական գործունէութեան մասնակցելու համար: Ժողովից յետոյ, Ս. Չաւարեանը գնաց Մոսկա՝ ուսանողութիւնը կազմակերպելու և կամաւոր գործիչներ արձանագրելու նպատակով:

Այս ժողովն ու կողմ գուզարիպեց Ռոստոմի աքորին: Թիֆլիս հասնելուն պէս, նա ոտքով-գլխով նետուեց յեղափոխական գործերի մէջ և անմիջապէս, ուսուցչի պաշտօնով, մեկնեց Կարին»):

Էրզրումից հեռացաւ 1891 թիւն և մինչև 1893թ. աշխատում էր Թիֆլիսում, ուր նախապատրաստում էր Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ընդհանուր ժողովը: Լուրջ փորձ էր կատարւած. շատ գործիչներ — Ս. Չաւարեան, Յ. Իւսուֆեան, Յ. Արբուքեան, Լ. Սարգսեան, Ռոստոմ և ուրիշներ այցելել էին Թիւրքապատրաստի գանապան վարչերը՝ Վան, Էրզրում, Տրպալզոն, ոմանք մնացել էին բաւական երկար, ուսումնասիրել Երկրի վիճակն ու յեղափոխական աշխատանքի սպայմանները: Կար Կուրուճեան խմբի արշաւանքի փորձը. Ալջըի առջև էր Հնչակեան կուսակցութեան կազմակերպութեան օրինակը: Միւս կողմից, Կովկասում էլ կատարւած էր խոշոր աշխատանք, պարզւած էին մի շարք տեսական ու կազմակերպական սկզբունքներ, պատ-

\*) «Հայրենիք» տնւ., 1924թ. № 10, էջ 61.

\*) Այս շրջանը Ռոստոմի կեանքի ամենամայայտ շրջանն է: Երախտապարտ կը լինէիք տեղեակ մարդկանց, եթէ տային մեզ լուսարանաբիւններ:

րաստած էր կուսակցութեան ծրագրի նախադիրը: 1890 և 91 թւականներին Հրատարակած էր երկու համար «Դրօշակ Թուրքիի թերթ»-ը: 1891-ին, Թիֆլիսում, Հրատարակել էին «Դրօշակ»-ի առաջին և երկրորդ համարները, իսկ 1892-ին, Ռուսմանիայում՝ «Դրօշակ»-ի Յրդ և Կրդ համարները: Ընդհանուր ժողովը ահազին գործ ունէր կատարելիք:

Ռոստոմը այս բոլոր աշխատանքներին անմիջական ու գործօն մասնակցութիւն ունէր: Մասնաւորապէս «Դրօշակ»-ի Հրատարակութիւնը նրա գործն էր: Ինքն էր վարում տպագրական մասը, ինքը նիւթ էր Հայ-թայում չարում ու տպում էր: Պատահում էր, որ ոստիկանութիւնը առնում էր տպարանի հոտը, Ռոստոմը տեղից տեղ էր փախցնում տառերն ու գործիքները: Եւ Հէնց այդ շրջանում երևան բերեց կազմակերպչական և գաղտնի յեղափոխական աշխատանքի արտակարգ տաղանդ, որը նրան չլաւաճանեց մինչև մահ:

Հ. Յ. Գ. առաջին ընդհանուր ժողովին, 1892 թւին, Ռոստոմը մտցրեց իր անհատական ոգին նորաստեղծ կուսակցութեան ծրագրի և կազմակերպութեան ձեւի մէջ: Ծրագրի տնտեսական մասը պատկանում է Ռոստոմի գրչին և ամբողջապէս արդիւնք է նրա դրական, մի քիչ մարքսիստական մտածողութեան: Այդ գիծը նա յայտնաբերեց և յետագային, գրած յօդածներում և գործունէութեան ապագայում:

Ընդհանուր ժողովից յետոյ Ռոստոմը Թիֆլիսում երկար չմնաց: 1893-ի սկզբին նա արդէն արտասահմանում է, ուր մեկնում է Բիւրօի որդուով «Դրօշակ»-ի Հրատարակութիւնը կազմակերպելու համար: Թիֆլիսից հեռանալուց առաջ նա նշանում է օր. Լիլյա Մելիք-Շահնազարեանի հետ, բայց որովհետև վերջինիս ծնողները հակառակ էին, ամուսնութիւնը յետաձգում է և տեղի է ունենում հինգ տարի յետոյ:

Առաջ Ռոստոմը անցնում է Ռուսմանիա, ուր լռյս է կանոն «Դրօշակ»-ի Կրդ համարը: Ռուսմանիայի պայմանները, սակայն, հնարաւորութիւն չէին տալիս մի յեղափոխական կուսակցութեան պաշտօնաթերթի կանոնաւոր Հրատարակութեան, և Ռոստոմը տեղափոխում է Ժընև. — այն ժամանակայ Սուրբպետի ամենաազատ վայրը, ուր համախմբւած էին ուսական յեղափոխականները:

Հինգերորդ համարից սկսած «Դրօշակ»-ը սկսում է կանոնաւոր կերպով լռյս տեսնել Ժընևում: Ռոստոմը նրա և՛ խմբագիրն էր, և՛ դաշտալը, և՛ փոստիկաննորդը — ամէն քնչ: Գրաշարանոցն ու խմբագրատունը նրա ուսանողական համեստ սենեակն էր: Ցերեկը յաճախում էր համալսարան, ուր լսում էր տնտեսական և ընկերային գիտութիւնների դասախօսութիւններ, ազատ ժամերին կամ զիշերը խմբագրում, շարում, սրբագրում ու փոստին էր յանձնում «Դրօշակ»ը: Այդ շրջանի «Դրօշակ»-ների գլխաւոր նիւթերն էին թղթակցութիւնները Երկրից և Ալյք ու բէն (ծրագրի բացատրութիւն) խիստ հետաքրքրական յօդածաշարը: Ալյք ու բէն»-ի առաջին մասը գրել են Գրիստափորն ու Զաւարեանը միասին, Թիֆլիսում: Ռոստոմը ամսէ ամիս ստանում և թէթև սրբագրելուց յետոյ տպում էր «Դրօշակ»-ում: Շարունակութիւնը («Դրօշակ»-ի 1894 թւի համարներում) գրել է Ռոստոմը

ինքը: Այդտեղ նա երևան է բերում ուժեղ քննադատի և սրամիտ բանալիճողի կարողութիւն: Առանձնապէս սաստիկ հարեածներ է հասցնում Հնչակեան կուսակցութեան, որի մէջ նա տեսնում էր «Հայեացքների քաօս, խառնաշփոթութիւն և ինքնուրոյնութեան կատարել քացակայութիւն»: Հիգնում է նրա մարքսիզմը, պրոլետարացման սկզբունքը, դադափարական հաստիքիւններն ու Հայ իրականութեան անձանօթութիւնը:

Ժընևը, սակայն, չէր գոհացնում Ռոստոմին: Նա կենդանի գործի մարդ էր, և «Դրօշակ»-ի Հրատարակութիւնն ու դասախօսութիւնները նրան բաւարարութիւն չէին տալիս: Նրա սրտովը չէր և ժընևի Հայկական միջպալլա» ուսանողական մանր-մունք նաշիւներով, նախանձով և ինտրիզներով: «Ես խեղդում եմ այստեղ, օդ չկայ», գրում էր նա իր նամակներից մէկում: Եւ Հէնց որ Հնարաւոր եղաւ, «Դրօշակ»-ը յանձնեց Յովնան Դաւթեանին և ինքը, պարսկական անցագրով, մեկնեց Թիֆլիս, ուր 1895-ի ամառը, մասնակցեց կուսակցական մի կարևոր խորհրդակցութեան և ապա անցաւ Կարին կազմակերպական նպատակներով:

Քիչ յետոյ, Հայկական Նահանգները հասաւ Հրոշակաւոր Շաքիր փաշան: Ռոստոմը «Դրօշակ»-ում (1895թ. նոյեմբեր) նկարագրում է այդ հրէչի դալուստը և Հայ ժողովրդի ցուցադրած թշնամական վերաբերումը: Շաքիր փաշայի դալուց յետոյ տեղի ունեցաւ Կարնոյ կոտորածը. Ռոստոմը 500 աշակերտների և ուսուցիչների հետ կոտորածի ժամերը անց է կացնում զվարցում: «Դրօշակ»-ի 1895թ. դեկտ. 15 համարում նա նկարագրել է այդ դէպքերը:

Կոտորածից յետոյ, Թիւրք կառավարութիւնը ուզում է ձերբակալել Ռոստոմին, բայց պարսից Հիւլպատոսի միջամտութեամբ, մի դաւազի և Թիւրք ոստիկանների ուղեւորութեամբ, հեռացւում է Պարսկաստան: Գալիս և Մակուս, Ս. Բարթեղովճէոսի վանքը, ապա Սալմաստ ու Թաւրիզ՝ բոլոր վայրերում մասնակցելով կազմակերպական գործերին ու խորհրդակցութիւններին, որոնց մէջ քննուած էին Երկրի գործունէութեան վերաբերող արցրեր: Պարսկաստանից «Դրօշակ»-ին ուղարկում է հետաքրքրական թղթակցութիւններ ջըրդական շարժումների և Թիւրք-պարսկական սահմանազլիի գործերի մասին:

Պարսկաստանից Ռոստոմը վերադարձաւ Կովկաս և նւիրեց կուսակցական-կազմակերպական աշխատանքներին: Նորից եղաւ Թաւրիզում գէնքի արհեստանոցի գործերով:

1898թ. ապրիլին, Թիֆլիսում, գումարեց Հ. Յ. Դաւանկցութեան երկրորդ ընդհանուր ժողովը, որը հիմնական ջննութեան ենթարկեց նախկին տարիների յեղափոխական գործունէութիւնը, կազմակերպական ձևը և ապագայ գործունէութեան եղանակը: Յատկապէս լուրջ քննութեան առարկայ եղան Բանկ Օթոմանի դրամման և Պանաստրի արշաւանքի արդիւնքները: Այդ երկու գործերի ղեկավարներն էլ ներկայ էին ժողովում:

Այստեղ դուրս եւ Թիւրքիայի ուրիշ յեղափոխական տարրերի և, մասնաւորապէս, մակեդոնացիների հետ



համբարաշխելու խնդիրը, որի ամենաշեղքման պաշտպաններին էր Ռոստոմը: Առհասարակ, նա խոշոր նշանակութիւն էր տալիս օտար տարրերի հետ գործակցելու դադափարին և համակրանքով էր արտասայուում թիւրք և քերթ ժողովուրդներին արթնացման ու յեղափոխականացման մասին:

Երկրորդ բնչահատուր ժողովրդ որոշեց «Ջննալ կապիբ հաստատել մակերանացիներու, յոյներու և ուրիշներու» հետ, և Ռոստոմը ողևորութեամբ փարեց այլ ծրագրեր իրագործման:

1898թ. սեպտեմբերին Ռոստոմը ամուսնացաւ օր. Լիզայի հետ: Ինչպէս յիշեցինք, օրիորդի ծնողները հակառակ էին այդ ամուսնութեան, այդ պատճառով հարսանիքը տեղի ունեցաւ Յ. Քալապուտուու տանը: Պսակից յետոյ անմիջապէս, նոյն զիշերն իսկ, ռափկանական հետապնդումով արտաւելու համար, անցաւ արտասահման: Ժրնկում նա խորհրդակցութիւններ ունեցաւ ընկերներին հետ: Այստեղ էին Քրիստափորը, Զաւարեանը, Արմէն Գարօն, Յովնանը և ուրիշներ:

1900-ին Բուլղարիա անցաւ տիկ. Լիզան՝ դպրոց հիմնելու ծրագրով: Եւստով հասաւ և Ռոստոմը՝ նպատակ ունենալով գլուխ ընկել հայ-մակեդոնական գործակցութեան: Տիկին Լիզան Ֆրիլիպէում հիմնեց մի մասնաւոր մանկապարտէզ, որը 1901-ից վերածւեց դպրոցի: Մի ամբողջ տարի Ռոստոմը դասաւանդեց այդ դպրոցում՝ ստեղծելով տաք միջոցառում իր շուրջը: Նրան յարգելէ իրականացնել և հայ-մակեդոնական համբարաշխութեան ծրագիրը: 1902-ին Ռոստոմը ընտանիքով վերադարձաւ Կովկաս և 1903-ին քարտուղարի պատճառ էր վարում Թիֆլիսի Հայ. Գիւղ. Ընկերութեան մէջ: Նոյն տարւոյ վերջը ձեռքբախաւ և արտուրեց Օդեսա, սրտեղից փախաւ արտասահման:

1904 թիւն, Մոֆիարում, տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. երրորդ ընդհանուր ժողովրդ, որի օրակարգի մէջ կային մի շարք ծանրակշիւ հարցեր — Կիլիկիայի և Սասնոյ շարժումներ, մարտական խմբերի արշաւանքներ զէպի երկիր, ցուցական զործունէութիւն, սուլթանի մահափորձ և այլն: Ռոստոմը զէմ էր սուլթանի մահափորձի ձեռնարկին և, սահասարակ, ցուցական զործունէութեան, զէմ էր և Քրիստափորի մասնակցութեան: Քրիստափորն ինքն էլ թերեւս սրտով չէր զնում այդ զործին, բայց հպարտական պայմաններն անհրաժեշտ էին զարձնում նրա անմիջական ղեկավարութիւնը:

Ընդհանուր ժողովում բազմակողմանի քննութեան առարկայ եղան և կովկասացայ գործերը: Եկեղեցական գլխերի պաշտպանութեան յարկողով փոթորկալու չըջնան էր: Դաշնակցութիւնն էր վարելը ինքնապաշտպանութեան պայքարի, թէև հրապարակի վրա երևում էր անկուսակցական մի ծարմիր: Ամէն կողմից պահանջում էին, որ Դաշնակցութիւնը պաշտօնապէս իր ձեռքը առնէ շարժման ղեկավարութիւնը: Ընդհանուր ժողովը ընդառաջ գնաց այդ տրամադրութեան: Ընդունւած բանաձեւում ասուում էր. «Դաշնակցութիւնը իր վրա առնելով կովկասացայ տարի ինքնապաշտպանութեան գործը՝ որոշեց յանձնել այդ՝ Կովկասի Պատասխանատու Մարմինն, որ պահելով իր «Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէ» անունը՝ պիտի

շարունակէ գործել «Դաշնակցութիւն» պաշտօնական անան տակ»:

Հետաքրքրական է յարթող կէտը. «Ժողովրդ Կովկասի վերաբերմամբ ընդունեց ընթանայի և գրաւոր պրոպագանտի, տնտրի, ժողովրդական ցոյցերու և զինւած զինադրութեան տակտիկը՝ մնալով պաշտպանողական հողի վրա»:

Աւելին դեռ. ընդհանուր ժողովը ընդունեց և բանւորական շարժման մասնակցելու անհրաժեշտութիւնը. «Դաշնակցական բանւորական խմբերը, այն գործարաններու սահմաններու մէջ, ուր անոնք կաշխատին, կը մասնակցին բոլոր բանւորական գործադուլներուն և շարժումներուն, կըր անոնք կապուած են բանւորներու ընդհանուր վիճակին հետ այդ գործադուլներու մէջ, իսկ ինչ էր վերաբերի գործարանական կեանքին դուրս ցոյցերուն, որոնք կրնան առաջարկել ուրիշ կուսակցութիւններու կողմէն, բայց որոնք առիթներն ու նպատակներ կրնան տարբեր ըլլալ, իրաքանչիւր զէպի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռէ Պատասխանատու Մարմինը»:

Ռոստոմը այս բաղաբաղանութեան համոզւած պաշտպաններից էր: Ընդհանուր ժողովից յետոյ, իբրև նորընտիր Արևմտեան Բիւրօի անդամ, նա անցաւ Ժրնկ: 1905թ. փետրւար-մարտին, Ժրնկում զումարէր Դաշնակցութեան խորհուրդը, որին մասնակցեց և՛ Ռոստոմը:

Սորհրդից գրեթէ անմիջապէս յետոյ, մարտ 20ին, տեղի ունեցաւ Քրիստափորի եղբրական մահը: Ռոստոմը շտապեց Բուլղարիա: Քրիստափորի յուղարկււորութիւնից յետոյ, նա կազմակերպեց զինւորական դպրոցի բացումը և ուժեղացրեց հայ-մակեդոնական բարեկամական փոխյարաբերութիւնները:

1906-ին Ռոստոմն այլևս Կովկասում է, որը բռնկւած էր հայ-թրքական ընդհանուրների հրդէհով: Ինքնապաշտպանութեան գործը ամբողջապէս ամփոփւած էր Դաշնակցութեան ձեռքը: Անդրովկասը բաժանւած էր շրջաններու, որոնց զինին զբաւած էին պատասխանատու վարիչներ. Արմէն Գարօն՝ Թիֆլիսում, Դումանը՝ Երևանում, Վարդանը՝ Ղարաբաղում և այլն: Ռոստոմը ամէն տեղ էր. մերթ Ղարաբաղում, մերթ Երևանում, մերթ Շիրակում ու Կարսում: շըրջում, կազմակերպում ու քաջակերում էր, սովորեցնում էր ուժանակ բանեցնել, մակեդոնական ուումբեր գործածել: Մի քանի ամիս մնաց Եուշու շրջանում: Մոռացել էր և՛ ընտանիք, և՛ իր անձը — ապրում էր միայն կազմակերպութեան մտահոգութիւններով:

Հայ-թրքական պայքարից Դաշնակցութիւնը դուրս եկաւ յաղթական: Սակայն, կռիւներէ հետևանքով և ռուսական յեղափոխութեան աղէկացութեան տակ կուսակցութեան ներքը ծար տւին ուժեղ դժգոհութիւններ — մի կողմից զինւորական շարժումները, միւս կողմից անկողնայական հոսանքը, հայ բուրժուական խաւերի յարձակումները, ռուսահայ-թիւրքահայ դատի շուրջ ստեղծւած թանձր միջոցառում: Եւ երբ 1907 թի փետրւարի վերջերին, Վիէննայում, բացեց 4րդ ընդհանուր ժողովը, մեր հակապրոպագանդը չարախնդութեամբ ձեռքեցն էին չիում՝ անհամբեր սպասելով Դաշնակցութեան քայքայման: Սակայն, այս անգամ էլ յուսախաբ եղան նրանք. Դաշնակցութիւնը

հաստատու կազմու պէս, մնաց սնյուղողը: Ռոստոմը մէկն էր, եթէ ոչ զվաւուրը նրանցից, որոնք ապահովեցին կուսակցութեան միութիւնն ու կենսունակութիւնը: Կար երկարամտութեան, լայնխոհութեան, համոզու հարողութեան և անսահման հմայքին ենք պարտական, որ անհայտելի մտայնութիւններն ու խառնուճքները կարելի եղաւ ոչ միայն պահել միեւնոյն ընդհանուր յարկի տակ, այլ և միաձուլել, օրգանապէս միացնել մէկ կազմակերպութեան մէջ:

Վիէննայում, առանց չափազանցութեան, հրաջը տեղի ունեցաւ: Հաւաքել էին մի կողմից Ք. ձեւալուեցին պէս անհայտ հակառակորդներ ընկերվարութեան՝ ընկերվարական ծրագրին դէմ քնն տալու վրճուական հրահանգով, միւս կողմից՝ Ա. Շահաթեանեանի նման մոլեռանդ ընկերվարականներ՝ նոյնպէս չգիշերու կտորակ հրահանգով: Դժուար էր հայտեցնել ջուրը կրակի հետ: Ռոստոմին և ընկերներին յաղուեց ո՛չ միայն հայտեցնել, այլ և ընկերվարութիւնը մերժող Վրամեանի ու Զարդարանի պէս ընկերներին դարձնել ընկերվարական: Վիէննայից Դաշակցութիւնը դուրս եկաւ նոր ծրագրով, աւելի միաձոյլ, աւելի կուռ ու զործօն:

Գլխաւորապէս Ռոստոմի պնդումի վրա, ընդհանուր ժողովը ընդունեց և պարսկական գործունէութեան անհրաժեշտութիւնը: Բանաձևը ստուճ էր. «Նկատելով, որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման ընդթ ունեցող հասարակական խտրը երևոյթ՝ թէ՛ Պարսկաստանի, թէ՛ Արևելքի համար և գտնելով դրա տարածելն ու լայնանալը ցանկալի թէ՛ համամարդկային, թէ՛ հայկական տեսակէտից:—

Ընդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշակցական մարմիններին և անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման դարգացման՝ մտղեներով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ռամկավարական և աշխատաւորական ոգին, որը բխում է Դաշակցութեան ծրագրից»:

Ռոստոմին անձնապէս էլ ողևորում էր պարսկական յեղափոխութիւնը: Նա անվերապահ կերպով համոզւած էր, որ Դաշակցութիւնը մեծ դեր ունի կատարելիք նրա մէջ, և ինքն էլ ձգտում էր անցնել Պարսկաստան՝ Դաշակցութեան մասնակցութիւնը անմիջապէս կազմակերպելու և վարելու համար:

Ռոստոմը ջերմ պաշտպան էր և Դաշակցութեան ու թիւրք ընդդիմադիրներին համադրժակութեան:

Վիէննայից նա մեկնեց Բուլղարիա, ուր ցրողւեց զինւորական դպրոցի գործերով, տեսակցութիւններ ունեցաւ մակերտական պետերի հետ, ապա անցաւ Կովկաս:

1908թ. մարտ 12-25-ին տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. ինդհուրդի հերթական նիստերը, որին մասնակցեց և Ռոստոմը, Կովկասեան Ռայոնական ժողովի կողմից: Ինդհուրդի գրադան գլխաւոր հարցերն էին ուռա-թիւրքական պատերազմի հնարաւորութիւնները և Դաշակցութեան դիրքը, հայ-թիւրքական և մակերտական համերաշխութիւնը, կազմակերպական խնդիրներ, ծրագրի ամրոցւածութիւնը և այլն: Ի միջի այլոց, այստեղ Ռոստոմին յանձնեց կուսակցութեան ծրագրի թիւրքիայի բաժնի մշակումը:

Ինդհուրդի նիստերից յետոյ, Ռոստոմը անցաւ Թաւրիզ: Հեղափոխութեան անկողնի հաւաքելու կուսակցական-մարտական ուժերը — Դումանը, Քեռին, Խէչօն և ուրիշներ: Ստեղծուեց հայ-պարսկական ընդհանուր ուժ. պարսից յեղափոխականները Սաթթար խանի գլխաւորութեամբ գործում էին ձեռք-ձեռքի դաշնակցական խմբերի հետ: Ռոստոմը շարժման ոգին էր, գաղափարական ղեկավարն ու ներկնչողը:

Պարսկական շարժումները ծանօթ են «Իրօշակ»-ի ընթերցողներին\*): Այդ շարժումներից մի գեղեցիկ դրաւդ էլ նկարագրել է ինքը՝ Ռոստոմը\*\*):

Թաւրիզի անկողնից յետոյ, Ռոստոմը Դումանի և ուրիշ ընկերների հետ անցաւ Վան, այնտեղից՝ Մուշ, Կարին և արտասահման: 1909 թ.ի ամառը մասնակցեց Հ. Յ. Դ. Հինգերորդ ընդհանուր ժողովին, Վառնայում, որից յետոյ, իբրև Բիւրօի անգամ, զբաւուրւմ էր կուսակցական գործերով Պոլսում և արտասահմանում:

1910 թ.ին, Ե. Թոփիշանի սպանութիւնից յետոյ, Ռոստոմը հրաւիրեց Կարին՝ աղզային դպրոցների ընդհանուր տեսչի պաշտօնով և այնտեղ մնաց մինչև 1914-ի սեպտեմբեր ամիսը ներկայացնելով միաժամանակ և Դաշակցութեան Հայաստանի Բիւրօս: Ամառները միայն, կարճ ժամանակով, անցնում էր Պոլիս կամ արտասահման — 1911թ. օգոստոս 17—սեպտ. 17 մասնակցեց Հ.Յ.Դ. վեցերորդ ընդհանուր ժողովին— իսկ մնացած ժամանակը անց էր կացնում Կարնում կամ ճամբորդում և չափակաւ գաւառներում:

Ռոստոմի չրսամեայ գործունէութիւնը Բարձր Հայքում, բացի ընդհանուր կուսակցական հետեւանքներից, ահապին նշանակութիւն ունեցաւ Կարնի ազգային-մշակութային կեանքի զարգացման, երիտասարդութեան կազմակերպութեան ու գաղտնաբանութեան և Հ. Յ. Դաշակցութեան ուժի և հեղինակութեան անձան տեսակէտից: Նրան պաշտում էր Կարնի երիտասարդութիւնը: Աղզային-աղալական խաւի կողմից ընդունուում էր պատկառանքով: Նրան հաշի էին առնում անգամ կատակարական շրջաններում: Մասնասրեան դպրոց, Հոփսիսեան, Արծնեան, Թաղային վարժարաններ, առաջնորդարան, Երիտասարդական Միութիւն, «Յատաջ», դասախօսութիւններ, զբաղան ու երաժշտական շանդէսներ, ընկերական հաւաքոյթներ— Ռոստոմը ամէն տեղ էր և ամէն ինչ:

Զարմանալի էր այդ մարդը: Առաջին ծանօթութիւնից, բացի համակրելի արտաքինից ու զբաւիչ ժպիտից, առանձին տպաւորութիւն չէր թողնում. համեստ, մի քիչ Թափթիւած հաղուստ՝ սև փողկապը կողքի վրա, տափաւոր միշտ տրորած, կոչիկը փոշու: Պարզ շարժ ու ձև: Անպաճոյճ խօսքեր: Հոռտոր չէր— դժաւարութեամբ, կիկմայով էր խօսք գտնում, և խօսք էլ անսեթեթ էր, սովորական: Բանախօսելիս աւելի շատ ձեռքերն էր գործում, քան լեզուս: Գրում էր նոյնպէս մեծ դժաւարութեամբ, քիթն ու ճակատը տրորելով, դրչակոթք կամ եղունգը կոծելով: Մէկ գրում էր, ստաը ջնջում...

Բայց բաւական էր հետը մի քիչ ապրել, մտնեալ նրա հոգուն, որ ամենքի առջև բացուում էր այնպէս

\* ) Տե՛ս «Իրօշակ», 1927թ.

\*\* ) Տե՛ս «Հայրենիք» բացառիկ քիւ. № 2, 914թ.

քննարկել, բաւական էր խօսել հետո մտերմական շըր-  
ջանակում, տեսնել գործի մէջ, որպէսզի համոզուէիր  
ներս մտքի, հոգու և կամքի արտակարգ մեծութեան:  
Նա զիտէր գրաւել ու հմայել սառնաց ճիգի: Նրա շնչի  
տակ ամենամեղկ կամքերն իսկ կենդանանում էին,  
վհատածները սիրտ էին անոնում: Ինչպէս արեւ ճառագայթներ,  
Ռոստոմն իր շուրջը տարածում էր եռանդ,  
կենսունակութիւն, աշխոյժ և կենսիք ու գործի սէր:  
Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր և ամենքի հետ՝  
հասասար ընկեր: Ինչպէս իր տան դուռը, այնպէս և  
սիրտը՝ բաց էր ամենքի առջև: Եւ ո՞վ սասն էջը  
մտնում այնտեղ...

Մանաւանդ քաղցր էր մտերմների շըջանում,  
սրտակից գրոյցի ժամանակ: Միտում էր դարականու-  
թիւնը, արեւունը, գիտութիւնը: Բայց ամենից աւելի  
սիրում էր երգիծական—հերոսական դրականութիւնը:  
Սանչո—Պանսա, Պանտազրելէյ, Տարտարէն, Տարաո  
Բուլբան նրա մտերմ հերոսներն էին, որոնց մասին  
կարող էր ժամերով խօսել, ամբողջ էջեր անգիր ար-  
տասանել: Նրանց գործերով ու խօսքերով հրճուում էր  
մանկան պէս:

Հաճելի էր տեսնել երբեմն, երբ դուրսը մոլեգին  
կատաղութեամբ ոռնում էր Բարձր—Հայք հրէշաւոր  
բորանը, անշուք և ազոտ լուսաւորած սենեակում,  
Թէյի սեղանի շուրջ, Ռոստոմն գրուցելիս երբեմն  
Մէջեց Կարին այցելող բժ. Յ. Չաւրեանի հետ: Ի՞նչ  
հակադիր բնասութիւններ և ինչպիսի սէր ու դուր-  
դուրանք միմեանց հանդէպ: Չաւրեանը՝ ջերմ հաւա-  
տացող գրիտոտեալ, խաչն ու աւետարանը միշտ մօ-  
տը, ողբերուում էր արեւստի քնքոյշ օրինակներով. իր  
անբաժան ընկերն էր Լոնդֆելտի «Հայալատա»-ն, որը,  
աւետարանից յետոյ, նրա ամենից զնաստած գըր-  
ւածքն էր: Ռոստոմը կրօնական հաւատ չունէր՝ սիրում  
էր հերոսական տիպեր, երգիծական էջեր, սուր հեղ-  
անք: Ժամերով կտորներ էին արտասանում կամ կար-  
դում իրենց հեղինակներից և չէին կշտանում:

Ռոստոմի հեղինակը հանրածանօթ էր: Այնպէս էր  
ձեռք առնում, որ յաճախ, շշմում էիր. լո՛ւրջ է ստում  
այս մարդը, թէ՛ կատակ անում: Եւ իբրև ու կատակը,  
չատ անգամ, այնպէս էին խառնում իրար. հեղինական  
արտայայտութեամբ, մի սուր խօսքով, մի գարճալի  
արագրով նա հասնում էր այնպիսի նպատակի, որի  
համար, որիչը երկար ճառեր պիտի արտասանէր և  
ահաջին ճիգ պիտի թախէր:

Ռոստոմի հեղինակը և Ռոստոմի ժպիտը, և խո-  
րունկ նայածը յոնքերի տակից—կարելի՞ է մոռանալ  
երբ և իցէ...

Յաճախ, Դանակցուութեան հիմնադիր երրորդու-  
ղութեան մասին ստում են, թէ՛ Քրիստափորը մար-  
մաշողուն է խելքի, Սիմօնը՝ խղճի և Ռոստոմը՝ գոր-  
ծի: Ըստ իս բոլորովին ճշիւտ չէ այս համեմատութիւնը.  
եթէ Քրիստափորին և Սիմօնին կարելի է բնորոշել  
միակողմանի յատկանիշներով, Ռոստոմը համաբարո-  
թիւնն է նրանց բոլոր յատկութիւններից — և՛ խելք,  
և՛ խղճ, և՛ գործ: Ռոստոմը ամբողջական անհատ  
էր — մարդ: Համբատի Մարդ էր նա՞, Հորացիո՞ խօս-  
քերը նրա մասին է աւսած — մարդ՝ մարդկային բոլոր  
յատկութիւններով: Եւ նրանք ովքեր բախտ են ունեցել

ճանաչելու նրան, վայելելու նրա հոգու բարիքները,  
նման բնորոշումը չեն համարի չափազանցութիւն:

Կարնում Ռոստոմը տարած էր իր աշխատանքով  
և ողևորած Երկրի ժողովրդի ցոյց տաւձ յառաջադե-  
մութեամբ: 1913թ. օգ. 11—ին նա դուռն էր. «Ժողո-  
վրդի վեճակը ընդհանրապէս լաւ է: Տնտեսակներ  
աւելի բարձրացել է: Ապահովութիւն կայ այն վայրե-  
րում, ուր ժողովրդի մօտ կան ինքնապաշտպանութեան  
միջոցներ: Մնունը, մաքրութիւնը ալքէ է ընկնում:  
Բաւական է սակ, որ ոչինչինքի թիւը գզալապէս պա-  
կասել է: Ոչիլը մեր երկրում, իմ կարծիքով, պիտի  
նկատել ամենալաւ չափանիշը տնտեսութեան բարեօր-  
ման»:

Այս տողերը գրւած են դէպի Ս. Կարապետ կատա-  
րած ուխտագնացութեան ժամանակ: Երկու տարի իրար  
յետեից, 1912 և 13—ին, բարձր դասարանի աշակերտ-  
ների և ուսուցիչների հետ Ռոստոմը ճամբորդութիւն  
էր կատարում դէպի Տարօն: Ուզում էր վերականգնել  
Նաւասարդեան տօները և Ս. Կարապետն ու Աշտիշար  
նորից զարձնել ազգային ուխտատեղի: Նոյն նամակում  
նա գրում էր. «Մի ժողովի մէջ, ուր ներկայ էին դա-  
նագան դաւաններից ընկերներ, որոշեց ամէն տարի  
վարդապետի օրը համախմբել Ս. Կարապետում:  
Պիտի աշխատեց վերականգնել Նաւասարդեան օրերը  
խաղերով, մրցումներով: Եթէ ուրիշ տեղեր էլ մար-  
մամարգական խմբեր կազմեն և ներկայանան հան-  
դէսին, տօնը առանձին փայլ կը ստանայ:

Մտադրութիւն կայ նաև այդ օրերը կազմել ու-  
սուցչական համագումարներ՝ ընդհանուր մի ուղղու-  
թիւն տալու համար դպրոցական գործին:

Բացի այդ, եթէ հնարաւոր լինի, պիտի կազմենք  
լնկերական հասարակութիւն՝ իրարու լաւ հասկանալու  
համար:

Յոյս ունենք առաջիկայ տարի ունենալ մեծ բազ-  
մութիւն Կովկասից և ուրիշ վայրերից: Գուցէ Պոլսից  
էլ ուզենան զալ...»

Պոլսի մասին Ռոստոմը հեղինակը ունէր միայն:

Ռոստոմի ճիգն էր Հայաստանը դարձնել համազ-  
գային ուշադրութեան կենտրոն: Նա դուռն էր Հ.Յ.Դ.  
եօթներորդ ընդհանուր ժողովն էլ դումարել Ս. Կա-  
րապետում. «Տեղի պիտի ունենայ առաջին ընդհանուր  
ժողովը երկրի մէջ, դուռն էր նոյն նամակում: Կաշ-  
խատենք, որ դա լինի պատմական մի ժողով: Միայն  
թէ պատգամաւորները ժամանակին հասնէին»: Սա-  
կայն, կառավարութիւնը արգելք եղաւ, և ժողովը  
դումարեց Պոլսում:

Պոլսի ընկերները պահանջում էին, որ Ռոստոմը  
թողնէ Կարինը և տեղափոխել Պոլիս: Ռոստոմը երկար  
ընդդիմութիւնից յետոյ, համաձայնել էր՝ պայման  
դնելով, որ իր տեղը գնայ Չաւրեանը, բայց վերջինիս  
մահից յետոյ, վճռական կերպով մերժեց հետանալ  
Երկրից:

Կուսակցական պատճառներից գատ կար և մի ու-  
րիշ հանգամանք, որ պահում էր նրան Կարնում: Պոլսի  
աղաները, տեսնելով Դանակցութեան ազդեցութեան  
ծաւալելը Կարնում, որոշել էին Սանասարեան վար-  
ժարանը փոխադրել Սեբաստիա՞ յուսարով, որ դրանով  
աշակերտութիւնը հեռու կը պահեն Դանակցութեան

«Քոյնից»։ Կարնի երիտասարդութիւնը ըմբոստացաւ այդ քայլի դէմ և որոշեց բանալ Նոր-Սանասարեան վարժարան։ Ռոստոմը այդ շարժման ոգին էր և Նոր-Սանասարեանի ղեկավարը։ Անասճան Լուսնոյ, զոճոճութիւն ու բարբառական հեղինակութիւն էր հարկաւոր գործը գլուխ բերկուն համար և Ռոստոմին յաջողեց կազմակերպել օրինակելի մի կրթական հիմնարկութիւն։ Մինչև Ամերիկա հասաւ նրա շունչը։ Կարնի Հայրենակցական Միութիւնը նպատակ ունէր զարգացնել «Հայրենիք»-ի պատկերազարդ բացառիկ թիւ հրատարակեց (№ 2) Նոր-Սանասարեանի օգտին։

1914 թ. ապրիլի Երևանի Ռոստոմի տնտեսական մէկի իրազորման տարին. Լ. Յ. Գալստիանցիական հերթական, ութերկուսը ընդհանուր ժողովը գումարեց Կարնուց։ Ամէն կողմից՝ Կովկասից, Պոլսից, Բալկաններէից, Սեպտեմբերից, Ամերիկայից, Քիւրթիսից և Հայաստանի գանաղան կողմերից սկսեցին հաւաքել պատգամաւորներ, որոնք ընդունուեցին խանդավառ հանդիսարարութեամբ։ Պէտք էր տեսնել Ռոստոմի ուրախութիւնը...

Աւաղ, այդ ուրախութիւնը երկար չտևեց։ Ընդհ. ժողովը դեռ չաւարտած՝ պայթեց համաշխարհային պատերազմը։ Չուլումի ամպեր էին կուտակուում և հայ ժողովուրդի գլխին. Ռոստոմը զգում էր իր արտակարգ դնազգով։ Թշնամին կրկնակի հետևում էր նրան։ Եւ միայն հրաշքով ազատուեց ձերբակալութիւնից ու սկսեց տնտեսական սկզբին, Տրապիզոնի վրայով, անցաւ արտասահման։ Եւրոպայում գերազոյն ճիւղ էր թափում՝ փրկելու համար հայ ժողովուրդը մահաւան վտանգից։

1915-ին, Սկանդինավեան թերակղզու վրայով, անցաւ Ռուսաստան և Կովկաս։

Կամաւորական շարժման յուզումնային օրերն էին։ Ռոստոմը սխալ էր համարում այդ շարժումը, բայց քանի որ սկսած էր, պէտք էր միևնույն պատուով դուրս գալ։ Եւ նա փարեց այդ գործին։ Աղպային Բիւրօ, Կարգապետի Մարմին, ուղղակիապես, կամաւորական խմբեր — ամէն տեղ էր։ Այնչիսց ազատուցուած Վասպուրականը։ Երբ գրաւեց Կարինը, շտապեց գնալ այնտեղ՝ փրկելու համար ինչ որ մնացել էր։ Կարողացաւ ազատել Սանասարեան գյուղոցի գոյթի որոշ մասը, զրքեր, նկարներ, ձեռագրեր... Կիսաւեր և անհայ Կարինը ճնշել տպաւորութիւն էր արել նրա վրա, որից երկար չէր կարողանում ազատուել։

Յանախ այցելում էր Քեռու և Անդրանիկի խմբերը։ Քեռուս սիրում էր եզրօր պէս։ Անդրանիկին աշխատում էր յետ կենդանի սխալ քայլերից, և Ռոստոմը միակ մարդն էր, որի սողն Անդրանիկի իրեն պահում էր նորահարսի պէս։

Կամաւորական զննքի լուծումը և ոտուական քաղաքականութեան փոփոխութիւնը դէպի հայերը Ռոստոմի առանց այն էլ դաւանացած սիրտը լեցնում էին սուր վշտով։ Նրա լայն ճակատը աւելի ևս ծածկուեց էր կնճիւղներով։ Ժայտոր, հանաքները պակասում էին։ Չարհուրդի տանջանք էր ապրում, առանց ցոյց տալու ուրիշներին, թէ ինքը տառապում է։ Արտաքին աշխարհի համար աշխատում էր մնալ նոյնը, բայց ներքը կիզել կրակը լափում էր հողին։ Կրակը աշխատում էր հանգսնել անկերթ ճամբորդութիւնների և աշխատանքի մէջ. նրա երկաթէ մարմինը միայն կարող

էր դիմանալ այդ օրերի տանջանքներին, նրա վտանգը եռանդին...

Բայց ահա վրա հասաւ ոռուսական յղարկութիւնը. 1917թ. փետր. 28-ին խորտակեց ցարական միակեանութիւնը։ Ամէն տեղ՝ անկարգութիւն խանդավառութիւն ու ցնծութիւն։ Անասճան ուրախութիւն և հայկական շրջաններում։ Տխուր է միայն Ռոստոմը. նրա զարմանալի բնազդը զգում է այն, ինչ որ շեն զգում սովորական մարդիկ. նոր աղէտներ, նոր փորձութիւններ հայ ժողովուրդի գլխին։

Սակայն, հարկաւոր է աշխատել, օգնել յեղափոխութեան ընծայած պատահելութիւններից՝ Հայաստանի և հայ ժողովուրդի իրաւունքներն ապահովելու համար։ Եւ Ռոստոմը գործում է անզազար. կուսակցական խորհրդակցութիւններ ու ժողովներ, հրապարակային հաւաք լիներ, ազգային և ընդհանուր յեղափոխական կազմակերպութիւնների նիստեր, ճամբորդութիւններ գաւառները, թիւրքահայ նւաճած վայրերը, ռազմաճակատը։ Նախագահում է Լ. Յ. Գ. Կովկասեան առաջին ազատ ժողովին, գլխաւորում է Սահմ. ժողովի գաշնակցական թեկնածուների ցանկը, ուղղուեցին է տալիս կուսակցական պրոպագանդան։ Այսօր էլ դեռ կենդանի են Ռայ. ժողովի բացման ճառում արտասանած նրա խօսքերը։

«Մեր կուսակցութիւնն իր վրա ունի այնպիսի պարտականութիւններ, որոնցից պատու են ուրիշ կուսակցութիւնները։ Մենք ունենք ազգովին վտանգելու հոգսը, և չենք կարող անտես անել այդ հանգամանքը։ Ամէն անգամ, որ Գաշնակցութիւնը ստիպուած է եղել դուրս գալ ազգովին գործելու, նրան մեղադրել են, թէ նա րուսական է, կղերական է։ Իսկ այսօր, երբ ընդհանուր հայրենիքի վտանգելու վայր կայ, մեզ մեղադրողները իրենք են դուրս եկել ազգովին գործելու։ Եւ կր կամենայի, որ Գաշնակցութիւնը ապագային էլ նոյնը լինի և պէտք եղած ժամանակ պաշտպանէր ազգի շահը, ինչպէս այդ անուճ են այսօր անգլիացի և Փրանսուցի ստեղծարարները»։\*)

Երբ Պետրոգրադի Բանուորական Պորհրդի և ընկերակցական կուսակցութիւնների կողմից հրապարակ դրեց, հարտութեան պայմանները մշակելու համար, ընկերակցական միջազգային համագումար հրաւիրելու հարցը, 1917 թ.ի աշնանը, Ռոստոմը շտապեց Պետրոգրադ։ Այստեղ նա, տեղական ընկերների և գործիչների աջակցութեամբ, դրեց հայկական պահանջները և ընդունելու տեց, որ Ռուսաստանի հարտութեան պայմաններից մէկն էլ լինելու է հայկական հարցի չուծումը։ Ապա անցաւ Եւրոպա՝ Սթոկհոլմի համագումարում Լ. Յ. Գաշնակցութիւնը ներկայացնելու ատարելութեամբ։ Այնտեղ մտերիմ կապեր հաստատեց միջազգային ընկերակցական պարագլուխներից շատերի հետ, նրանց ևս ընդունելու տեց հայկական պահանջները, ընդարձակ գեկուցում ներկայացրեց համագումարի կազմակերպիչ մարմնին և բոլոր շրջաններում, ուր պէտք էր, անցկացրեց Հայաստանի ազատութեան կազմակերպչը։

Սթոկհոլմի համագումարը, ինչպէս յայտնի է, ճախողեց։ Երբ Ռոստոմը վերադարձաւ Ռուսաստան,

\*) «Իրօշակ», 1926թ., № 8—10, էջ 236.

արդէն ամէն ինչ իրար էր խոտնուած. աւելի և աւելի տարածուեւմ էր քաղաքացիական երկիրաջինջ կռիւրը: Հաղորդակցութիւնը կողկառի հետ կտրուեւմ էր: Ի՞նչ էր կատարուեւմ թիֆլիսում, ի՞նչ կար երևանում, ի՞նչ վիճակի մէջ էր հայկական ուղղափառապետը — հակա-սական ու վնասեցնող յուրեր էին հանուում: Պետութ-տան, Մտակայում, Ռոստով — Նախիջևանում, Վրացիակաղաւթում հաւաքել էին արեւմտեան ճակատից հեղացած բարձրակարգ հայ սպաներ ու զինւորներ, որոնք ուղարկուեւմ էին անցնել՝ ոմանք իրենց տները, ուրիշներ հայկական դորամասերը մտնելու համար: Ռոստովը նրանց ուղղուեւմ էր դէպքի Բագու և ինչն էլ շտապուեւմ Բագու անցնելու համար, որ այստեղ կարելի կը լինի համախմբել մի դորաւոր բունուցք ու ճանա-պարհը բանալով՝ անցնել Ղարաբաղ ու երևան և յի-տոյ՝ աղբամասկաւ:

Ռոստովը մասնակցեց և Բագուի ազատամարտին, ամենատաքնապալի շրջանում: Այստեղ էլ նրա անձնա-կան հմայքը շատ բարձր էր, ո՛չ միայն ընկերների, այլ և հակառակորդների աչքին: Ստ.Շահումանը, որ մի ժամանակ միահնչան տէրն էր Բագուի, ակնածա-նով էր վերաբերուեւմ նրան և յաճախ հետևուեւմ էր նրա խորհուրդներին: Բագուի դէպքերի մասնակիցներից շատերն են ազատ և կարող են, պարտաւոր են զորի անունը Ռոստովի գործունէութիւնը և կատարած դերը Բագուում:

Պայքարի ողբերգական վիճակից յետոյ, Ռոս-տովը եղաւ վերջին հեղափոխութեան ֆազուրից: Հաղորաւոր դադիականներն ու պարտուած ժարտիկներն հետ դնուեւմ էր Պարսկաստան՝ քանի որ համար կանուութեան վեր-ջին բաժակը: Եւ այստեղ էլ նա հաւատարիմ մնաց իր բնաւորութեան, ոմանք ապա յիւստի վաղիկականների օգնութեան կազմակերպութեան գործին, յարաբերու-թեան մէջ մտաւ պարսից իշխանութիւնների և անգլիա-կան ներկայացուցիչների հետ, զեկուրումներ և հրա-հանդներ ուղարկեց արտասահման: Թուեւմ է թէ աւելի մուայլ, յուսահատուած վիճակի վեւար է երևակայել, բայց Ռոստովը այս պահանքներում էլ սրանց իր մտքի պայծառութիւնը, հոգու հատարակալութիւնը և հոգի կամքն ու կրողը: Բանի՛ ջանիները ընկճեցին, շղիճացան կեանքի ահաւոր հարուածներին: Ռոստովը միշտ մնաց առաջնորդի բարձր դիրքերում՝ հաւատա-ւոր և անյողուողը:

Հէնց որ թիւրք-գերմանական ոյժը խորտակեց և ճանապարհները դարձան անցանելի, Ռոստովը շտապեց կողկաւ: Նրան ջանուեւմ էր Հայաստանը՝ իր կախար-դական ուժով: Ի՞նչ էր կատարուեւմ այնտեղ: Հայաս-տանի Հանրապետութիւն էր ստեղծուեւմ — ի՞նչ էր այդ հանրապետութիւնը. ի՞նչ ձև էին ստացել հայ ազա-տագրութեան ռազմիկականները: Անկախ Հա-յաստան — Ռոստովը շտապուեւմ էր՝ կարօտով և անձկանօք...

Թիֆլիսում նրան սպասուեւմ էր մի նոր, սարսափելի հարած: Հազիւ ազատագրուած՝ Վրաստանն ու Հա-յաստանը պատերազմի էին բռնուել: Հոսում էր երկու

դրկից ու եղբայրական ժողովուրդների արեւը, այն ժամանակ, երբ թիֆլիսում և երևանում իշխանութեան ղրուի կանոնած էին ընկերակազմները: Հրէշաւոր ոմներ էր տեղի ունեցածը: Ռոստովն իր աչքերով տես-նուեւմ էր, թէ ինչպէս վրացի ոստիկանները հայերին խուժ-խուժ արքայ էին ուղարկուեւմ, թէ ինչպէս փողոցներում շուրջկանք էին կատարուեւմ հայրա-թեան համար, թէ ինչպէս հայ Վրաստանի մայրա-քաղաքում յայտարարուեւմ էր օրէջքից դուրս, ծաղրի և հայածանքի առարկայ: Նա տեսել էր թիւրքական բարքերն ու կարգերը. նոյնը և աւելին — այժմ տես-նուեւմ էր թիֆլիսում, ընկերակազմական կառավարութեան նախագահ, իր անձնական բարեկամ ժողովանիայի հրամանով...

Իժուար է տակ, թէ ի՞նչ էր կատարուեւմ Ռոստովի ներքը: Նրա հոգին, որ միշտ բաց էր ամենքի առջև, այդ օրերին փակուել էր ամուր: Նա յայտնապէս առ-նապուեւմ էր: Չեւ կարծուեւմ, թէ իր ամբողջ փոթորիկ-յոյգ կեանքում Ռոստովը այդքան դատն ապրումներ ունեցած լինէր: Պժգանքով դիմուեւմ էր իր երկկայ ընկերոջ՝ Ժողովանիային՝ ինչորեւ շամար, որ վերջ սրբի հայկական հայածանքներին: Դիմուեւմ էր ամէն կողմ և ամենքին, միայն թէ առաջը առնել գործուող հրէշաւոր ոմներին:

Յունարի սկզբին վերջ գտաւ պատերազմը: Թիֆ-լիս էր հասել Ղ. Հանրապետութեան Փարբիգ պատի-րակութիւնը: Սկսեցին մի շարք խորհրդակցութիւն-ներ, որոնց մասնակցուեւմ էր և Ռոստովը:

Խնամ և ցուրտ ձմեւ էր: Ռոստովը ման էր գալիս տանց վերաբերել, ծակ կոշիկներով: Ծանա-պարհին մտնել էր, և այժմ տաքութիւն ունէր: Կար-ծուեւմ էր՝ մայրախ է: Ժողովանիայից յետոյ, ուշ գիշե-րով, ոտքով էր վերադառնուեւմ տուն՝ ամէն անգամ կրելով մի ջանի կիսիստը տարածութիւն: Մի գիշեր էլ, ուշ, նոյնպէս ոտքով, վերադարձաւ Անարունանի մոտի ժողովից ու մտաւ անկողին: Աւ այլևս ոտքի չէլաւ:

Իձ չկական ջննութիւնը պարզեց, որ վարակուեւմ էր թմաւ սիֆիլիսով: Քիչ յետոյ սիֆիլ վերածուեց թոքերի բարքածան: Նոյն ժամանակ և միևնոյն հիւանդու-թեամբ պատկուեւմ էր Արամը երևանում:

Հիւանդութիւնը երկար՝ շտեկեց: 1919թ. յունւար 18-ի գիշերը Ռոստովը այնլու չկար: Մեծ սիրտը, որ յոգնել չգիտէր բնաւ, կանգ առաւ ընդմիջու:

Եւ ի՞նչ անողոք ճակատագիր: Ամբողջ կեանքը Ռոստովը ապրել էր Հայաստանով, Հայաստանի վա-ղախարով և մեռաւ այնլու չկար: Մեծ սիրտը, որ յոգնել չգիտէր բնաւ, կանգ առաւ ընդմիջու:

Եւ ո՞վ գիտէ, գուցէ մի խորհուրդ կար այդ ժա-նում մէջ. Քրիստափորի աչքերն էլ շտեկան Հայաստանի անկախութիւնը, Սիմոնին էլ: Չէ՛ որ Խարայի նախնորդներն էլ, որ իրենց ժողովուրդը ազատեցին եկպոսական գերութիւնից, շտեկան Աւետեաց Եր-կիրը...

Ս. ՎՐԱՅԵԱՆ

# ՌՈՍՏՈՄԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

1887 թւին Ռոստովը ուսանող էր Նոր-Ալեքսանդրիայի բարձրագոյն գիւղատնտեսական ճեմարանում, Վարչավայի մօտ:

Ալեքսանդր Բ. կայսեր սպանութիւնից յետոյ, 1881 թւականից սկսած Ռուսաստանում տիրում էր ուժեղ ուճակցիս: Ռուս յեղափոխական ամենամեծ կազմակերպութիւնը՝ «Նարոդնայա Վոլեա»-ն սոսկայի նարածներէր էր ենթարկել և համարեա բոլորովին ջախջախած էր: մնացել էին հատ ու կտոր անհասներ:

Նկատելով, որ բարձրագոյն դպրոցներէր ուսանողութիւնն է գլխաւորապէս երևում յեղափոխական ասպարէզում, կառավարութիւնը հաստատ ու վճռական կերպով այդ դպրոցները իր խիստ հսկողութեան և հակակշռի տակ էր դնում: Որպէսզի ուսանողները դիրութեամբ գտունեն հասարակութեան միւս խաւերից, նա մտցրեց համալսարաններում և միւս բարձրագոյն դպրոցներում յատուկ համադրեստներ, փայլուն կոճակներով, գեղեցիկ ուսնողներով, կազմակերպեց շատ ուժեղ տեսչութիւն՝ իր ստորաբաժիններով ամէն մի ֆակուլտէի ու մասնաճիւղի համար և ամէն մի դասարանի համար «պետեր» կոչւած հսկիչ «լրտես»ով: պետելը պաշտօն ունէր արձանագրելու դասախօսութեան ներկաների և բացակաների անունները և թէ ի՞նչ խօսակցութիւններ կամ երևոյթներ տեղի կունենային դասախօսութիւններից դուրս, կամ ընդմիջումներին, մանաւանդ երբ դասախօսը կասկածուում էր «ընդգիծագիր»-ների կողմնակցութեան մէջ:

1887 թւին Մոսկովայի համալսարանում իր խստութիւններով մեծ ճշակ էր ստացել տեսուչ Բրըզդալովը: Եւ առհասարակ տարեդասերի ամօնակատարութեան օրը, խուռն բազմութեան և, մանաւանդ, բարձրաստիճան պաշտօնէութեան առաջ ուսանող Սիւնեափսիկն սպտակեց այդ Բրըզդալովին: Սիւնեափսիկն աջոտրեց Սիբիր, բայց նրա պատարագ արթնացրեց հասարակութիւնը: Ռուսաստանի համարեա բոլոր համալսարաններում և բարձրագոյն դպրոցներում ցոյցեր կատարւեցին, Բրըզդալովը պաշտօնանկ եղաւ և փոխարինեց Իօրրովը, որ շատ սիրւած էր ուսանողներէր կողմից, թէև կառավարական ուժիքը մնաց նոյնը:

1887 թւին Ռոստովն էլ մասնակցում է այդ ցոյցերին, ձերբակալուում, արտաքսուում է Նոր-Ալեքսանդրիայի ճեմարանից և աքսորուում Կովկաս: Հազիւ մի տարի անցած, Արբահամեան անունով, նա յաջող քննութիւն է տալիս Մոսկուայի մօտ գտնւող Պետրով-պոսկա-Բարգուձովսկայա բարձրագոյն գիւղատնտեսական ճեմարանը և ընդունւում իբրև ուսանող:

1890-ի դարձանը Մոսկուայի ուսանողական կեանքը նորից է արկհոծուում: Պետրովսկայա ճեմարանում էլ կառավարութիւնը մտցրեց իր խիստ օրէնքներ ու հսկողութիւն և այժմ ուղբւմ էր հակակշռի տակ դնել նաև ճեմարանի «Կագեօնկա» կոչւած ուսանողական

հանրակացարանը, ուր ուսանողներէր կեանքն անցնում էր շատ աղատ և ուրախ: Նոր կառուցւած և վերջին յարմարութիւններով օժտւած երեք յարկանի տուն էր այդ, 200 սենեակներով, ուր ամսական 7-10 ռուբլիով կարելի էր ունենալ կոկիկ, մաքուր սենեակ, թէպէտ անպաճոյճ կահաւորւած, բայց ելքտրական լուսաւորութեամբ, մշտական տաք ու պաղ ջրով և կենտրոնական վառելիքով: Տան մէջ կար բաւական ընդարձակ ընդունելութեան սրահ դաշնամուրով: Երիտասարդ կեանքը ետում էր այնտեղ: Հանրակացարանում ծնունդ էին առնում յանդուգն ծրագիրներ ու բողոքներ այն ժամանակայ տիրապետող քաղաքական ընկացիայի այս կամ այն արտայայտութեան դէմ:

1890 թւի մարտ ամսին, ճեմարանի տեսչութիւնը որոշեց արգելել հանրակացարանում հաւաքոյթներ և երկոյթներ սարքելը՝ պատրակ բռնելով, թէ դրանք խանգարում են ուսանողներէր աշխատանքներին ու գրադումներին, և կարգադրեց նախ և առաջ ընդունելութեան սրահից հեռացնել դաշնամուրը: Բայց այդ բանը նրան չյաջողեց. ուսանողները ընդդիմացան, ցոյցեր կազմակերպեցին: Տեսչութիւնը հեռախօսով հրաւրեց ոստիկաններ: Ձերբակալւեցին 150-200 ուսանողներ և բանտարկւեցին Մոսկուայի «Բուտիրկի» հռչակաւոր բանտում:

Հետևելով օրը, մարտ 6-ին, Մոսկուայի համալսարանում տեղի պիտի ունենային համակրական ցոյցեր, այգում և նրա մօտի փողոցներում: Լաւ յիշում եմ. մենք, բժշկական ֆակիւլտէի առաջին յարանի ուսանողներս ընդառնութեան դասախօսութիւն ունէինք: Դասախօսում էր պրոֆ. Ստոյլտովը, մի լաւ և շատ պահանջկոտ դասախօս: Ամփիթատրոնի ընդարձակ սրահը լեցուն էր ուսանողներով: Ճիշտ ժամը 2-ին, վերի նստարաններից լսեց բարձրձայն հրաւէր. «Ժամանակ է հաւաքոյթի երթալը»: Բոլոր ուսանողները մէկ մարդու պէս սկսեցին դուրս գալ: Պրոֆեսորը ծամածուծութեան արաւ և ինքն էլ դուրս դնաց:

Բակում ուրիշ յարաններ և ֆակիւլտէներէր բազմաթիւ ուսանողներն արդէն հաւաքւել էին և աղմուկ ու ճառախօսութիւններն անում: Մենք շարժեցինք դէպի փողոցը, որը շրջապատւած էր բազմաթիւ ժանդարմներով, ձիաւոր ու հեռակակ ոստիկաններով, որոնք երկու կողմից սեղծուել էին մեր շարքերը: Այսպէս, 1900-ից աւելի ուսանողներ հաւաքորդւեցին «Մանեթ» կոչւած ձիերի մարզարանի հակայ սրահը և գիշերը փոխադրւեցին «Բուտիրկի» բանտը, ուր տեղաւորւեցին մեծ մեծ սենեակներում: Մենք այդ սենեակները մկրտեցինք «աուգիտորիա»ներ (յարան)՝ № 1, № 2 և այլն: Շուտով մեզ համակրող հասարակութիւնից ստացանք անո՞մ քանակութեամբ պատակ հաց, պանիր, կարագ, ժամբոն և ուրիշ չոր ուտելիքներ:

Երբ կշտացանք, սկսեց անվերջ վիճարանութիւններ, կատակներ, երգեցողութիւն: Գիշերը անցկացրինք շատ դուռ, երեկակայելով մեզ մէկ մէկ «Ներսէս»: պատկեցինք չոր տախտակների վրա և լաւ քնեցինք:

Ընդարձակ կենտրոնական բալի դիմացի կողմը տեղաւորուած էին Պետրովսկայա ճեմարանի ուսանողները: Երկրորդ օրը ցոյցերը համայնարանում և ուրիշ դպրոցներում կրկնեցին: Երեկոյան մեզ մօտ բերին մօտ 600 ուսանողներ, երրորդ օրը դարձեալ մօտ 400-500, յետոյ սկսեցին բերել մէկ-մէկ հողի: Մենք պատուհաններից դիտում էինք: Հայ ուսանողներից յիշում եմ Տիգր. Յովհաննիսեանին, Միքայէլ Սարգսեանին, Մուրադխանեանին, իսկ «պետրովցի»-ներին՝ Ա. Սահակեանին, Մ. Շաթիրեանին:

Մէկ էլ բարձր լսարանի իրաւաբան ուսանողներին մէկը, յետադային յայտնի փաստաբան Ռոմեանսկովսկին, ցոյց տւեց պատուհանից և ասաց՝ «Նայեցէ՛ք, ահա բերում են «պետրովցի» Արհամանին»:

Պատուհանից դուրս նայեցինք և տեսանք ամուր կազմած զով, միջնասակ, կլոր ու դժգոյն դէմքով, փոքրիկ մօրուքով մի ուսանող, որը հազել էր բաւական ճանցած դպրոցական համազգեստ:

Ապազայ Ռոստոմ էր:

Ինձ անձանօթ էր, բայց ճանաչողները բացատրեցին, որ նա կազմակերպիչ մարմնի մօտիկ աշխատակիցներից է: Նրան տեղաւորեցին առանձին սենեակում:

Անցան մի քանի տարիներ: Ես աւարտել էի ուսումս և մի քանի ընկերների հետ գնում էի Էջմիածինը տեսնելու: ԱզատաՓա կայարանում պատահեցի Ռոստոմին: Իր ասելով՝ գնում էր հայրենիք, Յղնա գիւղը: Երբ ես նրան անւանեցի «Արքամեան», շատ զարմացաւ և ծիծաղելով հարցրեց, թէ ո՞րտեղից եմ ճանաչում իրեն «Արքամեան» անունով: Ես պատմեցի մեր «Նաղիպումը» 1890 թւին «Բուտիրկի» բանտում:

Շատ վերջը արդէն նա պնտմեց ինձ, թէ Նոր Ալեքսանդրիայի ճեմարանից արտաքուստու պատճառով ստիպուած է եղել՝ Արքամեան մականունով գնալ Բաբու, կրկին քննութիւն տալ ռուսական դպրոցում,\*) որպէսզի կարողանայ ընդունուլ Պետրովսկայա գիւղատնտեսական ճեմարանը, և Մոսկուայում յայտնի էլ իրել «Արքամեան»:

Ինչպէս պատմում էին իր դասընկերները՝ ուսանող ժամանակ Ռոստոմը լուսկեաց երիտասարդ էր, քիչ էր խառնուած վիճարանութիւններին, տարած էր աւելի քաղաքական կեանքով, քան դասախօսութիւններով և գիտութիւնով: Թ. Տ. Դ.

## ԻՄ ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ ՌՈՍՏՈՄԻ ՀԵՏ

Ռոստոմին առաջին անգամ հանդիպեցի 1903-ի դարնանը՝ առանց իմանալու, որ նա Ռոստոմն է և առանց գաղափար ունենալու այն դերի մասին, որ նա կատարել էր և կատարում էր Իրանակցութեան մէջ: Սակայն, այդ առաջին հանդիպումն իսկ անձնջելի հետք թողեց ինձ վրա:

1901-ի վերջերից սկսած կուսակցական կեանքը եւ ու գեոի մէջ էր Ալեքստանում (Գանձակ): Կարծէք վերահաս փոթորիկների կանխազգացութեամբ՝ հայ ժողովուրդը խուճենքում դիմում էր դէպի Իրանակցութեան շարքերը թէ՛ քաղաքում և թէ՛ գիւղերում: 1903-ի սկզբին ես էլ մտայ Իրանակցութեան մէջ: Եւ որովհետեւ ազատ ժամանակ ունէի — սպասում էի աշնանը համայնարան գնալու համար — աչքի ընկնող մասնակցութիւն ունեցայ խմբերի կազմակերպութեան գործում և մինչև իսկ ընտրեցի Ալեքստանի Կոմիտէի անդամ:

Գարնան սկզբներին կոմիտէն պէտք է մարդ ուղարկէր Թիֆլիս՝ Բիւրօին դրամ տանելու և կազմակերպական գործերի մասին զեկուսում տալու համար: Եւ որովհետեւ, ինչպէս ասացի, ազատ ընկերը ես էի, այս պաշտօնը յանձնեցին ինձ՝ խօսիւ պատուիրելով: որ դրամը առանց Բիւրօի ստացականին ոչ ոքի չյանձնեմ:

Հաւ յիշում եմ, մի շաբաթ օր էր, երբ ես ներկայացայ կոմիտէի նամակով քօ. Տէր-Դաւթեանին, որի միջոցով յարաբերութիւն էինք պահում Բիւրօի հետ — և բացատրեցի Թիֆլիս գալուս նպատակը: Նա մի տոմարով ճամբեց ինձ Կովկասեան Գիւղատնտեսական Միութեան գրասենեակներից մէկը, ուր ինձ ընդունեց վերին աստիճանի բարեհամբուրդ դէմքով, թիկնեղ և բարձրահասակ — չդիտեմ ինչու նա ինձ բարձրահասակ երևաց — մի անձնաւորութիւն:

Կարգալով ընկ. Տէր-Դաւթեանի տոմար և Ալեքստանի կոմիտէի նամակը՝ անձանօթ անձնաւորութիւն նախ ուշադրութեամբ լսեց իմ զեկուցումը և ապա սկսեց ինձ հարց ու փորձ անել մեր կազմակերպական գործերի մասին այնպիսի մտերմութեամբ և հետաքրքրութեամբ, ինչպէս որ կանէր մի ծնող՝ հետու օտարութեան մէջ գտնուող իր զաւակների մասին: Երբ բոլոր հարցերը սպասեցին, ես նրա առաջ դրի բերածս դրամը:

- Հազար բուրլո՞ք է:
- Այո՛:

Զրուցակիցս, որ առաջին անգամն էր ինձ տեսնում

\*) Ռոստոմը շատ աւժեղ էր մաքեմադիկայից և Բնութիւնները անց է կացնել իրաւ փայլում կերպով:

և անունս իսկ չգիտէր, առանց համբերու դրամք ծոցի գրպանը դրաւ: Նրա այս վարժունքի մէջ այնքան վրտասահութիւն կար իմ հանդէպ, որ ես ամաչելի ստացականի մասին խօսք անել:

Արդեստանի Կոմիտէն, ի հարկէ, գորս դու պատւիրեցիր, յանդիմանեց ինձ, որ ստացադիր չէի պահանջել: Ոմանք սկսեցին մինչև անգամ կասկած յայտնել, թէ ես մի խարեբայի գոհ եմ դնացել, որովհետև ասում էին նոքա. «Իհրօսն առանց ստացական տարու երբեք դրամ չէ ընդունում»: Կասկածներն այժ էին առնում մանաւանդ այն պատճառով, որ «խարեբան» կարիք էլ չէր գրացել դումարն ստուգելու. ո՞վ է համրում զգտածո դրամը...

Մի քանի օրից անդորրադիրը ստացեց, ի հարկէ, և կասկածները փարատուցին. սակայն, այն ընկերական վտահուտքինը, որ ես առաջին անգամ տեսայ մի անձանօթ անձնաւորութեան կողմից դէպի մի ուրիշ անձանօթ անձնաւորութիւն՝ շատ խորունկ տպաւորութիւն թողցւոյ զրաս, թէ և տարիներ պիտի անցնէին, որպէսզի ես հասկնայի, որ այդ վտահուտքինը մեր զաւանգական ընկերակախութեան հիմնական խարխիւնրից մէկն է կազմում...

\*\*\*

Երկրորդ հանդիպումս եղաւ Վիէննայի Բնդհանուր Ժողովին (1907), որին մասնակցում էի իբրև Եւրոպայի զաւանգական ուսանողութեան պատգամաւոր: Այդ ժամանակ ես այլևս թօթովախօս պատանի չէի, այլ «հասուն» երիտասարդ և մանաւանդ յաւակնութիւններ ունեցող զաւանգական: Զէ՞ որ ես մի քանի հասարակադիտական գրքեր էի կարդացել և մի երկու շաբթ յօղած գրել կողմակասան մեր թերթերում ընկերվարութեան և բանւորական շարժումների մասին: Եւ մի՞թէ այսքանը բաւական չէր, որպէսզի ես ինձ իրաւունք համարէի «ըննադատական» վերաբերումը ունենալու դէպ իրաւանցութեան գործունէութիւնն ընդհանրապէս և դէպի նրա անդրիովաստան գործունէութիւնը մասնաւորապէս...

Պէտք է ասել, որ այս յաւակնութիւններով ես մենակ չէի ընդհանուր ժողովում. կային ուրիշ երեք հոգի էլ — Ա. Ծահաթիւնեան, Ս. Վրացիան և Մաշուբեան: Չորս միասին կազմում էինք ընդհանուր Ժողովի «անջատական» հատւածը: Մեր նպատակն էր անջատել իրարից թիւրքահայ և ուսասնայ դատերը, որոնցից առաջինի գլուխը պէտք է կանգնէր Հին, «ազգային Դաշնակցութիւնը», իսկ երկրորդի համար ստեղծւելու էր մի «Նոր Դաշնակցութիւն», զորս ընկերվարական ծրարով, որ իր դրօշակի տակ պէտք է համախմբէր Հին Դաշնակցութեան շարքերում գտնուող աշխատաւորական և ընկերվարական տարրերին: Այս տեսակէտները պաշտպանեցրու համար, Ծահաթիւնեանը և ես պարտաւոր էինք զեկուզումներ, որոնք մասին յայտարարւած էր ընդհ. Ժողովի ղեկանին և, բացի սրանցից, Դաշնակցութեան ծրարի մի-մի նախադիմ՝ դուռ ընկերվարական սկզբունքներով կազմած, որ պիտի ներկայացնէինք ընդհ. Ժողովի հաւանութեանը այն դէպքում, եթէ երկու դատերի անջատման առա-

ջարկը չանցնէր: Մեր մտածումն այն էր, որ եթէ այս նախադիմերից մէկն ու մէկն անցնէր, երկու դատերի անջատումն ինքն իրեն տեղի կունենար կարճ ժամանակի ընթացքում:

Չախտակցական անջատականների հակոտնեան էր կազմում ամերիկահայ Թովմաս Ջալալեանի խմբակը, որ նոյնպէս հետապնդում էր ուսասնայ և թիւրքահայ դատերի անջատումը, բայց այն իմաստով, որ առաջինը իսպառ դուրս ձգէր Դաշնակցութեան գործունէութեան շրջանակից և Դաշնակցութիւնը մնա մի-միայն թիւրքահայ դատով գրադուց մի համազգային կազմակերպութիւն, առանց ո՛րեւէ ընկերվարական երանգաւորման: Այս խմբակին էին պատկանում Սարգիս Միրնասեանը, Վառժանը, Սամփոն (Մարտիրոս Մարգարեան) և մեր Հին մարտիկները մեծամասնութիւնը: Ամերիկահայ երկրորդ պատգամաւորը — Վահագն Տաթևեանը նոյնպէս այս տեսակէտներով էր ճամբայ ելել ընդհ. Ժողովին մասնակցելու համար: Սակայն, Անդրիովկաում, մեր Ժողովրդի վիճակին և կազմակերպութեան տրամադրութիւններին ծանօթալուց յետո՛յ՝ փոխել էր իր կարծիքները, կամ, ինչպէ՞ս Ջալալեանն էր դառնացած ասում, «զաւաճանել էր իր սկզբունքներին»:

Յիշեալ երկու հատածների միջև ընկած կենտրոնի հատածը չէր ուզում խօսք անգամ լսել ուսասնայ և թիւրքահայ դատերի անջատման մասին: Նրա համար կար մի հատիկ դատ, որ կըլուծւէ էր հայկական դատ և մի հատիկ Դաշնակցութիւն, որ պէտք է վարէր այդ դատը թէ՛ Տաճարաստանում, թէ՛ Խուսափաստանում և թէ՛ մինչև իսկ Պարսկաստանում: Գանակով և որակով այս կենտրոնական հատածը ամենաուժեղն էր, որովհետև նրա մէջ էին գտնուում կուսակցութեան բոլոր անանի դէմքերը — Ռոստոմ, Չաւրեան, Արամ, Ակնունի, Վարանդեան, Համօ, Չարաբեան, Վահագն, Սկաւռ, Մուրատ, Ահարոնեան, Թովգեան ևն, սակայն, նա էլ իր հերթին բաժանւած էր երկու խմբակցութեան: Մէկը, համեմատաբար մեծը, անհրաժեշտ էր գտնուում կուսակցութեան հիմնական ծրարը յարմարեցնել ժամանակակից ընկերվարութեան պահանջներին, որպէսզի կարելի լինէր ներդաշնակութիւն մտցնել հայկական դատի երեք ճիւղերի միջև, իսկ միւսը, փոքրը, պնդում էր, որ հիմնական ծրարը չպէտք էր փոխել և, յամենայն դէպս, նրա ընկերվարական տրամադրութիւնները չպէտք էր խորացնել, որպէսզի կուսակցութեան ազգային նկարագիրն անաղարտ մնայ:

Այս զլխաւոր հատածներից զատ՝ կային և առանձին խմբաւորումներ գանապան կազմակերպական և դատական հարցերի շուրջը ինչպէ՞ս, Պուրի մահափորձը, միհրանական շարժումը, մարտական ուժերի վերակազմութիւնն ու դասաւորութիւնը, կուսակցական ուժերի բաշխումն և այլն: Վերջապէս, պակաս չէին ընդհ. Ժողովում նաև անձնական դժկամակութիւններ և մինչև իսկ ներհակութիւններ, որոնք յաճախ պիտի դժարացնէին իրարահակացողութիւնը այս կամ այն հարցի շուրջը:

Ընդհանուր Ժողովը իր հակոտնեայ և տարածելով տրամադրութիւններով նմանում էր մի միացող հրաբուխի, որ ամէն վայրկեան կարող էր պայթել՝ ջարդ ու փշուր անելով իր պատեանը, որ Դաշնակցութիւն էր



կուշում: Եւ յամախախի պոսիթուանները, որոնք տեղի էին ունենում մանր միջազգայնի առթիւ, օրհասական վարձանի նախանշաններն էին կրում իրենց մէջ:

Սակայն, այդ ստանդարտի ժողովից Դաշնակցութիւնը դուրս եկաւ վերջնականապէս կազդուրած իր ձախակողմեան և անկողմեան հիւանդութիւններէ, դուրս եկաւ մի ծրարողով, որից լաւը զժամք էր եւ-թաղբէլ և մի պողպատեայ, միաժամ կարճակերպութեամբ, որպիսին հայ ժողովուրդը իր պետական կեանքի լուսագոյն օրերին իսկ չէր տեսել:

Ինչո՞ւմ պէտք է բացատրել այս հարազը: Ես բացատրում եմ Երկու հանդամանքով. նախ նրանով, որ Դաշնակցութեան անողջ բնազդը վերջին պահին միշտ յաղթահարում է իր ներսի ստղանայնեքին և այդ՝ որ ընդհանուր ժողովում մի Ռուսում կար, որ կարողացաւ ժողովականներէ մէջ հրահրել այդ անողջ բնազդը և նրան սիրական դարձնել միացած բոլոր նկատումներէ վրա:

Պաշտօնական նիստերի ժամանակ Ռուսումը քիչ էր երևում. աւելի ևս քիչ արտայայտում այս կամ այն հարցի քննութեան ժամանակ: Նրա աշխատանքները սկսւում էին նիստերից ապա ժամերին և դիւնները: Բացի Սաֆօրց, որի հետ չէր խօսում մի որոշ աթորքի պատճառով, նրան կարելի էր տեսնել ամենքի հետ և ամենքի մաս: Զաշում էր Ձէլալեանի, Ս. Մինասեանի և իրենց համախոհների հետ, ընթերցում Անդրանիկի, Մուրատի, Սիպուհի և միւս մարտիկների հետ, գիշերներին անցնում մեզ մօտ կամ ուրիշների մօտ: Այստեղ մի թիւրիմացութիւն էր պարզում, այնտեղ մի միտք լուսարանում, երբ որք անցը հաշտութիւն առաջ բերում ներհակած ընկերների միջև և այսպէս անվերջ: Առանց որևէ բունպարտիկ ճիղի, առանց որևէ արհեստականութեան, նա ամէն մէկի հետ խօսում էր նրան հակահանալի լեզուով, որովհետև ամենքի հետ էլ հնդով հարապատ էր. ամենքին նա ի՞նչ էր համարում և իրեն՝ ամենքինը:

Արամը զժգուհ էր Վանի Իշխանից զանապան պատճառներով: Ինքը Ռուսումը էլ զժգուհ էր Իշխանից: Բայց պէտք էր տեսնել, թէ նա Արամի հետ ինչպիսի էր խօսում Իշխանի մասին: Կարծում էք նւարկեցնո՞ւմ էր նրա թերութիւնները կամ դերպանահաստում՝ նրա արժանիքները: Բնա՛ւ: Ինքը Արամն էլ — դրական թէ բացասական — նոյն գնահատութիւնն էր տալիս Իշխանին, ինչ որ Ռուսումը: Բայց արդիւնքն այն էր, որ այն խօսակցութիւնից յետոյ Արամն այլ ևս այն ցաւալի վերաբերմունքը չուներ զէպի Իշխանը ինչ որ առաջ: Մի ուրիշ օրինակ, որի մասին յիշողութիւնս աւելի վառ է:

Քննութեան էր դրած թիւրքահայ և ուսանայ դատերի փոխյարարբերութեան խնդիրը, որին արտարովի սպասում էինք «ձախակողմեաններս»: Առաջին զեկուցանողը ևս էի: Զեկուցեման առաջին մասում պարզաբանւած էր, որ թիւրքահայ դատը առարկայօրէն անհրաժեշտ և ենթակայօրէն ներխուժան դատ է ամէն մի հայ մարդու համար (կարծեմ այն ժամանակ հայ խօսքը շատացի): Իսկ երկուրդ մասում՝ որ մի կուսակցութիւն չի կարող այդ դատը ուսանայ դատի հետ միասին վարել, որովհետև եթէ այդ կուսակցութիւնը ընկերավարական ծրարքի որդեգրի՞ նա կը

խրանցնի թիւրքահայ դատից ազգայնական տարբերին, որոնց օգնութիւնը անհրաժեշտ է նրան. իսկ եթէ ընկերավարական ծրարքից վազ անցնի՞ չի կարող ուսանայ զանդամներն համախմբել իր դրօշի տակ: Հետևաբար, այդ երկու դատերը պէտք է անջատել իրարից: Երբ ևս զեկուցեման առաջին մասի ընթերցումն աւարտեցի՞ Ռուսումը իրեն յատուկ շարահանք ժողովով ընդմիջեց:

— Արշալէ, լաւ է, որ դրանով էլ վերջացնես զեկուցումդ:

Ես շարունակեցի, ի հարկէ, ընթերցումը մինչև վերջը: Բայց չգիտեմ ինչու, մտքս մէջ սպաւորեց, թէ լաւ կը լինէր, որ Ռուսումի սասած տեղը կանգ առնէի:

Չերթը հասաւ Ա. Ծախաթունեանին: Նա էլ էր մեկնում այն տեսակէտից, որ թիւրքահայ դատը մի ներխուժան դրօշ է, որի հետքում ոչ մի դրօշոցութիւն մեծ չպէտք է համարի հայ ժողովուրդը: Բայց և այնպէս, աւելի՛ ևս կուտ տրամաբանութեամբ և կուտ փաստերով, յանդուս էր այն եզրակացութեան, թէ երկու դատերը պէտք էր անջատել իրարից: Զեկուցեման ժամանակ այս և այն կողմերից շարունակ ընդմիջում էին Ծախաթունեանին և ջրայնացնում: Նա երկու անգամ ծալեց իր տետրակը և պատրաստում էր հետանալ որահից: Սակայն, Ռուսումի պարուս միջնատութեան շնորհիւ, ժողովականները լսեցին և Աւետիքը վերջնացրեց իր զեկուցումը:

— Однако чортъ не такъ страшенъ, какъ его малюютъ (Բայց և այնպէս ստատանս այնպէս սարափելի չէ, ինչպէս նրան նկարում են) սապ Ռուսումը իս ծանօթ ժողովով, մօտենալով Ծախաթունեանին և մեւքը մտերմօրէն զննելով նրա ուսին: Ուրում էր ասել, որ նրա զեկուցումից դատելով՝ անհնարին չէր իբրահակացողութեան կար դառնի:

— Мы увидимъ, страшень, или не страшень (Կը տեսնենք սարափելի է, թէ սարափելի չէ), սպաւնազին վրա բերեց Ծախաթունեանը, որ բաւական յուզւած էր ժողովականների վերաբերմունքից:

Նոյն գիշեր Ռուսումը Ծախաթունեանի սենեակումն էր, ուր հուռաբեւ էինք «ձախակողմեաններս»: Պօսեցինք Երկա՛ր, Երկա՛ր, գրեթէ մինչև լուսաբաց: Նիւթն էր երկու դատերի միացման կամ անջատման հարցը: Ձեմ յիշում եմ ի՛նչ խօսեցինք: Այնպէս էլ չեմ սպաւորւած, թէ Ռուսումը փաստե՞ր բերեց ի պաշտպանութիւն երկու դատերի միացման, որոնք մեզ անծանօթ էին, կամ աւելի՛ զօրեղ տրամաբանութեամբ հերքեց այն առարկութիւնները, որ մեւքը բերում էինք միացման դէմ: Սակայն, Երբ նա բարեի գիշեր» սապ և հեռացաւ, ամենքս էլ զգացինք, որ մեր զիմաւարական կրթից հետք չէր մնացել...

— Լաւ, այս կէտում էլ կը զիջենք: Թող երկու դատերը միացած մնան: Սակայն, ծրարքի խնդրում ոչ մի զիջում: Կամ մեր նախազիծը կրնուունեն, կամ կը հեռանանք ժողովից:

Այսպէս ամփոփեց Ծախաթունեանը այդ գիշերայն մեր խօսակցութեան եզրակացութիւնը:

Հասաւ և ծրարքի քննութեան օրը: Նախորդ գիշերը Ռուսումը նորից մեզ հետ էր, այս անգամ Մաշուրեանի սենեակում: Նա հետք բերել էր Թիֆլիսի ընկերների

279-2090

մասնակցութեամբ իր կազմած նախադիւր և ուզում էր իմանալ, թէ մենք ի՞նչ դիտողութիւն ունէինք նրա դէմ: Մենք առաջուց արդէն ուսումնասիրել էինք այդ նախադիւր և ձեակերպել մեր դիտողութիւնները, որ մէկիկ-մէկիկ շարեցից Ռոստոմի առաջ: Նա սկսեց պատասխանել մեր դիտողութիւններին, բայց յորանջելով, առանց հաստի և առանց խորամարտ նրանց մէջ: Երևում էր, որ նրան իր նախազօծի «թերութիւնները» չէին դրադեցնում և ոչ էլ մեր դիտողութիւնները, որոնցից մի քանիսը նա պատրաստ էր առանց այլ-և-այլութեան նկատի առնել, որովհետև իր գրածի և մեր ասածի մէջ բառերի տարբերութիւններ էր միայն տեսնում, իսկ բառերին նա այն նշանակութիւնը չէր տալիս ինչ որ մենք:

Ռոստոմի բացատրութիւնները մեզ չհամոզեցին. բայց, չգիտեմ ինչու, մենք պատրաստակամութեան յայտնեցինք մի դիջում անելու: Առաջ մենք պահանջում էինք, որ ի փոխարինութիւն մեր արած բոլոր «գիջումներին», Ռոստոմը յետ վերցնի իր նախադիւր և միայն Շահխաթունեանի նախադիւրը\*) ներկայացնէ ժողովին: Մակայն, այժմ համաձայն էինք, որ երկու նախադիւրն էլ ներկայացուի ժողովին և ընտրութիւնը նրան թողուի:

Ըստ երևույթին հէնց սա էր Ռոստոմի մասնագրութեան պատճառը և նա մեզ ձուլ էր կիկլ դիվաւորապէս այն նպատակով, որպէսզի ընդհանուր ժողովին երկու նախադիւր ներկայացնելու առաջն առնի: Եւ նա սկսեց հանգամանօրէն բացատրել երկու նախադիւր ներկայացնելու անպատճառութիւնները: Ասաց, որ ժողովն անշուշտ կընդունի իր նախադիւր և կը մերժէ մերը, բայց ինքը վախճանում է, որ դա վատ կազդի մեզ վրա և մանաւանդ Կովկասում և արտասահմանում գտնւած այն երիտասարդներին վրա, որոնք դեռ ևս տատանւում են Դաշնակցութեան և անջատականութեան միջև: Անկայցեցի նաև, որ այս մտահոգութիւնն այնքան մեծ էր իր մէջ, որ, մեր յամառուութեան դէպքում, ինքը կը զերադասէր իր նախադիւր յետ վերցնել, սակայն, երկիւղ էր կրում, թէ դա մեծ դժգոհութիւն կը պատճառի թիֆլիս միացած ընկերներին, որոնք աչխտել էին այդ նախադիւր վրա. երկիւղ էր կրում նա՛և, որ մեր նախադիւր ժողովում կարող էր պաշտպան մեծամասնութիւն չհասնել և մինչև անգամ տապալել մեծ դժարութիւնների մասնելով կուսակցութիւնը ևն ևն:

Ռոստոմը խօսում էր երկար և ջերմօրէն, խօսում էր ոչ թէ լեզուով, այլ սրտով: Եւ մենք զգում էինք, խորապէս զգում, որ Ռոստոմը մեր մատերով չէր շահազգողւած, քանի որ առանց այդ մատերի էլ նրա նախազօծի յարողութիւնն սպահովւած էր — այլ մեր անձնատրութիւններով: Նա գիտէր այն, ինչ որ մենք դեռ ևս չգիտէինք. դէպք, որ ցնորք է Դաշնակցու-

թիւնից դուրս մի նոր Դաշնակցութիւն առաջ բերել հայ իրականութեան մէջ, և չէր ուզում, որ մենք, այդ ցնորքի յետևից ընկնելով, ապարդիւն վատնէինք մեր ուժերը, և ազգային-քաղաքական կենսաբից դուրս շարունակէինք—ինչպէս որ յետագային դուրս շարունակեցին անջատականութեան մէջ յամառած մեր միւս ընկերները: Նրա այս անկեղծ սրտցաւութիւնը կապում կապանում էր մեր լեզուները, և, խօսակցութեան վերջին, մեր սկզբնական «ուժեղ առարկութիւնները» դարձել էին անճարակ թրթրվանքեր...

Երբ Ռոստոմը, սովորական «բարի գիշեր»-ի տեղ կատակելով «բարի լոյս» ասելով — արդէն լուսացել էր — հեռացաւ՝ Շահխաթունեանը դարձաւ դէպի մեզ՝ իր ներքին յուզումը մատնող կատակախառն հարցումով.

— Ես, սրա՛ն ինչ կասէք: Ի՞նչ պէտք է ասէինք. «Դաշնակցութեան տողը ընազդը» հրահրւած էր մեր մէջ և տիրականօրէն իշխում էր մեր մտքերի և սրտերի վրա: Նրա ճնշման տակ մենք պէտք է մեր վերջին իրմտդրական դիրքն էլ լքէինք...

Որ Ռոստոմը աւելի՛ ևս մեծ եռանդով այս կարգի աշխատանքներ էր կատարում ընդհանուր ժողովի «աջակողմեան» շրջանակներում — այդ մենք կասկած էինք այն հանգամանքից, որ նրա պատ ժամերի մեծ մասը նրանց հետ էին անցնում: Իայց թէ նա ի՞նչ ձևով էր նրանց հետ խօսում — չգիտէինք: Մեր մէջ կար մէկը — Գրիգոր Շահխաթունեան (այժմ վարդապետ), որ իրրե ուսանող և անձնական ընկեր միշտ մեզ հետ էր լինում, իսկ իրրե հարստակողմեանը՝ «նրանց» հետ: Նա էլ, իրեն յատուկ հաւատարմութեամբ, ո՛չ նրանց ձուլ տեսածն էր մեզ պատմում և ո՛չ էլ մեզ ձուլ տեսածը՝ նրանց: Մակայն, այն հանպատճառ, որ Ջէլալեանն ու իր համախոհները վերջի վերջոյ ոչ միայն ընդունեցին երկու դատերի միացումը, այլ և համաձայնեցին, որ այդ միացեալ հայկական դատը վարող Դաշնակցութիւնը մի ընդհանուր ընկերվարական ծրագիր ունենայ և ընկերվարական Միջազգայինին անդամագրուի՝ այս փաստն ինքնին կարող է դադարաբար տալ, թէ Ռոստոմը նրանց ձուլ էր դեր էր կատարում և ինչպէ՛ս էր կատարում...

Ռոստոմը Դաշնակցութեան միացնող-շաղկապող ազն էր վիշննայի ընդհանուր ժողովում: Մի ոգի, որ ոչ թէ սաւառնում էր այդ ժողովի վրա, այլ թափանցում նրա ներքին բոլոր ծաղիկները և լեցնում բոլոր ճեղքածները:

Այդ ժամանակից սկսած, ամէն անգամ, երբ մեր կուսակցութիւնը կամ նրա որևէ հատուածը ներքին դժարութիւնների էր մատնւում, և երբ դաշնակցական ղեկավարութեան մէջ տարամբ տրամաբարութիւնները զերակշռում էին իրարահակացողութեան ոգուն՝ առաջին միտքը, որ ծագում էր իմ մէջ, միշտ այս էր.

— Ա՛խ, եթէ Ռոստոմն այստեղ լինէր...

Ա. ԶԱՄԱԼԵԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

\*) Շահխաթունեանը մտցրել էր իր նախազօծի մէջ իմ առաջարկած ուղղումները, արպէտի Խ Խրատարում իմ կազմած նախազօծի, որ, ի դէպ ասած, աւելի՛ դազմատիկ էր և անյարգ, քան նրանք:

# ՅՈՒՅԵՐ ՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ

Պուլկարահայ գաղութը, կամ առանձնապէս Զ. Յ. Դաշնակցութեան մարմինները յաճախ առիթը ունեցած են Ռոստոմէն առաջ և անկէ յետոյ ճանչնալու դաշնակցական գործիչներ, որոնք բոլորն ալ, անուշտ, ձգած են մտքեր, գեղեցիկ յիշատակներ, որևորոշ ու շինիչ տպաւորութիւններ՝ դաշնակցական զանգաւածներու և պուլկարահայ հասարակութեան մէջ, բայց անոնցմէ ո՛չ մէկը չէ թողած այնքան խորունկ հետքեր և չէ բացած անջնջելի ակօս մը՝ հայ երիտասարդութեան մտքին ու սրտին վրա, որքան Ռոստոմը: Ահա թէ ո՛ր պէտք է փնտռել գործիչին մեծութիւնը:



ՌՈՍՏՈՄԸ ԵՒ ՏԻՌՈՒՆԸ

1899 թի կէսին Ռոստոմ առաջին անգամ երևցաւ Ֆիլիպէի մէջ, ուր և հաստատուեցաւ:

Այդ ժամանակամիջոցին հայ ժողովուրդը կապերը բեկցեցաւ չըջնալ մը:

Օսմանեան պանքայի ցոյցէն յետոյ առաջ եկած կտորածը և անոր անմիջական հետեանք եղող արտադաջը, իրենց սարսաղագեցիկ պատկերներով և մանրամասնութիւններով, հոգեպէս և բարոյապէս ընկճած, խռոված էին հայ ժողովուրդի խոշոր մէկ սոսիսի յեղափոխական տրամադրութիւնները: Անուշտ, այս ըջնանք կարելի էր համարել անցողիկ բնոյթ ունեցող ընդհանրական երևոյթ մը ժողովրդական զանգաւածներու համար: Երբ, սակայն, կաւեցնենք ասոր վրա Արփիա-

րի, Զօպանեանի և արբանեակներու «Մարա»-ի, «Նոր Կիանք»-ի և «Անահիտ»-ի միջոցաւ ըրած հակաիզափոխական թունաւոր քարոզներն ու մտքերը, կը պարզուի, որ ժողովուրդը այս ուղղութեամբ դէպի բարոյական սնանկութիւն կառաջնորդէր՝ անոր մէջէն փրցնել նետելով այն ամենը, ինչ որ սուրբ, նւիրական ու յեղափոխական էին, վերջապէս, ազգային իտէալներու և բաղձանքներու իրականացման համար ամեննչ հօգը ազդակներն ու յիմարաններն էին: Եւ որ ամեննչ պժղալին է, այս բոլոր հակաիզափոխական մտքերը, բանաւոր ու գրաւոր կերպով պրոպագանտ կըլլային՝ արտասահմանի հայութեան՝ տանկահայ անւանի մտաւորականներու կողմէ « յեղափոխական » մակդիրի մտակ. ինչ որ շատ աւելի վտանգաւոր էր, որովհետև աւելի դժուրութեամբ կըրար խաբուի միամիտ և արդէն յուսալքած ժողովուրդ մը:

Ճիշտ է, «Դրօշակ»-ի կողքին «շարժում» ևս կը ծաղկէր, խիստ կերպով կը մաքաւէր այդ հիւանդոտ, սպանիչ արշաւանքին, միջոցառումն դէմ, բայց պէտք էր ժողովրդականացնել զայն: Անհրաժեշտ էր կազմակերպել հո՞ծ բաղձութիւններ յեղափոխութեան դրօշի տակ:

Այսպիսի փոխանցման չըջնալ մը, Ռոստոմի մուտքը Պուլկարիս կարևոր առաքելութիւն մըն էր:

Պետք էր բարձրացնել ժողովուրդի ընկճած տրամադրութիւնները, կրթելով նոր սերունդ յեղափոխական և ազգային առողջ դաստիարակութեամբ: Մամուլի միջոցաւ մերկայարանաց ընել հակառակորդի բոլոր ստուքիւնները և բունաւոր արտապանութիւնը: Ահա Ռոստոմի նշանաբանը, որուն իսկապէս կառած մնաց և որը հետագայից ու գործարկից, ինչպէս պիտի գործադրէր ճարտարապետ մը, թողթի վրա պատրաստած էր յատակագիծը շինութեան պահուն:

Այս վսեմ նպատակին հասնելու համար, Ռոստոմ գտած էր հետևեալ միջոցները. 1. Ունենալ սեփական մամուլ, 2. բանավ մտնաւոր վարժարան, 3. զարկ տալ գեղարեստին, 4. կազմել դաշնակցական երիտասարդներու խումբեր, 5. պուլկարահայութիւնը սիրցնել պուլկար ժողովուրդին և կառավարութեան՝ ամբացնելով անոր դիրքը գանձազան տնտեսական ու քաղաքական ոտնձգութիւններու դէմ:

1. Մամուլ. «Շարժում» թերթը արդէն կը հրատարակէր Վառնայի մէջ, որուն կատարած դերի մասին յիշեցի արդէն: Երբ «Շարժում» սայթաքեցաւ իր ուղղութիւնէն և նպատակէն, կորսնցունելով գոյութեան իրաւունքը, լույս տեսաւ «Ռազմիկ» Ֆիլիպէի մէջ՝ աւելի մեծ տաւալով՝ խմբադրապետութեամբ Ռ. Ջարդարեանի: «Ռազմիկ», վարպետ, սիրած ու փնտռած դրօշ տակ, յեղափոխական շունչով, մեծ դեր կատարեց իր գոյութեան ընթացքին պուլկարա-

հայրենական մէջ, մինչև որ Օսմանեան Սահմանադրութիւնը վրա հասնելով, իր խթմաբարեկան կազմով անցաւ Պոլիս, ուր ձեռնարկեցաւ «Այստատմարտ»-ի հրատարակութիւնը:

2. Մասնաւոր վարժարան. Որպէսզի անկազկանդ կերպով կարենար կրթել ժամանակակից գաղափարներով սօսուած սերունդ մը, որ ամէն բանէ առաջ ըլլար առողջ մտածումի ու դաստիարակութեան տէր, զերծ որակէ հիւանդոտ, վնասակար և ազդային տեսակետով սրկանիչ մտայնութիւններէ, Ռոստոմ որոշեց և իր կնոջ՝ արկին եղիարէթի հետ բացաւ մասնաւոր վարժարան մը, ուր սկսան յաճախել նախապէս չըբահից արջիկներ և նոյնքան մանչեր, որոնցմէ առաջինները, կարծես, սահմանած են եղբր, կրթիւնը Ռոստոմի շունչին տակ, ծառայելու համար նոյն ուղղութեամբ, միևնոյն յարկին մէջ: Այսպէսով Հետզհետէ Զօրեան վարժարանը ժողովրդականացաւ և ահպին յեղաշրջում առաջ բերաւ Յիլիպէի հայ հասարակութեան մէջ: Հին պաշտամարեցիներ ուսուցչական կողմէն արժանաւոր և համապատասխան անձեր՝ Պիոնեան, Մանւէլեան, Մարգղեան:

3. Զարկ տալ գեղարեստիս. Ռոստոմ կազմեց երգեցիկ թատերաւէր խումբ մը, նպատակ ունենալով մէկ կողմէն գեղարեստութիւնը հայ հասարակութեան՝ միանգամայն ստեղծելով քնանակեան բոյնիսու մէջ համակիրներու մտերիմ միջոցորտ մը: Տարով թատերական ներկայացումներ հայկական կեանքի՝ նպատակն էր կենդանի Հետաքրքրութիւն ու շարժում ստեղծել հայ գաղտին հանդէպ: Յոյց տալով Հայաստանի վերգացիին վիճակը, անվերջ տառապանքներ թիւրջ անգուրթ պաշտօնականերու լուծին ու քիւրտ պէհլերու բռնակալութեան տակ՝ այսպիսով յեղափոխականացնել հայ ժողովուրդը, վարժեցնելով զայն սիրելու և Հայաստանը և ընդունակ դարձնելու. Հայաստանի սպառազրութեան համար գոհոգութիւններ յանձն առնելու: Բոլջ շքարմանայ ընթերցողը, երբ յայտնեմ, թէ երգեցիկ խումբին ուսուցիչն ալ նախապէս ինքը Ռոստոմն էր: «Մեր Հայրենիք»-ը եղաւ առաջին երգը խումբին: Հետզհետէ երգեցիկ խումբը կըլաւ ստաւարաթիւ և ունեցաւ իր պուլկար ուսուցիչը՝ Պոպով:

Թատերական ներկայացումներ սարբելու համար որոշ շաբով ընդունակ երիտասարդներ ունեցանք. կը պակսէր միայն աղջիկ, որ բեմ ելնելու համարանկութիւն ունենար, իսկ եթէ արիւկ գտնաւ հնարաւոր ըլլար, ո՞ր հայ ծնողքը պիտի յօտարէր ասիէ ուղիղ 30 տարի առաջ թոյլ տալու իր աղջկան երևնալու բեմին վրա հասարակութեան առջև: Այս ուղղութեամբ վիտաուտեքներ ու տարեք ջանքերը ապարդիւն անցնելով՝ որուչեցաւ թատերախաղ մը ներկայացնել՝ միեցնելով աղջկան զերը: Դուրեանի «Սև հողեր»-ը կըլաւ այդ խաղը: Ռոստոմ, Մանւէլեան, Բարթօղ և և, քանի մը գիւրերնր վարժեցինք ասանկ աղջկան երև, բայց կէս ճամբուն վրա իսկ տեսանք, որ խաղը կը դառնայ կմայր մը: Ընդհատեցինք մեր աշխատութիւնները մինչև որ, վերջապէս, կարելի կըլաւ գտնել գարգացած, ուսումնաւարտ աղջիկ մը, որ առաջին անգամ բեմ պիտի ելնէր՝ պատճառ դառնալով, որ իր օրինակը վարակիչ դառնայ: Այդպէս ալ եղաւ. Թատե-

րական ներկայացումները մեծ ոգևորութիւն առաջ բերին Յիլիպէի հայ հասարակութեան մէջ, արթնցնելով խոր հետաքրքրութիւն և համարակրթիւն ու սէր զկպի Դաշնակցութիւնը:

Յիլիպէի տենչտո գործունէութիւնը արձագանգեցին միւս հայաւատ շաղաքները: Եւ ամենուրեք սկսաւ նոր ու տաք գործունէութիւն մը նոյն ուղղութեամբ: Եւ այդպէս, Ռոստոմ յաւընեցաւ խաղով կերպով թափանցել հայ հասարակութեան ամէն խաւի մէջ և, որ պիտաւորն է, հայ առնեւրէն ներս մացնել նոր մտքեր ու դաղափարներ:

4. Դաշնակցական երիտասարդներու խումբեր. — Ռոստոմէն առաջ Յիլիպէի մէջ գոյութիւն ունէր «Պեւո Պուլկարացի» խումբը, որուն ևր մասնակցէին Անտան Գոշ, Թահմեզեան, Պեւո, Նէլլուս և ուրիշներ: Կազմեցաւ «Արամեան» խումբը բոլորովին երիտասարդներէ բաղկացած: Ռոստոմ կանդամացէր «Արամեան» խումբին, ամէն կրթակի կանոնաւոր կերպով ժողովներ կը գումարէին, ուր կը կարգացէին յեղափոխական գեթոյկներ և այլ յարմար գրութիւններ. Ռոստոմ կուտար հարկ եղած լուսարանութիւնները, բացի ասիկ կը սորվեցնէր խումբին քաղաքանտեսութիւն, որը խոր հետաքրքրութիւն առաջ բերաւ. երիտասարդներու մէջ: Յիլիպէն այլևս յեղափոխականացած էր: Երեսով «Արամեան» խումբը արանս ստաւարաթիւ կըլաւ, որ անհրաժեշտ դարձաւ զայն երկուքի վերածել. երկրորդին անունն ալ մկրտելով «Վաղզէն»: Այս խումբերէն զուրս կիան անձնագրհ երիտասարդներ, որոնք և մեկնեցան Երկիր, ուր կատարեցին կարելու զերեր:

5. Պուլկարահայրէիւր սիրցնել պուլկար ժողովրդին և կառավարութեան. — Պուլկարիոյ գերբը աշխարհաբարեկան տեսակէտով հայ յեղափոխութեան համար խիստ նպատաւոր էր. իսկ պուլկար յեղափոխական ժողովուրդը և անոր կմտնջութ կառավարութիւնները բարեացակամ վերաբերում ունէին հայրու հանդէպ: Պուլկար ժողովուրդը իր մտքիւ վրա գրացած էր թիւրջ եաթպանն ու բռնապետութիւնը: Եւ, սակայն, երկու սահմանակից զբացի պետութիւններու բարւօք յարաբերութիւններ ունենալու և քաղաքական անհրաժեշտութեան տեսակէտով, գունէ առժամաբար, կրնար Հ. Ե. Դաշնակցութեան նպատակներուն և ընելիք ձեռնարկներուն արդէք ըլլալ Պուլկարիոյ մէջ: Իսկ տեսնեսական տեսակէտով շատ սահանակն էր, հակահայ հոսանքի մը ստեղծելը: պուլկար ժողովուրդի լայն խաւերուն մէջ, որովհետև Պուլկարիա հիւրընկալած և ապաստանած բոլոր հայերն ալ արհեստաւորներ և առևտրականներ էին: Եւ պէտք է լսել, թէ որոշ աշխատանքներ կըլած էին պուլկար արհեստաւորներու կողմէ Վառնայի մէջ, ուր հայութիւնը իսնամ էր շատ աւելի՝ հայ վախատականներու առաջին հանգրուանն ըլլալուն շնորհիւ:

Հոս պէտք է ի պատիւ պուլկար ժողովուրդին և անոր ներկայացուցիչներուն արձանագրել, թէ Վառնայի բողոքը և անուած որոշումները եղած երեսփոխական ժողովին, խտիւ մերժեցան:

Նիստին նախադահող Վառնայի երեսփոխան և դեմալիստ կուսակցութեան պարաղլուներէն, երեսփո-

խանական ժողովի փոխ-նախագահ և Նշանաւոր փաստարան պ. Նիքօրա Գրնէքի հայանպաստ ճառէն յետոյ, ուր ան հայերու բնորոշանկութիւնները, բարեմասնութիւնները և անոնց հաւանական հանգամանքը Ներկայացնելով՝ այնպիսի մթնոլորտ մը կը ստեղծէ ժողովին մէջ, որ նոյնիսկ հարցապնդում բնոյ կերու երեսփոխանները խօսոյն ևս կը քաշեն իրենց գրութիւնը և ժողովը միաձայնութեամբ կը որոշէ չդրապիլ անով և չընդգրկել Տայանալած քաղաքականութիւն:

Ռոստոմ կը ջանար ամբացնել և ապահովել պուլկարահայութեան դիրքը յայտ պուլկար ժողովուրդին: Ռոստի, սկէտը էր գտնայ, որոնի յնարան մը: Այդ յնարանը եղաւ մակեդոնական ներքին կազմակերպութիւնը: Ռոստոմ և Քրիստափոր մշակեցին յարաբերութիւնը Նոյն այդ կազմակերպութեան հետ և շուտով մակեդոնահայ Ա յղափոխականներէ կազմած խումբը անցաւ Քրիստիոյ սահմանը, կտրինի չըջանը: Մնացեալը ծանօթ է: Մակեդոնացի և հայ արևելք իրար խռովեցան՝ միևնոյն թշնամիին դէմ կուեցով եզրաչափարք: Երկու խմբակները Միքսանօթ և Պետո Սերկմէան դէմ դիմաց կախեցաւ կտրինէի հրապարակը:

Մակեդոնահայ կորայրակցութիւնը արհեստով ներագործած էր:

Երևան յարի առջ պուլկար պետութեան վարչական և դիւերական իշխանութեանց ամենարձր պաշտօնէութեան մեծագոյն մասը մակեդոնացիներն էին, ուստի զիւրերն է այլևս երևակայել թէ այս զէպըք ի՞նչ անոյց ցնցում առաջ բերաւ և ի՞նչ կորայրական համակրութիւն ստեղծեց պուլկար ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ հայերու հանդէպ:

Եւ ինչե՞ր կատարեցան ու դարբնեցան Հ. Յ. Դաշնակցութեան կողմ Պուլկարիոյ մէջ, միշտ վայելելով օրակ կառավարութեան ուղղակի կամ անուղղակի, իսկ ժողովրդի բացարձակ բարոյական օժանդակութիւնն ու համակրութիւնը:

Այստեղ արժէ յիշել երկու աչքառու զէպեր: Մէկը՝ Քրիստափորի և ընկերոջ՝ Եղոյարտի թագման պարագան: Սօֆիայի թիւրք զեպանը զիմում կատարեց նախարարութեան մօտ, որպէսզի անշուք կատարել Քրիստափորի թագումը՝ նկատել տարով, թէ ժողովըրդական թագում մը ցոյց մը պիտի ընդունէր իր կառավարութեան կողմէ՝ ուղղութեամբ Քրիստիոյ դէմ: Քաղաքական կացութիւնը փափուկ էր և, սակայն, նախարարութիւնը անգոր էր, նոյնիսկ ի՞նչ ուզէր ալ, զէմ երթալու մակեդոնական կազմակերպութեան և պուլկար ժողովրդի ցասումին: Եւ այն եղաւ, որ Քրիստափորի և ընկերոջ յուզարկագրութիւնը դարձաւ չափազանց ժողովրդական: Դազաղին կը հետևէին մինչև զերեզման բազմահազար ժողովուրդ և 29 ծագկեպականներ:

Եւ միւս պարզան, Սուլթանի մահափորձի հեղինակներ թորգոմի և Քրիսի թիւրքիոյ յանձման խնդիրն էր: Նոյն թիւրք զեպանը իմանալով, թէ թորգոմ և Քրիսի միջիպէ կը գտնուին, կը զիմէ արտաքին գործոց նախարարին՝ պահանջելով յեշեաներու յանձնումը թիւրք կառավարութեան: Նախարարութիւնը նախօրօք հարկ եղած կարգադրութիւնները ըրած էր,

որպէսզի երկու ընկերները փախցնենք անձանօթ վայրեր ժամանակաւոր՝ կեղբոյ: Եւ երբ միջիպէի նահանգապետը կարգադրած է, որ, կէսօրէն յետոյ, ժամը 2-ին, թիւրք հելպատտի գիտութեամբ յիշեաներու ընակարանները երթնելու գեներալինն զանոյր արդէն մէկը Պայլովա, իսկ միւսը մօտաւոր զիւր մը ճամբած էինք: Ու երբ ստիկանապետը ընկերակցութեամբ պաշտօնեաներու նախ ուղղեցաւ Անտոն Գօշի ընակարանը, ուր կայրէր թորգոմ, պարզեցաւ որ, այդպիսի զէմք մը գոյութիւն չունէր, ինչպէս նաև Քրիսի ընակարանի խաղաղութիւնը նոյն արդիւնքը տաւ: Եւ արտաքին գործոց նախարարը տեղեկացուց թիւրք զեպանին թէ, ճիշտ չէ, որ մահափորձի հեղինակները Պուլկարիստ պարտասանած բլլան: Պուլկար պաշտօնեաները Քրիստոսի ստիկան կը ծիծաղէին միջիպէի թիւրք հելպատտին վրա:

Շատ շանցած օտչ խնդիրը արծարծեցաւ պուլկար երեսփոխանական ժողովին մէջ, ուր բոլոր երեսփոխանները մէկ միտք մէկ հոգի վճռապէս ամէն զնով մերժեցին այդպիսի ստոր յանձնում մը գործել՝ հակառակ գոնայով զայն պուլկար սահմանադրութեան հիմնական օրէնքին:

Եւ հաս զանց կանոն մ յիշատակելու շատ նման զէպեր ու պարագաներ, աւելորդ անգամ հաստատուելու, թէ ի՞նչ բարերը արգելաւ թիւրք և հեղինակութիւն ստալ բերած էր մակեդոնահայ կորայրակցութիւնը: Այսօր եթէ քաղաքական պայմանները այնպէս զասուրեւած են, որ այդ նոյն կորայրական կապերը չեն կրնար իրական և շուշափի բլլալ, այնուամենայն անոնք հօգը ներգործութիւն ունեցած են, շնորհիւ այն հեռատես թաղաքականութեան, որուն հիմք դրաւ Ռոստոմ:

Ռոստոմ սրպէս անհատ շատ բարի էր և բառիս ճշմարիտ ստուծով սոցիալիստ, ոչ միայն զագափարներով, այլ և գործնականի մէջ: Իր վերաբերու պատմութիւնը ծանօթ է «Բրօշակոյ» ընթերցողներուն: Օրինակ մըն ալ ևս արձանագրեմ:

Այնատես եղայ, որ օր մը ընկեր մը եկած էր Ռոստոմի մօտ Հրամէշտ անունու համար: Ընկերը վառեա կը մեկնէր ամուսնանալու համար: Ռոստոմ, հասկնալ յետոյ թէ անիկա որբան՝ դրամ ունի գրքպան, յայտնեց, թէ այդ գումարը անբարեկամ էր ամուսնանալու և վերադարձալու համար, ու առանց պատետու ընկերոջ տալիք պատասխանին, խնդրեց իր կնոջմէն, որ ոսկի ժամացոյցը և շղթան բերէ, ընկերոջ ալ պատուիրելով, թէ զին զանոնք աւանդ սեղանաւոր Պօշանեանի դոմ, ինք շուտով ետ կը ստանայ վերադարձնելի գուման: Ընկերը ընդգրկեց անգաւ և հազիւ կրցաւ համոզել՝ հաշիւ ներկայացնելով, թէ իր դրամը կը բաւէր յիւրի: Ու այսպէս, ետ կեցաւ Ռոստոմ իր առաջարկէն:

Հայ ժողովուրդը, ի մասնաւորի, պուլկարահայ զաղութի խորին յարգանքով և ակնածանքով սկէտք է խոնարհի մեծ հայուն զերեզմանին վրա, որ զիսցաւ ապրել ու մեռնել միայն հայութեան ազատագրութեանը և բարօրութեանը համար:

ՎԱՀԱՆ ՄԱՋՍԱՆՅԱՆ

# ՄԻ ԷՋ ԹԱՒՐԻՉԻ ԿԵԱՆՔԻՑ

1908-9 թականներին տեղի ունեցաւ Թաւրիզի յեղափոխական շարժումները: Կռիւների նախօրեակին Ռոստոմը այնտեղ էր: Ղեկավարում էր շարժումը և հայերի մասնակցութիւնը:

Երբ միապետական ուժերը կատաղի յարձակումներով գրաւեցին քաղաքը, պարսիկ յեղափոխականների պարագլուխներ Սաթթար և Բաղըր խաները, շրջապատւած 40-50 հաւատարիմ զինուորներով, ամբացան Լիլաւայի և Ղալայի հայկական թաղերի մօտի գիրքերում և օրհասական դիմադրութիւն էին ցոյց տալիս:

Յուսահատական օրեր էր ապրում նաև Թաւրիզի հայութիւնը: Եթէ միապետականները ներս խուժէին, թալանն ու կոտորածը անխուսափելի կը լինէր:

Վերջին տագնապալից օրն էր յեղափոխականների համար: Թշնամին աւելի և աւելի յանդուգն էր դառնում: Պարտութիւնը թւում էր անխուսափելի:

Ռոստոմը շտապեց կուի վայրը և իր ձեռքը առաւ ղեկավարութիւնը: Սառնարին, ինչպէս միշտ, մշակեց յարձակման ծրագիր, դասաւորեց ուժերը և ինքը արևի մարմամտի մօտերը, ոսկիոտ նետով գործիքը ձեռքին, բարձրացաւ Լիլաւայի թաղի ամենաբարձր տնրից մէկի կտուրը: Այստեղից յարձակման նշան

տեց և սկսեց աջ ու ձախ թշնամու դիրքերի վրա ուղեւտ արձակել:

Ռոստոմի նշանի վրա հայ ու պարսիկ մարտիկները, ձեռնառումների որոտով և հրացանների անընդհատ համազարկերով գրոհ տւին հակառակորդի վրա: Ռոստոմի նետած ոսկեւտները ա՛հ ու սարսափի էին մատնում միապետականներին: Նրանց շարքերում տիրեց սարսափելի շփոթ և իրարանցում: Եւ շուտով լքեցին դիրքերը և խուճապահար, անկարգ ու խռոնխնաղանձ ամբոխի վերածւած՝ դիմեցին փախուստի:

Յեղափոխականները գրաւեցին Արք միջնաբերդը: Ապա, միմեանց յետևեց, տէր գարձան և միւս թաղերին ու դիրքերին: Յաջորդ առաւօտ ամբողջ քաղաքն արդէն յեղափոխականների ձեռքին էր: Ռոստոմը փրկեց Ատրպատականի յեղափոխութիւնը: Յնձութիւնը ամէն կողմ աննկարագրելի էր...

Քիչ յետոյ, Ջուլֆայից հասաւ Քեռին իր 40 հոգինոց խմբով: Ռոստոմը նրան յանձնեց կուի ընդհանուր ղեկավարութիւնը: Բայց ինքը մնաց պայքարի ոգին, թէև միշտ սոււերի մէջ, առանց առաջ նետուելու և իր անունն ու անձը ցուցադրելու:

ՂԱՋԱՐ

# ՌՈՍՏՈՄԷՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան երեք զլխաւոր հիմնադիրներէն Ջաւարեան և Ռոստոմ, որոնց տեսնելու և անոնց շունչին տակ ապրելու բախտ եմ ունեցած, մեր պատառազրական և հասարակական շարժման գրեթէ բոլոր խոշոր երևոթներուն մասնակցած, և զլխաւոր մղիչ ուժը հանդիսացած են: Բայց անոնց անփառասիրութիւնը և մեծահոգի ղեկավարութեան ձեւը դիրքեք կը թողուն չուքին մէջ, մինչդեռ անոնց առաջ քաշած մարդիկ բեմին վրա կը դառնային զլխաւոր գերակատարներ: Այսպէս ջլլառով հանդերձ մեր կուսակցութեան հիմնադիրներուն հմայքը արտակարգօրէն բարձր էր, և որքան կը լայննար Դաշնակցութեան գործունէութիւնը, այնքան այս անփառասէր խոշոր ղէմքերը կը դառնային տիրական:

Ռոստոմը, մասնաւանդ, շատ ինքնայատուկ ղէմք է մեր կուսակցութեան մէջ: 29 տարի անընդհատ աննկա ղեկավար դեր կատարած է մեր գաղտնի և

յայտնի, մտաւոր ու գործնական յեղափոխական կեանքին մէջ, սակայն, այսօր, մեծ դժուարութեամբ կարելի է վերականգնել անոր ամբողջական ղէմքը:

Ո՞ր գործին և ո՞ր կողմէ ուղենաք մօտենալ Ռոստոմին, կարծէք թէ ան գործունէութեան բեմի վրա միայն ներկայ է, հոն է, իսկ պատմութիւնը՝ ուրիշներուն: Մինչդեռ ծրագրիւր յլացողը, գործը կեդրոնացնողը, շէնքը պահպանող սիւնը Ռոստոմն է, իր համբերատարութեամբ, յստակ ու բազմակողմանի խելով, բարի ու հաշտարար ժպիտով:

\* \* \*

Բազմաթիւ ղէմքեր ու դրւադներ կապած են Ռոստոմի անձին հետ, որոնք թէև աւելի ուրիշ անհատներու կեանքն ու գործը կը բնորոշեն, քան Ռոստոմի դերը, սակայն, ուշադիր դիտողը դիրուրութեամբ

կրնայ անսնկ Ռոստովի վեկախար ձևերը և, մանուսնդ, յեղափոխական դաստիարակէջ ոգին: Ռոստով, լուս-թեամբ, առանց զարդի կը դաստիարակէր իր շուրջ հաւաքողները, կամ անոնք, որ կուսակցական գործով կը կապէին անոր հետ:

Նման խոր տպաւորութիւն կրած եմ Ռոստովէն, երբ ուսանողութեանս օրերուն կանցնէի հրգրումէն, ու քանի մը օր մնացի Ռոստովի և շարք մը ուրիշ ընկերներէ մօտ:

1912-ի նոյեմբերեան ցուրտ առաւօտ մը, քանի մը ուսանողներ, մեր փոքրիկ ծրարներով Ղալաթիոյ քա-րապին էինք: Ս. Զաւարեանը մեզի համար նաւի հրդ կարգի տոմսեր առած էր, այսինքն պիտի անցնէինք սահմանափակման վրա, մինչև Բաթում:

Զաւարեան մեզ տարաւ Ղալաթիոյ խեղճուկ սրճա-րան մը, թէյ խմցուց. ըսաւ, որ կուսակցութեան գանձին խնայելու համար այդպէս աժան տոմսեր գնած է, որ մենք երիտասարդ ենք, ու պէտք է վարժինք դիմանալ ցուրտին ու բուքին: Ապա բոլորիս հազուա-նները նայեց, պատուիրեց, որ օճիքները հանենք: Ու յետոյ, մեր իրերը խառնչտելէ վերջ, սրճարանէն դուրս գնաց և կէս ժամ շանցած վերադարձաւ մեծ թէյաման մը, թէյ և շաքար բերելով:

— Կը վախնամ մսիք. նաւու մէջ եռացած ջուր միշտ ձրի փութան. առէք այս թէյամանը, յաճախ թէյ խմեցէք, որ տաքնաք...

Մեր խումբը կը բաժնուէր երկու ուղղութեամբ: Երեք ընկերներ մեկնեցան դէպի Վան, Արամի տրա-մադրութեան տակ, իսկ ընկերս և ես Կարսի վրայով մեկնեցանք դէպի հրգրում:

Ս. Զաւարեանի շունչով թեւաւորած կերթայինք Ռոստովի և Արամի մօտ, անոնց հրահանգով ու առաջ-նորդութեամբ հայրենի ժողովրդի մէջ աշխատելու:

\*\*\*

— Երբ հրգրում հասնիք, Ռոստովը մեզի գործնա-կան անհրաժեշտ հրահանգները կուտայ: Պոլսոյ մէջ խօսակցութիւններն ընդհանուր բնոյթ կը կրեն, — այս եղաւ Զաւարեանի վերջին խօսքը:

Ես արդէն հասած էինք ձիւնապատ հրգրումը: Ռոստով մեզի դաս տալու պէս հրահանգներ չուտաւ: Ընդհակառակը, ընկերական շարք մը խօսակցութիւն-ներու ընթացքին մեզ խօսեցնել տաւ: Մեր մտածում-ներն ու գիտացածները լաւ, մը հասկնալէն յետոյ, ինք միայն աւելցուց այն անհրաժեշտը, որ մեզի կը պակ-սէր: Մեզի թեւք շարք մը գործիչներու անունները, անոնց նկարագիրը, անոնց հետ գործելու կերպը, մատնանչեց տեղական կարևոր հարցերը և անոնց լուծման հնարաւորութիւնները: Ամենքս վերջը, թելա-րեցեց, որ տեղական պայմանները և մեր չըջապատը լաւ մը ուսումնասիրենք և ըստ այդ պայմաններու շարժուինք:

Այն քանի օրերը, որ մնացինք Ռոստովի հետ, պարզապէս շանցք: Ընկերական ընդհանուր խօսակցու-թիւններու ընթացքին, անգլալարար այն մեզի կը նե-րարկէր բարոյական այնպիսի հասկացողութիւններ, որոնք երկար տարիներ մեր սկանչին խրատական օղեր կը մնային:

Մենք տակաւին մտցած չէինք Պոլսոյ մեր յա-խուռն ձևերը: Այլ ու ձախ քննադատութիւններ կրնէ-ինք: Ընկերս (Ալայն) բուսական ծանր վերադրումներ ըրաւ մեր հին գործիչներէն մէկու հասցէին, քննադա-տութիւններ, որոնք, սակայն, գործնական կեանքի կտրւած ուսանողներէն միայն կարելի էր լսել: Ռոստով թարի-թարի ժպտաց, ժպիտ մը, որու ետին մտածումը թաղնւած էր:

— Բուք լաւ չէք ճանչնար ու հասկնար այդ գոր-ծիչին, — ըսաւ Ռոստով, — դուք առանց կշռելու՝ միշտ կամբաստանէք, սակայն, եթէ պահանջի որ ոչ թէ ամբաստանութիւնն ապացուցանէք, այլ նոյն իսկ մտաւոր բացատրութիւն մը տաք, չպիտի կրնաք: Մենք որքան որ խիստ պիտի ըլլանք բարոյական սայ-թացումներու վերաբրմամբ, նոյնքան աւելի խիստ քննիքով պիտի ունենանք մեր վրա՝ անարդար ու ան-ճիշտ վերադրումներ չընելու որևէ ընկերով հասցէին: Ես ընկեր մը ամբաստանելը ամենէն ծանր արարքը կը



ՌՈՍՏՈՎԸ ԵՒ ՄԱՏԹԷՍԸ

նկատում. ահա 20 տարի է ինչ ես մեր ընկերներէն մէկուն վրա հեռաւոր, անհիաստ կասկած ունիմ, սա-կայն, այսքան տարի ես կը կշռեմ իրողութիւնները և չեմ կարող գայն ամբաստանել, կամ որևէ ուրիշ ըն-կերով խօսիլ այդ մասին, որովհետև տակաւին հա-մողած չեմ, տակաւին հաւատքս հիմնապէս. չէ խախտում:

Ճնշիչ ու անմոռանալի խրատ էր: Մենք կամաց-կամաց կազուտէինք պոլսական շատախօսութիւններէն:

Դէպի Մուշ մեկնելէ ստալ, օր մը, մեզ տարաւ իր գիտական աշխատանոցը: Ռոստովին հիմնական բնաւոր-ութիւն էր դարձած թիչ մը գրադելու պայթուցիկ նրթերով և ուռմրով: Դաշնակցութեան յեղափոխա-կան պայքարի ընթացքին, Ռոստովի գործնական և գիտական միտքը միշտ գրաւած էր գտնելու հասարակ ձևեր, պայթուցիկ նրթեր օգտագործելու համար:

Եւ այն, յաւելլալ փորձառութեան մը պէս, ուսմբի մասին բաներ մը կը սովորեցնէր մեր երիտասարդ գործիչներուն: Մեզի մի սովորեցուց՝ քսելով, որ յետամնաց ամբողջ վրա կազդէ և կրնայ կայնեցնել խուժանք, մանաւանդ, քաղաքի նեղ փողոցներուն մէջ: Իր նշարած ձևը պարզ էր. նիւթերը ղիւրութեամբ կարելի էր ճարել: Միայն խաւորէն պատուիրեց, որ ցուցամոյր թիւններ չլինէր, զանազան փորձեր չկատարէր, պարսպ տեղ թեւերն կամ գլուխներն վրա տալով: Պարզ գգուութիւն մը բուսական էր պայթուցիկ վտանգէն ազատ մնալու. իսկ մնացածը՝ կապւած ոյրտի բոլոր նարկեցուցիչ զգպերու, ուր վտանգունքն ինքնին նպատակի մը ծտառայլ կը նշանակէր:

Գործնական պաշարով կը մեկնէինք զԼպի Մուշ. ուրախ էինք: Մեր իրերը պատրաստած էինք ու կը սպասէինք սահնակին, որ մեզ պիտի տանէր Բասէնէն Այազկիրտ ու անէջ Բուլանբիլի վրայով՝ Մուշ: Ռուստոմ մեր սենեակն էկաւ, ետեւէն ալ Մարտիրոս վարժապետը, երկու խոշոր կապոցներով, զրսեօրած վերմակներով ու հաստ պարաններով:

Ռուստոմը քիչ մը քիթը ճճձթեց ու աւելցուց.  
— Տղա՛ք, այս վերմակները ձեզ տաք պահելու համար չեն. անոնց մէջ ծրարւած են եօթը մօսին հրացաններ, որ ձեզ հետ Մուշ պիտի էլ տանէք. այս դէնքերու փոխպարութիւնը ճամբու ծախքով կը թեթեւցնէ: Եթէ տեղ հասցնէք, շատ լաւ, իսկ եթէ բռնելիք՝ կը փորձելիք: Զգո՛ւ լեզիք և հանգիստ պահեցէ՛ք ձեզ, յոյս ունիմ, որ վտանգ չի պատահիր:

Ուրախ էինք, որ դատարկ ձեռքով չպիտի մտնէինք Մուշ, ուր զէնքի կարիքը միշտ մեծ էր: Ուրախ էինք նոյնպէս, որ Ռուստոմը մեզի այդպիսի յանձնարարութիւն կրնէր: Ուրախութեամբ, թէ և ոչ տասնց զժաւրութեան, կատարեցինք այդ յանձնարարութիւնը:

...Երեք օր յետոյ հասանք Մուշ: Հապի վար իջած էինք, մեր իրերը կը հաւաքէինք՝ Գաշնակցութեան Տունը մտնելու համար, երբ երեք ստտիկաններ մեզի մօտեցան կեղծ քաղաքավարութեամբ մը: Բնիկըսն հետ շլմած՝ մեր շուրջը կը նայէինք զէնքերու ծրարները գտնելու, բայց Մշոյ Երկաթէայ խմբի տղաքն արդէն ամէն ինչ թողուցած էին, ու մէջտեղ կը մնար մեր գրբերու և ճերմակեղններու ծրարը:

Այդ օր, արդէն անխառն ուրախութիւնն ունէինք, որ զէնքերը սպանով տեղ հասած էին, որ մեր ճամբու ծախքը սուղի չէր նստած կուսակցութեան:

\* \* \*

1913-ի ամառն էր: Ս. Կարապետի նստասրդան

տօնը այդ տարի շատ մեծաժայելուչ էր: Մօտ 20,000 ժողովուրդ հաւաքւած էր այդ հին սրբատեղիին վրա տօնելու հայ զրեարք զիտի հազար հինգ հարիւր ամետարի և զպարութեան հինգ հարիւրամեակը:

Ռուստոմ իր աշակերտներու հետ, Բիւրակնեան լեռներէն, սուրով հասած էր Ս. Կարապետ: Ժողովուրդը կը գտնէր բազմազան սպաւորութիւններու տակ: Կարծես խոշոր ցուցահանգէս մըն էր մեր կրթական և մշակութային կեանքի, հայկական բոլոր նահանգներու բարձր ու վարժի, հայկական ազատագրական-յեղափոխութեան: Վերածնունդի նախանշան մը:

Այդ հանդիսաւորութիւններու օրերուն, Ս. Կարապետի վարժարանի սրահին մէջ, տեղի ունեցաւ Հ.Յ. Գաշնակցութեան Հայաստանի առաջին ռաշոնական ժողովը: Որքան դիտեմ, Ռուստոմն էր այդ միտքը յղացած: Այդ ժողովին կը մտանակցէին Երզրումի, Վանի, Գուրան-Բարձրասանազիի, Խարբերտի Կ. Կոմիտէնէրը, և Հ. Յ. Գ. Բիւրոյի քանի մը անդամներ: Ժողովի նախագահներն էին՝ Ռուստոմ, Արմէն-Գարօ, Վտամեան: Տեղաբնակիրտի, Սերաստիոյ և Տրապիզոնի մարմինները չկրցան ժամանակին իրենց պատգամաւորները դրկել ժողովին:

Ռուստոմի առաջարկութեամբ, որոշեցաւ ամէն տարի հաւաքել Ս. Կարապետ, տօնակատարութեան օգուտելով, կատարել Հայաստանի բոլոր Կ. Կոմիտէնէրու ռաշոնական ժողովը և անմիջապէս յետոյ՝ գումարեկ Գաշնակցութեան ընդհանուր ժողովը: Ս. Զաւարեան, Ռուստոմ և Երկրի գործիչները վերջնականորէն կը պնդէին ընդհ. ժողովը Հայաստանի կեդրոններէն մէկու մէջ գումարելու վրա, բայց այդ տարի կարելի չեղաւ:

Ռուստոմ և Արմէն-Գարօ անհուն հրճանքի մէջ էին՝ տեսնելով զանազան վայրերէն Ս. Կարապետ հասած բազմահազար կենսունակ և ուրախ ժողովուրդը: Գաշնակցութիւնն իր ամբողջ ուժով հոն էր, ռաշոնական ժողովի մէջ, հայկական ազատագրութեան մտատուքներով՝ դուրսը՝ Ս. Կարապետի ընդարձակ բակերու մէջ, բազմաթիւ ամբողջներէ նոյն յեղափոխական մտաւորականութիւնը հայ մշակոյթի տօնի սաթիւ: հայ հոգիի և հանճարի զովքը կրնէր. ապագայ կեանքի վերածնունդի մեծ յոյսերով:

— Միայն տասը տարի մեզ այսպէս հանգիստ թողնեն. մեր ժողովուրդը կը վերածնէի, — կրնէր Ռուստոմ:

Աւա՛ղ, մեզի տասր տարի հանգիստ չթողուցին...

Կ. ՍԱՍՈՒՆԻ



# ՈՌՈՍՏՈՄԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԻՑ

Ռոստոմը 1918թ. դեկտեմբերի վերջերին Բազուից վերադարձաւ Թիֆլիս և մտադիր էր շուտով մեկնել Հայաստան:

Բազուի դէպքերից յետոյ երևում էր շատ յոգնած: Հայ-վրացական պատերազմը, հայերի դանդաճածային հայրածանքները վրաց կառավարութեան կողմից չափազանց ազդել էին նրա վրա: Անգլիական ներկայացուցիչները միջամտութիւններն ու ակնբեր կողմնակալութիւնը յօղուտ վրացիների, Հայաստանի անտեսակօն ծանր տաղանալը, սոսկալի մահացութիւնները սովորոց ու տիֆից՝ մոռայլ, յուսահատական տրամադրութիւն էին ստեղծում: Ռոստոմը սպրում էր ծանր հոգեկան վիճակ: Սակայն և այնպէս, Հայաստանը — հայ ազգի զարգացման ազատ օջախը իրողութիւն էր, և նա ամբողջ էութեամբ շտապում էր օր առաջ հասնել Երևան, անձամբ տեսնել ու զգալ այդ Հայաստանը, լծւել շինարար աշխատանքի...

Բայց Թիֆլիսում էլ Ռոստոմի ներկայութիւնը անհրաժեշտ էր. Երևանից եկել էր և պատրաստում էր Եւրոպա մեկնել Ահարոնեանի պատերազմութիւնը՝ Հաշտութեան Վեհաժողովին հայկական պահանջները ներկայացնելու համար. կարիք կար խորհրդակցելու Ռոստոմի հետ: Միև կողմից, հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել փոխելու համար վրացիների հայահալած քաղաքակնութիւնը. Ռոստոմը դեռ ուսանողական օրերից՝ ժընկից մօտիկ բարեկամ էր վրաց կառավարութեան նախագահ Ժորճանիայի. պէտք էր տեսնել նրան, բացատրել վրաց իշխանութեան սխալ ընթացքը. պարզել մի շարք նուրբ խնդիրներ\*):...

\*) Ժորճանիան առաջին անգամ Ռոստոմին ընդունում է նախկին փոխարքայի պալատի Սպիտակ դահլիճում:

Խօսակցութեան ժամանակ Ժորճանիան մտերմաբար ասում է Ռոստոմին.

— Ե՛ր, Ստեփան, մեր ժընկ եղած ժամանակ կարո՞ղ էի՞նք երևակայել, որ ես աւ դու այս պալատում պիտի տեսնեմք:

Ռոստոմը անկազար շարժման մէջ էր, Թէպէս արդէն հիւանդ էր և ծանր հիւանդ. դեռ Բազուից նա վարակւած էր բժաւոր տիֆով և կարծում էր: Թէ մալարիա ունի: Գանդատում էր, Թէ սաստիկ մրտում է, և ժողովներին միշտ տաք թէյ էր խնդրում՝ մեծ քանակութեամբ:

Առաջին շորս-հինգ օրերը չաջողեց նրան անկողին պարկեցնել. քիմիկ էր ընդունում ու շարունակում էր ժողովներին մասնակցել և այցելութիւններ անել: (Յետոյ իմացանք, որ նոյնիսկ իր միակ տաք բրդէ շապիկն էլ հանել էր և պտտում էր թէթև շապիկով): Նա շատ վստահ էր իր ուժեղ կարճաճքի և սոսկուն առողջութեան վրա: Միայն Ծրը օրը, երբ արդէն 40 աստիճան տաքութիւն ունէր և չէր կարողանում ոտքի վրա մնալ, պարկեց, և պարզեց, որ թոքերի բորբոքում և բժաւոր տիֆ ունի միաժամանակ:

Ութը-տասը օր միայն պայքարեց նրա ուժեղ, բայց խիտ յոգնած կազմաճքը: Եւ յունւար 18-ի զիշերը, ժամը 4-ին Ռոստոմը վախճանեց: Վերջին 2-3 օրը նա այլևս կորցրել էր գիտակցութիւնը:

Պարկելուց երկու օր յետոյ, նա լիչեց Եկմալեանի «Հայր Մեր»-ը և շարունակ երգում էր՝ պնդելով, որ «Հայր Մեր»-ի ամենազեղեցիկ ներդաշնակութիւնն է: Խնդրեց, որ գտնենք այդ հազազիւտ հրատարակութիւնը և իր կողմից նւէր ուղարկենք Ընկերվարական Միջազգային Բիւրօի քարտուղար Հիւիսմանսին, որը շատ գնահատում էր հայկական եկեղեցական երգերը:

Ռոստոմի վերջին կտակն էր այս:

Յ. Տէր-ԴԱԻԹԵԱՆ

— Որ այս պալատում պիտի տեսնէի՞նք, կարող էի երևակայել, բայց որ ես աւ դու իբր ետ քանակցութիւններ պիտի վարէի՞նք իբրև պատերազմադ կողմերի ներկայացուցիչներ — այդ երբեք մտեալս չէր կարող անցնել, — իրեն յատուկ հեզմանքով պատասխանում է Ռոստոմը:

Ժորճանիան կասկածաբար է կտրում և շտապում է փոխել խօսակցութեան նրբը:

# Ա Ր Ա Մ Ը

Իսկական անունը Սարգիս էր կամ Սերգէյ Յովհաննիսեան: Դափանի Ձէյլա զիւղից էր, ծնւած 1879 թ.ին, գինազործի մի Համեստ ընտանիքում:

Մտողների չբաւորութեան պատճառով, Արամը վաղ մանկութիւնից ճաշակեց կարեքի բոլոր դառնութիւնները: Ուսում էլ կարողացաւ առնել միայն շնորհիւ Շուշում գերմակութիւն անող մեծ եղբոր օգնութեան: Նախնական կրթութիւնը ստացաւ Շուշու Ազուլեաց ծխական դպրոցում և 11 տարեկան Հասակից կարողացաւ մտնել Շուշու թեմական դպրոցը:

Աշխատասէր, խելացի և ընդունակ տղայ էր և դպրոցում ցոյց էր տալիս աչքի ընկնող յաջողութիւն:



ԱՐԱՄԸ 1912 թ. ԺԸՆՆՈՒՄ

Միւրած էր և՛ ուսուցիչներից, և՛ ընկերներից, որոնց մէջ Հետզհետէ ձեռք բերեց լայն հեղինակութիւն:

Ինսնական թլականներին Շուշին էլ յեղափոխական խմորումների վայր էր: Հ.Յ. Դաշնակցութիւնը արագ նւաճումներ էր գործում Հասարակական գանապահ խաւերի, բայց, մանաւանդ, երիտասարդութեան մէջ: Աշակերտութիւնը կազմակերպուեալ էր ինքնազարգացողական և յեղափոխական խմբակների մէջ, պատրաստուեալ էր ապագայ գործունէութեան: Միւս կողմից, ջնած չէին և պահպանողական ու կղերական տարրերը և ամէն կերպ աշխատում էին Հակազդէլ յեղափոխական տրամադրութիւններին: Շուշում վեր-

ջիններէս պարազլուին էր թեմական դպրոցի տեսուչ տիրահոշակ Բենիկ վարդապետը՝ Հայաստանի այսօրւայ «ազատ եկեղեցու» սիններից մէկը:

Արամը Հէնց սկզբից ընկաւ դաշնակցական խմբերի մէջ և շուտով դարձաւ նրանց վարիչ ղէմքերից մէկը: Մասնակցում էր ոչ միայն աշակերտական, այլ և դրսի կեանքին: Գնում էր զիւղերը կազմակերպական աշխատանքով: Շուշու թեմական դպրոցն այդ ժամանակ յեղափոխական աշակերտութեան կենտրոն էր: այնտեղից դուրս եկան յետագային նշանաւոր դարձած բազմաթիւ դաշնակցական գործիչներ:

Աշակերտութեան այս «ըմբոստ» և «անկարգ» տրամադրութիւնը չէր կարող տեսչի ուշադրութիւնը չգրաւել: Շուտով ծնունդ առաւ սուր բախում մանկավարժական կազմի ու հոգաբարձութեան և աշակերտութեան միջև: Բենիկ վարդ. դիմեց ոստիկանութեան. առաջ եկաւ ընդհարում: Եւ հետեանքը եղաւ այն, որ բարձր դասարանների մի խումբ աշակերտներ, որոնց մէջ և Արամն ու Իշխանը, արձակեցին դպրոցից և ոստիկանական ուժով արագբւսեցին քաղաքից:

Հետագած յաշակերտներին յաջողեց մտնել Երևանի թեմական դպրոցը, ուր և նրանք աւարտեցին 1901 թ.ին: Արամը յայտել էլ գործուն մասնակցութիւն ունեցաւ աշակերտական ու կուսակցական կեանքում և աչքի ընկաւ իր կազմակերպական կարողութիւններով և ձեռնբեց ու յանդուգն բնաւորութեամբ:

Թեմական դպրոցն աւարտելուց յետոյ, Արամը 1902-ին գնաց Բազու՝ աշխատանքի: Գալիցիենան ոգակցիայի օրերն էին. Դաշնակցութիւնը պատրաստուեալ էր պայքարել ցարական բռնապետութեան դէմ: Արամը պայքարի շատազովներից էր և այդ ոգով էլ աշխատում էր աշակերտութեան և բանւորութեան մէջ:

Մինչև 1903թ. նա մնաց Բազում: Երբ սկսեցին ցոյցերը եկեղեցական կալւածքների դրամման առթիւ, Արամը, Բազուի կենտր. կոմիտէի կողմից ուղարկեց Գանձակ՝ դիմադրութիւնը կազմակերպելու Համար: Այստեղից անցաւ Կարս, որ այն օրերին դաշնակցական եռուն գործունէութեան վայր էր. այնտեղ էր պատրաստուեալ Երկիր մտնող մարտական խմբերի մի մասը: Այնտեղ Հաւաքւած էին դաշնակցական աչքի ընկնող գործիչներ — մարտիկներ ու քարոզիչներ: Դումանի ձիւտը խումբը նոր էր մեկնել ղէպի Սասուն՝ հետը տանելով Մուրատին, Կալծակ Առաքելին, Աւետիսին, Սեպուհին, Դուրբարխին և ուրիշներին: Պատրաստուեալ էր Ռանի խումբը: Տաճկական Բասէնում աշխատում էր Մենակը, Ռուսականում՝ Իշխանը: Աննկարագրելի եռ ու գեռ ու ոգերութիւն էր տիրում ամէն կողմ:

Արամն էլ պատրաստուում էր անցնել Երկիր, թէև տեղական ընկերները պահանջում էին, որ նա մնայ, իբրև անփոխարինելի կազմակերպող ոչոք: Սակայն, նա չհամակերպվեց ու միացաւ Պանի խմբին, բայց ստիպւած եղաւ կէս ճանապարհով վերադառնալ: Նրա թոյլ կազմաւածքը և աչքի հիւսնդութիւնը արբեւէ եղան ճանապարհը շարունակելու:

Քիչ յետոյ, ուսանելի և թիւրքերի ձեռքով բնաջնջեցին Երկիր մտնող խմբերը: Իրու դատման բռնապետութիւնը գործում էր ձեռք ձեռքի Արզուլ Համախի հետ: Արամի ընկերներից շատերը նահատակեցին. ազատ մնացողները մտան Երկիր կամ պատրաստուում էին մտնելու: Կարտի շրջանը այլ ևս չարձանւած անտանելի Արամի համար: Ձեռքից ինձ տանջում էր, որ ամենքը դնացին և նահատակեցին, իսկ ես, կարծես մի խորամանկութեամբ, յետ մնացիք», գրում է նա իր «Յուշեր»-ում\*):

Եւ Արամը որոշեց թողնել Կարսը և անցնել Սասուն: Բայց Քիֆլիս անանջով՝ համոզեց, որ Մասունի գործը վիժած է, և Հ. Յ. Դ. Բիւրօի առաջարկութեամբ, 1904թ. աշնանը, մեկնեց Վան: Այսպիսով սկիզբը դրեց նրա պորձունէութեան Վասպուրականում, որից դուրս եկաւ ազգաշայ Վանի Արամը:

Արամի այս ժամանակաշրջանի կեանքը, մինչև 1906թ., երբ նա մեկնեց Կովկաս Քրդ ընդհ. ժողովին մասնակցելու համար, նկարագրւած է իր «Յուշեր»-ում, և մենք կանգ չենք առնի նրա վրա: Այդ «Յուշեր»-ը գրւած են 1917թ. ամառը և կրում են դեղարեւեստական գրւածքի բոլոր արժանիքները: Նրանք ունեն ահազին դաստիարակչական նշանակութիւն նոր սերնդի համար: Ափսոս միայն, որ առանձին գրքով լոյս չտեսան և մնում են, շատերի համար անմատչելի, «Հայրենիք» ամսագրի էջերում\*\*):

Արտասահմանում Արամը մնաց մօտ կէս տարի: Վիչնայի ընդհ. ժողովին նա և Իշխանը հարուստ նիւթ մատակարարեցին Երկիր գործունէութեան մասին: Խրատ բարերար եղաւ Արամի ներկայութիւնը և ընկերակալանների և հակաընկերակալանների պայքարում: Արամը կենտրոնում էր, Թոստովի կողքին և, հակառակ երիտասարդ տարիքին, խոշոր ազդեցութիւն ունէր թէ՛ մարտիկ և թէ՛ երիտասարդ ընկերակալան ընկերների վրա:

Ընդհ. ժողովից յետոյ նորից վերադարձաւ Վան, ուր մնաց մինչև Օսման. Սահմանադրութեան օրերը: Վանում նա կենտրոնական դէմք էր: Նրա շուրջ էին համախմբւած միւս ընկերները, որոնք ջանքերով հաւաքեց և ահազին գէնք ու ռազմախիթ: Դուռօի դաւաճանութեան հետևանքով բացւած պահեստները ցոյց տւին, թէ ինչ հսկայական աշխատանք էր կատարւած: Իսկ աւելի ուշ պարզեց նաև, թէ մշակութային-կազմակերպական տեսանկէտից Արամի և ընկերների ներկայութիւնը Վանում եղել էր վերին աստիճանի բարերար, մի ամբողջ սերունդ էր ստեղծւել Արամի և Իշխանի շնչի տակ:

Սահմանադրութիւնից յետոյ Արամը ուսուցչութեամբ զբաղեց Օրդուում և 1911-ին անցաւ Փրնև,

ուր անցկացրեց մօտ մի տարի: Բայց Եւրոպան նրան չէր կարող երկար գրաւել: Եռուով նորից վերադարձաւ Երկիր և մի տարի Օրդուում ուսուցչութիւն անելուց յետոյ, կրկին անցաւ Վասպուրական, որը դարձել էր նրա իսկական աշխրհիքը:

Ու այնուհետև մի քանի տարի շարունակ, մինչև 1915թ. յուլիսեան նահանջը, Արամը մարմնատերից Վասպուրականի ազգային, մշակութային ու դաշնակցական կեանքը: Ինչպէս Թոստովը բովանդակ կուսակցութեան մէջ, Արամը Վասպուրականում ամէն ինչ էր դպրոց, ազգային մարմիններ, տեղական մամուլ, երեկոյթ ու ժողովներ, երիտասարդական շրջաններ, գաւառ, Այլթամար — ամէն տեղ էր և ամէն ինչ: Կուսակալը նրան էր դիմում խորհուրդների համար: «Արամ փայան» լայն հեղինակութիւն ունէր և քերականի մէջ: Եւ հասկանալի է այն կատարութիւնը, որով Վանի աղաների ու շարժիների խմբակը յարձակուում էր նրա վրա. Արամը և նրա ներկայացրած կուսակցութիւնը աշխատաւորութեան իրաւունքներն ու շահերն էր պաշտպանում և պայքարում էր վաշխառութեան և ամէն կարգի շահագործումների դէմ...:

Վրա հասաւ 1914 թւականը: Պատերազմ: Չարհուրելի կացութիւն ստեղծեց Երկրի հայ ժողովրդի համար: Մահաւան ուրախանը աւաւնում էր նրա գլխին: Արամը մնաց Վանում և Վառձեանի, Իշխանի և միւս ընկերների հետ հերոսական ճիգ էր թափում վերահաս աղէտի առաջն աննելու համար:

Երկում եմ նրա մի նամակը Հ. Յ. Դ. Բիւրօին, 1914-ի աշնանը, գրւած կտուրի կտորի վրա, զիմիական մատիտով: Մի քանի հատու խօսքերով ներկայացնում էր կացութիւնն ու կոտորածի անխուսափելիութիւնը և խնդրում շուտով օգնութեան հասնել: Այդ նամակի վրա էր, որ Անդրանիկի կամաւարական խումբը Պարսկաստանից աշխատեց օր առաջ հասնել Վան, բայց չկարողացաւ...:

Վանում, բարեբախտաբար, կոտորած չեղաւ: Ձեռտէթի ուժերը պարտուեցին, և 1915թ. ապրիլին Վասպուրականը ազատեց: Եւ ոչ ոք չզարմացաւ, երբ ուսու հրամանատարութեան կողմից Արամը նշանակեց Վանի նահանգապետ: Այդպէս էլ պէտք է լինէր. չէ՞ որ նա էր գլխավորը Վանի ազատամարտը: Չէ՞ որ նա միակ ժարդն էր, որի հեղինակութիւնը այն օրերին ճանաչուած էին ամենքը — և՛ նրանք, որոնք այսօր երկիւղածութեամբ են արտասանում նրա անունը, և՛ նրանք, որոնք, կրեցի կուրացած, ցեխ են զսում նրա յիշատակին: .

Արամի նահանգապետութիւնը կարճ տևեց — ընդամենը 4 ամիս: Բայց այդ 4 ամսում էլ, անհնարին ծանր պայմաններում և նրան յաջողեց կարգ ու օրէնք հաստատել շրջանում և կազմակերպել կուսակցական մեքենան: Այդ օրերին Վասպուրականը իրական Հայաստան էր, ուր վերաշինական աշխատանք էր կատարւում տենդազին: Լճի հարաւային կերբներէից դեռ թնդանօթի որոտ էր հասնում և այդ երաժշտութեան տակ վանեցին, մըրլիներ ժրաշնուութեամբ, հարստութիւն էր ամբարում, իսկ երիտասարդութիւնը փարած էր մշակութային աշխատանքի: «Աշխատանք» թերթը երազում էր դիպչեական կարգեր...:

Ետիսեան նահանջը ահաւոր հարւած էր Երկրի

\*) «Հայրենիք» ամս. 1922թ. № 2 էջ 23.  
 \*\*) «Հայրենիք» ամս. 1922թ. № 2-ից սկսած:

վերապրող ժողովրդի համար: Ե՛կն Վասպուրականը քար ու քանդ եղաւ: Խորտակեց և Արամի հողին: Մի պահ նա ստակալի տաղնապ էր ապրում, բայց հէնց որ հնարաւոր դարձաւ, երիտասարդութեան գլուխն անցած, նորից ուղեւորեց Վան, ուր այս անգամ երկար չմնաց ու կրկին վերադարձաւ կովկաս: Եւ Թիֆլիսում ընկաւ անկողին՝ հիւանդ. յօգացաւ, աչքի հիւանդութիւնը սուր տանջանք էին պատճառում նրան: Ընկերների պնդումի վրա նա մեկնեց Ղրիմ, Մարիի ցեխաբուժարանը, և մի քանի ամսոց յետոյ վերադարձաւ բորբոքիին առողջացած: Այս շրջանում էր, որ գրի առաւ իր յուշերը:

1916 և 17 թւականները Արամը անցկացրեց Թիֆլիսում: Մասնակցում էր Աղգ. Բիւրօսի, Արեւմտահայ մարմինների և Հ. Յ. Դաշնակցութեան աշխատանքներին:

Ռուսական յեղափոխութիւնից յետոյ Արամն էլ սթափուց ու նոր շունչ առաւ: Թիւրքահայ նահանգների առանձին նահանգապետութեան յայտարարութիւնը և ներգաղթի ու վարչութեան կազմակերպութիւնը նոր բովանդակութիւն ու թափ տւին Արամի գործունէութեան. նա թժ. Յ. Զաւրեանի աջ բաղունկն էր, արեւմտահայ կազմակերպութիւնների ու մարմինների գլուխաւոր ու թղթ: Արեւմտահայերի Երևանի համագումարում նա՛ արտասանեց բացման ճառը և գործունէ մասնակցութիւն ունեցաւ բոլոր աշխատանքներին: Կենտրոնական դէմք էր նաև Ռուսահայոց Խորհրդա-

ժողովում, 1917թ. սեպտեմբերին, ուր ընտրեց Աղգային Խորհուրդը: Ետո կենդանի մասնակցութիւն ունեցաւ Աղգ. Խորհրդի կողմից էլ մեկնեց Երևան, իրբև լիազօր ներկայացուցիչ՝ տեղական գործերը վարելու համար:

Արամի գործունէութիւնը Երևանում, նրա զինատուութիւնը, Մարդարապատի ու Բաջ Աբարանի հերոսամարտներում և Հայաստանի պետականութեան հաստատման գործում կատարած դերը այնքա՛ն թարմ են ու հանրածանօթ, որ հազրև թէ պէտք լինի խօսել նրանց մասին: Այս շրջանում էր, որ առանձնապէս երևան եկան նրա արտակարգ կարողութիւնները, յեղափոխական, կազմակերպչական ու պետական տաղանդը: Ի գուր չէ, որ հանրային կարծիքը նրան է համարում Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր. պատմութեան արդար գնահատութիւնն է այդ:

1918թ. դեկտեմբերին, երբ բժաւոր տիֆը կոտորած էր անում Երևանում, վարակեց և Արամը: Հիւանդութիւնը եղաւ երկար ու տաժանելի, և 1919թ. յունւ. 29-ին նա փչեց վերջին շունչը: Հայ ժողովուրդը նրան արաւ յուղարկաւորութիւն, որպիսին չէր տեսել Երևանը. ամբողջ քաղաքը լալիս էր և երկիւղածութեամբ ձեռնառձ նրա դագաղին: Արամի մարմինը տեղաւորեց Երևանի հասարակաց գերեզմանատանը, Հ. Յ. Դաշնակցութեան Պանթէոնի բաժնում, Մասիսի աչքերի առջև...

Ս. Վ.Ր.

# Ա Ր Ա Մ Ի Մ Ա Ս Ի Ն

(ՍԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

1879—1919

Մեր ազգային-քաղաքական ներկայ օրերուն, երբ ժամերն անգամ յոյի են նորանոր իրադարձութիւններով, և հայ քաղաքական կենքը կը դիմէ հանդրանկ հանդրան, երբ հայրենասէր հոգիները կը կերտեն նոր յոյսի փարոսներ, դժւար է գծել մեծ հայրենասէրի, սրբազնաբոյ յեղափոխականի և պետական մարդու՝ Արամի բովանդակ պարտկերն ու կեանքը: Տարիներ յետոյ, երբ մեր աշեծուգի կեանքը կը բռնէ խաղաղ և ստեղծագործ աշխատանքի ճամբան, անսխառ պատմագիրը խորին պատկառանքով պիտի ծօտենայ՝ բնորոշելու համար Արամի մեծ դերը, մեր վերջին փոթորկալից տարիներու պատմութեան մէջ, դրևորելու անոր անսխառ կրողը, բեղմնաւոր գործունէութիւնը՝ Ղարաբաղէն մինչև Վան, Երևանէն՝ Վարազ, Պոլիս-Օրդու-ժընև, երբ ծօտ քառորդ դար անասան կանգնած մնաց պայթարի առաջին շարքերում՝ լի խորունկ

հաստով, ճիգերով և անձնւիրութեամբ:

Մեր արևնտո պատմութիւնը անօրինակ դիւցազնամարտերու շարան մըն է, բայց բոլոր հպարտ բախումներու մէջ, հրաշալի դրևազ մը կը կազմէ Արարատեան Ազատամարտը, որուն ոգին և ներշնչողը եղաւ Արամ:

Ո՞վ էր Արամը — Դաշնակցութեան, ուրեմն, և հայութեան այդ պարծանքը:

Հայ ազատագրական շարժման մէջ Դաշնակցութիւնը եղաւ մեր ժողովրդի անօրինակ ազատասիրութեան և հերոսական զաղափարականութեան, վսեմ տենչերու ամենափայլուն արտայայտութիւնը՝ իսկ անոր զաղափարին փարած յեղափոխականը՝ մտաւորականի և մարտիկի հիասթանչ համարողութիւնը: Եւ Արամը մէկն էր այդ ամբողջական յեղափոխական դէմքերէն:

Հայ ժողովուրդը կը ճանչնայ զայն որպէս Վասպուրականի ազատամարտի հերոս՝ Արամ փաշա, մեր պետական կեանքի մէջ ան պատմութեան էջն է անցած Արամ Մանուկեան անունով, բայց անոր իսկական անունը Սարգիս Յովհաննիսեան էր՝ զաւակը ազատասէր և հպարտ Միւնիքի, ծնւած 1879-ին Ձէյվա գիւղը, համեստ աշխատաւոր ծնողներէ:

Արամի հայրը յայտնի գինազործ էր, եղբայրները արհեստաւոր, և Արամը՝ բոլորի գուրգուրանքին ենթակայ: Հարազատներու միակ իղձն էր զուտումնական դարձնել իրենց սիրասուն Սաքօն, սակայն, տնտեսական միջոցները թոյլ չէին տար: Օր մը հայրը կը տանէ ծխական երկսես դպրոցի տեսչին և կը խնդրէ. «Վարձապէ՛տ, տըղաս պէ՛րայլով վէր լո՛ւս հըվաքի, չորս ղօլը մըթէն ա, թող մը՛րջ նըման քօտ չմընայ»: Եւ Արամը կը սկսի յաճախել դպրոցը: Ապա զուտումնական» դարձնելու նպատակով աւագ եղբայրը կը տանէ Արցախի դիտութեան տաճարը՝ Թեմական դպրոցը և 1890 թականին Սարգիսը թեմականի աշակերտ էր:

Տարիներ յետոյ, Շուշույ թեմականն ընկաւ անմխիթար վեճակի մէջ. 1900-ին տիրահաշակ Բենիկ



ԱՐԱՄԸ 1902 Թ.

(Երևանի Թեմ. դպրոցի շրջանաւարտ)

վարդապետը, Խրիմեան Հայրիկի կողմէ «Դժոխք» կոչեցեալ այդ սեպուլտիս սեահողին, իր պարբերական մատուցութիւններով կառավարութեան ձեռքը կը յանձնէ 15 աշակերտներ, — ամենքն ալ բարձր դասարաններու ծաղիկներ — և կաքտրէ Դարբարդէն դուրս, որպէս յեղափոխականներ, խառնակիչներ: Ասոնց մէջ էր և Արամը — վեցերորդ դասարանի ամենախառնաշղէփ աշակերտը: Բոլորն ալ կանցնին Երևանի թեմականը և Խրիմեանի յատուկ տնօրինութեամբ. և ամենափայլուն կերպով կաւարանն դպրոցը: Թեմականաւարտ այդ սերունդը, արդէն 1893-էն սկսած որդեգրւած Հ.

Յ. Դաշնակցութեան, մարդաւէ կրօնակցական-կազմակերպական կեանքի մէջ, Դաբաբաբի և Երևանի նոր սերունդի ղեկավարը դարձաւ, և 1900-էն անոնք նետեցան կենդանի գործի ասպարէզ:

«Ընկերներ, դուք երջանիկ էք, որ միջնակարգ դպրոցէն յետոյ հնարաւորութիւն ունեցաք համալսարան մտնելու: Ես, սակայն, իմ ընկերների հետ միասին գուրկ էի այդ հնարաւորութիւնից: Մենք թեմականը աւարտելուց յետոյ մեր հայիացքը ուղղեցինք դէպի Հայաստան, ուր, ճիշտ է, «յաւելիալ արժէք» չկար, բայց կար «յաւելիալ արին»: Անմիջապէս անցանք Երկիր, ուր և մէկը միւսի յետեից ընկան մեր լաւագոյն ընկերները...» Այսպէս կը խօսէր Արամը 1912ին, ժընեի մէջ, Հ. Յ. Դաշնակցութեան Ուսանողական համագումարի պատգամաւորներուն հետ, իր ընկերական ընտանիքի մասին:

Նպատակս այդ հերոսական սերունդի պատմութիւնը գրելը չէ — անոնց մէջ էին Մենակը, Թումանը, Իսախանը, Իշխանը և ուրիշ անմահներ: Սակայն, պէտք է ըսեմ, որ անոնք ամենքը շուրջ երկու տարի Բագու, Շուշի, Երևան, Ալեքսանդրապոլ և Կարսի շրջաններու մէջ յեղափոխութեան ոգին ամբապնդելով՝ անցան Երկիր՝ գալիք արևածագը դարբնելու...

Արամին բաժին ընկաւ Վասպուրականը, ուր իր հզօր կամքով, անօրինակ ներդրումով արհամարհեց րոնպպետական հանրապետը և հայ կեանքին յեղափոխական կորով ու շունչ ներշնչեց: Անոր և իր ընկերներուն պարտական ենք Վասպուրականի հերոսամարտը...

Դաժան խորշակը զարկաւ, և Արամը Վասպուրականի հայութեան հետ անցաւ Կովկաս. և հոս ալ դարձաւ կեդրոնական դէմքը Հայաստանի գործիչներու մէջ:

1918-ի գարնան մահու և կենաց օրերն էին: Հայկական միջնաշխարհի յուսացող աչքերը Արամին էին ուղղւած: Ժողովուրդն, առանց բացառութեան, Արամէն կը սպասէր փրկութեան ուղին: Եւ Արամ կրցաւ հերոսական վճռականութեամբ, անսասան կամքով, դաշնակցականի բովանդակ ներդրումով մարմնաւորել իր պաշտած ժողովուրդին յոյսը:

Եւ Արամը, գործօն յեղափոխականի այդ անզուգական տրպարը, Գրիստափօր-Չաւարեան-Ռոստոմի կենսատու պատգամներու մշտապա հնոցը, այդ ճակատադրական օրերին հնչեցուց իր ձայնը՝ «Բոլոր բազուկները՝ դէպի աշխատանք... բոլոր կամքերը՝ հայրենիքի համար... Բոլոր անձնէրները՝ պայքարի դաշտ...»:

Արամի բերնով մեծ յոյսի ոգին էր, որ փրկարար ուղին կը ցուցնէր: Ժողովուրդը ոտքի ելաւ առիւծի ամենի մոնչիւնով մը, և յաղթական ու փառապանծ Սարգարապատներն ու Բայ Աբարանները կերտեց...

Եւ թափւած արիւնի մէջէն ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը, որու առաջին ճիւղ ողջունողը եղաւ Արամը:

ԹԱՄԷ

# Ո Ի Ր Ի Ա Ն Կ Ա Ր

Արամի սիրելի մեծուքեան

Ապագայ մի Թորոմանեանի Համար, ուզում եմ դառնալ մի Ուաշինգ, ու Հաւաքելով խառն ի խուռն դասուորեմ յիշողութեան բեկորներն այն Զարթնոցի, որ կոչոււմ էր Արամ...

Զարթնոցի պէս ինքն իր վրա ծանրացած ու ինքն իրով յենարանուած Արամի, որ ամէն կողմերի վրա բացած աչքեր ունէր, Զարթնոցի նման ամէն կողմերում անցած դարձածը տեսնելու Համար...

Ընդունելու Համար ամէն կողմերից եկող ճառագայթները, որպէսզի իր հոգու խորանը դառնայ կիզակէտ, և սրբի ջահը ծիածաններ հիւսի...

\*\*\*

Ահա ես յարդարել եմ իմ լուսատիպն ուղղած նրան, ու ցաւում եմ, ո՛չ թէ նրա Համար, որ արգելքներ կան մեր միջև կամ՝ բաւականչափ մօտ չեմ՝ աւելի որոշ տեսնելու Համար... այլ ա՛յն պատճառով, որ բաւականչափ Հեռու չեմ նրանից, որ կարողանամ նրա Հասակի Համայնապատկերն ամփոփել իմ զգայապաշտ վրա...

Ինչպէ՛ս անել...

Եթէ ես բաւականանամ նկարել նրա ոտները միայն, Հերոսութիւններից ու յողթանակներից յետոյ իսկ, փոխանակ առաջնորդի ու գօրծվարի, մանկան պէս դեղնելով առաջացող իր ոտները... դուրս կը մնան նրա ձեռները...

Անկումների ու նւաստացումների յենթարկելու՝ Համար, իր կրած բեռը տանել կարողանալու Համար, ամէն կարկառ, ամէն խոռոչ օգտագործող իր ձեռները...

Եթէ ես փորձեմ ամփոփել իրերի Հանդէպ այնքան տկար ու կարճատես, և, սակայն, խորհուրդների դեմաց այնքան վճռական ու սրատես իր միգամածային աչքերը միայն... դուրս կը մնայ իր ճակատը...

Օրօրոցում Հանգչող մանկան իր անբարտ ճակատը, որ երբեք չնւաստացաւ և որի յանցանքը պատժեց ճակատազրի ժպիտով միայն...

Եթէ ես ուզեմ ցուցանակել նահապետական ու անկատար գնդերի պէս բառեր ունեցող իր բերանը... Իր բերանը, որ, սակայն, արդիական ու ամենակատարակ Հրատարիչի պէս խօսքեր ունէր, յողթանակներ սպառովելու Համար... դուրս կը մնան նրա ականջները...

Ամենայնչին ձայների, ու նաև Հեռափննայ պատգամների ու եղանակների Համար, անթիւ ընդունորանի պէս, բաց ու ընդունակ իր ականջները...

Եթէ ես յաւանակեմ ընդօրինակել մի անծանօթ Հանճարի ու Հայրենական Թանգարանի փառքը փնջող

իր սքանչելի գլուխը միայն... դուրս կը մնայ լայնատարած իր սիրտը...

Շքանշանների տակ ու նրանց Համար երբեք չբարխած, յունիսեան Հանդերի պէս ծփանուտ իր սիրտը, որտեղ Հասկերի Հաստունթիւնը խոնարհելով Համբուրում է նոյնիսկ որոմը...

Ինչպէ՛ս անել...

\*\*\*

Եւ սակայն, ինչո՞ւ սահմանափակել նրա մարդկային անսահմանութիւնը... Ինչո՞ւ ցանկապատել նրան ու դռները կողպել, երբ նա բաց գրօտավայր էր ու Հասարակաց պարտէզ՝ բոլորի Համար...

Նրա ծաւերի, տակ ապաստան էին փնտրում բոլոր նրանք, որոնք նեղուում էին տապից և գովանալ էին ուզում...

Նա ստողապահական խորհուրդ էր տկարներին, ու գործ՝ պարագութեան ձանձրոյթից տառապող ծեր Հողիների Համար...

Երիտասարդները նրա մէջ էին Հանդիպում իրենց փնտածին, ուր յարգարում իրենց սիրոյ ճամբան...

Եւ մանուկները նրա մէջ էին սովորում խաղալու և շրջանակ դարձնելու իմաստուն կերպերը...

Ով տխրութեան կամ կսկիծի մի կապոց ունէր, բերում ու բաց էր անում նրա Հանճակատար նստարանների վրա...

Աստուածաշէնցի Յարութիւնը քաղաք տանող ճանապարհների վրա երբ կորսնցնէր իր ատրճանակը, դնում էր նրա մօտ, ու զսնում...

Ազանի մայրիկը խնդրում էր, որ նա Համոզի Զարուհու քարասիրտ ծնողներին, և նոր մի մխիթարութիւն տայ իր Մխիթարին...

Եօթը տարի, մի Հողային խնդրի Համար, տաճկական դատարաններում սպառած Հասանն ու Գրիգորը նրան էին սպաւինում, ու Հեռանում իրար ձեռները սեղմելով...

Երբ Տիգրան Շահազը, երեք օրւայ Հետապնդումներից ու ժամադրութիւնների անճշտապահութիւններից յուսահատած, Հրատարէր Պետրոս Զաքարեանը տեսնելուց, որպէսզի յիտու փութ ցորենի արտօնադիր պահանայ Ախտայի լիազօրից, Մաղիաճորի որբերի Համար, Արամը փնտրելով կը վարձէր անալին Հանդիպած կտքը ու կասէր կառապանին. «Եթէ մատաղ, շուտ քշես, երեսէքը քաղցած են»...

Գաղթական Թանգիրը նորէն դնում էր նրա տունը, և նախարարն իր մահից մի քանի օր առաջ, իր մահիճում նորէն կը ստորագրէր մի Թուղթ, որ Աւազը մի գործ ճարի...

Եւ նա այսպէ՛ս սպասեց, ու այսպէ՛ս հարստացաւ...

\*\*\*

Նրանից տիրաբար էին ուզում, կամ թախամուտ, ինչպէս գաւառի, որովհետեւ նա բոլորի հետ վարուում էր ինչպէս իր հօրը, մօրը, եղբորը կամ՝ երեխայի հետ...

Նա խօսում էր բոլորի հետ տան մարդու, արիւնակցի նման, և ամենքը նկատում էին նրան իբրև մէկը՝ որ օտար չէ...

Հաց թխելու նստած Ամաստին աշակեցիու համար, օրօրում էր նրա լացող երեխան, և ժամկոչի գաւառի «Սատանա-Պետիկ»-ին սովորեցնում դրբերին շապիկ հագցնելու կերպը...

Դասավորողներին գնդակ խաղացող կղզեցի աշակերտներին էր խառնուում, և մասնակցում նրանց բոլոր մէծերին, պարտութեան պատիժներին, ու յաղթանակի վայելքին...

Գորգուբայից իր երգիծանքով կրկնում էր ու կատակելով խեղաթիւրում զիւղացի ընկեր Վոլչիկի ճառը, և յանդիմանութիւններով յարդարում թաթոսի վատ կապած դօտին...

Եթէ նա՛ ամէն կերպի առարկութիւններով հրամարւեց ճաշ-փողոցի աւելի լաւ սրճարաններից ու խումբին առաջնորդեց Յովհաննէսի մօտ, այդ նրա համար էր, որ Վարդանի երկար ծամերը խոզել տայ և փայտեղջիկ Կարապետն էլ կօշիկները մաքրի...

Նա Երևանում նստում էր կառք ու ատում կառապանին. «Մէնօ, Վանում ունեցած էն կապոյտ մին ի՞նչ եղաւ»...

Երբ նորդիւղյի Ամադը, կալը թողած, դարձանաթաթախ վաղում էր նրա մօտ, որ ասի. «Բարի տեսանք, պարոն Արամ»։ Նա յիշում էր մէկ տարի առաջ հիւանդ նրա թոռը ու ասում. «Երեխան լաւացա՞ւ»...

Յանձնառի համար բաց թողած վանեցի դպրոցականները վիճակախաղի տոմսերը լցնում էր իր դրպանն, ու իր իսկ կազմակերպած «Ուսուցիչների Ամանային Համագումար»-ում ծախում իբրև դպրոցական...

Ահա թէ ինչու մի օր նոյն այդ դպրոցականները, նոյն այդ փողերով տարփողեցին Արամի փառքը, ինքնաձուտուովի ենթարկելով նրա ստած Զէտո՛ւտը... Այսպէ՛ս...

\*\*\*

Ու այսպէս նա ամբողջովին հոգս էր ու հողածոթիւն...

Նա, որի փողկապը միշտ ծուռ էր, և նա, որ մի անողորջ յողացաւից չէր կարողանում ոտքը ծալել անցնելու համար երմէթու դպրոցի սեմը, բայց թեմական տեսչի իր պարտականութիւնն էր կատարում ու ասում սղեւորած. «Ամաստ՝ ուսուցչական համագումարում մտածեցինք երեխաների համադրեստի մասին»...

Աստուած զիտէ թէ մէկ ուրիշն ի՞նչ կը մտածէր.

բայց նա, Վանի հերոսամարտից ու թիրաբերի պարտութիւնից ընդամենը երկու օր յետոյ, մտածում էր՝ ու նամակներ գրում...

— «Աշխատեցէք մի երկու օրում բնականոն կեանք հաստատել... Ժողովրդական կառավարութիւն թոյլ հաստատի զատուում, ու գիւղական դպրոցները պէտք է որ գործեն: Այս խիտ կարևոր է»...

— «Նասահնող թիրաբերի թողած անասուններն ու ցորենը հաւասարապէս բաժնեցէք գիւղացիներին: Գարին ամբարիցէք ու հսկողութեան տակ առէք: Այդ շա՛տ պէտք է բանակի համար»...

— «Տախտակները չի՞ճանան: Արբիւնցէ՛ք հրկեղումներ: Մի երկու օրից Ութթա-Մարտիրոսին զրկելու եմ, որ հաւաքի: Ամէն կերպ օգնէք նրան: Մեր կիսակատար ու նոր շինելիք դպրոցների համար՝ շատ ենք պէտք ունենալու նրանց»...

Ցաւով ու կրկնով էր յայտնում, որ Գրիգորը գրել է նրան ու հարցրել թէ «ՏՐՔան է նշանակելի նրտ ուսուցչական տնօրէն, որ ըստ այնմ ծախսիք»: ու աւելացնում էր. «Քանի որդ ենք՝ մի կտոր հաց կը ճարւի, երբ հիւանդանոց մի բժիշկ էլ կը ճարւի, իսկ երբ մեռնենք, մի երկու թաղող էլ կը ճարւի: Էլ ուրեմն, ինչո՞ւ աւելորդ հողքերի ետեից ընկնել ու մոռնալ այն՝ ինչի մասին ամենից աւելի պէտք է հսկալ ու մտածել»...

Իսկ նա մտածում էր և ուրախութեամբ ասում. «Խրատանչիւր ուսուցչի համար մի երկաթէ մահճակալ ենք գնելու և պատուիրելու, որ, նրա բացակայութեան, զիւղացիները հերթով քնեն ու սովորեն»...

Ու այսպէս, ես յիշում եմ...

\*\*\*

Յիշում եմ նրա հիւանդի յիշողութիւնը և ան, ու նա այդ էլ, իր անձի ու միւս ատուելութիւնների պէս, արհամարհում էր...

Եթէ նա ամենքին իր անունով էր կանչում ու կարողանում էր շնորհով մէկ անգամ միայն տեսած մարդու անունը, «այդ պարզապէս նրա համար էր, որ վանեցիների 99% կոչւում է Ռոջ-Աղա, իսկ մնացեալ մի տոկոսն յիշելի հշտանում է»...

Պատկում էր մահճակալի վրա, իր յօդացաւտ ու յոգնած ոտները բարձրացնում պատնի վեր ու թելադրութիւններ անում՝ լրացնելու համար Վրամեսնի օրատետրում յիշած թրքական իւրաքանչիւր բէյի, փառայի ու էֆէնդու կենսագրականները, յայտնելով նրանց տարիքի, կրթութեան չափերի, աստիճանների բարձրացման ընթացքների, ամուսնական և ազգակցական կապերի, անցեալի և բնաւորութիւնների մասին: Անում էր այս բոլորն օգտուելով իր իսկ աղբիւրից ու տրտնջալով ասում. «ափսոս որ հետու ենք, թէ չէ մի գիւղական տանուտէր մեզ շատ աւելի կարևոր ծանօթութիւններ կը տար»...

Վասպուրականի դպրոցների մասին յիտն մեծադիւր էջերով ու անհաշիւ թանազաններով մի յօդւած էր գրում Չախտուէնի թմարաբիշէք «Կապոյտ Գիրք»-ի համար երբ, «ընդամենը երեք օրով հանդատանալու էր եկել Ղուրտուղուլիում»...

1918-ի ամբան բոլոր իրարանցումների մէջ, նրա լիչողութիւնը փոշիներ տակից գտնում ու հանում էր Պեարոս և Ֆէնտին, և իր ուշադրութիւնը նրան դրում էր Նորաջաւէի, «արդէսդ թրքական սպաների հետ մի քիչ գրաւել» և զինուորների հետ սպուր եկի»...

Յիշելով հաւանական «սե օրերը»-ը՝ դառնում էր պատրաստել տալիս, ինչպէս ընտանեկան լուր։ Հոգեւոր ենթակայ մի հայր, ու ինչպէս մի ամուսին, կուտում էր իր կնոջ, բռնուհի Ջալիանի հետ...

«Աշխարհի բոլոր շարիքներն ինչից են ծնում, տիկին, մտածել էք այս մասին: Մտածել էք, որ բոլոր գողերը, բռնակալները, դաւաճաններն ու պատու լիքները սովորական անբարեխղճներ են: Ով չի ուզում անբարեխղճ լինել, լինում է տարանջատը, լինում է ամէն բան, որ փնտռում է:»

«Դու չե՞ս մտած՝ երբ փայտերն անձրևի տակ են, և կարողանում են քնել, երբ ձիւրի տեղն անհանգիստ է, ուրեմն, զու կարող ես սովել վատ գործ անել»...

Եւ, սակայն, այս բոլորը իր տան համար չէր. «Մոսկուայի Չայկանի Կոմիտէի Բ. Ռուբը-ի Ղուր-տուղուլում ունեցած ձիւրի ու վառարկախայտի համար, որոնք պատկանում էին որդերին, որբայրիններին, հիւանդներին ու, վերջապէս, հայ ժողովրդին»...

\*\*\*

Գործի ու պարտականութեան համար ունեցած ազդերը չէր բարեխղճութիւնից, այս մայրական խանդը էր ծնում նրա մեծամտութիւնը...

Նա նման չէր այն խօսքի վարպետներին, որոնք նստում են հանգիստ ու ծիծաղում, ուրբանում, տեսնելով, որ սրբիները հաստաքով են գնում իրեն, ապրանքը...

Նա իր գործի ծառից էր հաւարում իր խօսք պատուները, մի պարտիզպանի պէս, որ չի՛ հաւատում արհեստական պատուների ու քմիծաղում է՝ տեսնելով ցուցահանդէսներում ու խանութներում խաբկու գարդի համար գրած կեղծ տաճերն ու խաղողները:

Հետևում ու հետաքրքրում էր իր գործի ու պատականութեան հետ հետաւոր կամ մտաւար կապերը, և հետևում ու հետաքրքրում էր, ինչպէս մայրն էր մտնուողով...

Նա ո՛չ թէ վտանգութիւն չէր տածում բարեկամ ձեռներին, կամ իր փոռասխրութիւնը յաղեցնելով, համար էր ուզում ներկայ լինել ամէն բանի, և էր

պարզապէս նրա համար, որ իր տրոփող սիրուն հանգրտացներ...

Գիւշերն արթնում էր մնում, ո՛չ թէ նրա համար, որ պատահները քնել էին, այլ այն պատճառով, որ դարձի պահի...

Ներշնչ էր լինում հարսանիքների ու թաղումների, որովպէս հարստութիւն ունենայ գարձնելու մէջը նա ազ տխուր, և միւսն աւելի՛ ուրախ ու արտասովոր...

Եւ իրապէս, արտասովոր էր նա...

\*\*\*

Կույ էր տալիս, որ երեխաներն իր ուսերի վրա կսխրով բարձրանան ընկոյրներն, և սակայն, ո՛չ մէկ անտանի չէր ուզում, չէր կարող նրա մէջը կոխել...

Կոճեցի կուտաղի Դաւոն, Ողմեցի վայրի Լաթոն և Ընծաղցի ճշմարտապէս Արեւիք փարում էին յըստ մանուկները պէս, իստում հարսերի նման ու մեղմանեւս ինչպէս դառնիք, որովհետեւ նա Մուրը Գրային Գանիկի պէս էր...

Արովան փողոցում նա իր աջը կը տարածէր կատաղած ամբոխի վրա աւելով. «խաղաղ մնացէ՛ք» և ամբոխը վերադառնում էր իաղադրեցածը...

Նա հաճախում էր իր Վարդապետի ստում էր. «Ձա՛ս մահիճդ ու քայլերը», և Յարոն քայլում էր ուղմիկի պէս...

Աշխարհում շատեր կարող են լինել նրա չափ ու նրանից շատ աւելի հուշակալուք, բայց իրենց բախի տալիսն սուերում նստած մայրերը, քիչեր լիշատուր կը խմեն զովանալու համար, և քիչերի՛ մասին որբայրի Նաղիկը կասի. «Հողիդ լոյսին միաճայ, Արամ, դու համ հայր էիր, համ եղբայր, համ արև ու հողի»...

\*\*\*

Ես՝ որ ուզում եմ նրան ընդօրինակած տեսնել բոլորի՛ կողմից, ինչու՞ չընդօրինակեմ Յէչոյի դազաղին ուզած իր խօքերը...

«Մեծ Զրեւումն են ծնում ու ապրում մեծ ձկները: Փորը Զրեւը մեղ տալիս են կարմրախայտ կամ տառեխ: Գաղափարի է սիրոյ ովկեանուններ են պէտք՝ ունենալու համար կէտի պէս մի մարդ»...

Եւ նա, զազափարի ու սիրոյ մի ճշմարիտ ովկեանուտմ ծնած ու ապրած, մի ճշմարիտ կէտ էր...

ՕՂԱՆ ԿԱՐՕ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռաստում և Արամ (Խմբագրական) . . . . .	1
Գիպումատ Իրէշնիր (Ռաստում) . . . . .	1
Ռաստում (Ս. Վրացեան) . . . . .	5
Ռաստումի աւանդակամ կեանքից (Յ. Տ. Գ.) . . . . .	14
Իմ հանդիպումները Ռաստումի հետ (Ա.Ջամալեան) . . . . .	15
Յուշեր Ռաստումի մասին (Վ. Մարգարեան) . . . . .	19

Մի էջ Թարգիկ կեանքից (Ղաղար) . . . . .	22
Ռաստումի սպաւորութիւններ (Կ. Մասունի) . . . . .	22
Ռաստումի վերջին օրերից (Բ.Յ.Տէր-Դաւթեան) . . . . .	25
Արամ (Ս. Վր.) . . . . .	26
Արամի մասին (Թաղէ) . . . . .	28
Ուրանկարը (Օհան Կարո) . . . . .	30

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 Փր. 50 սանտ.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի Հասցէն՝

M<sup>re</sup> S. AGOPIAN. 5, rue des Gobelins, 5. Paris (13<sup>e</sup>)

Société Anonyme de Navarre, 5 rue des Gobelins, Paris (13<sup>e</sup>). Gérante: Delacuvellerie Hampartzoumian